

ՊԻԵՄՆԵՐ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց  
Յուրի Սահակյանը

ՅԻՆԵՍՆԵՐ

Խմբագիր՝ Համիկ Գուգակյան



## Անտաղիա

Գրքում ընդգրկված ռուս և բուլղարացի հեղինակների մանկական պիեսները, իրենց աշխույժ և սրամիտ լեզվամտածողությամբ և արկածներով, նախատեսված են ցածր և միջին տարիքի երեխաների, ինչպես նաև մանուկների հետ աշխատող մասնագետների լայն շրջանակի համար:

## Թարգմանչի առաջաբանը

Սիրելի ընթերցող,

Թատրոնի դահլիճում արդեն մթնել է, իսկ վարագույրը դեռ չի շտապում բացվել: Զգուշորեն ու անշշուկ անցի՛ր շարքերի միջով ու նստի՛ր: Քանի՛ զարմացած ու պայծառ աչքեր են սրտի թրթիռով նայում վարագույրին՝ նրա մյուս կողմում հայտնվող հրաշալի աշխարհի սպասումով: Ուր էլ ուղղորդի քեզ ներկայացումը՝ հեքիաթային անտառ կամ Մայրաստան կոչվող անծանոթ երկիրը, թե գյուղական բակ կամ կենդանիների դպրոց, որտեղ էլ որ հայտնվես ներկայացման հերոսների



հետ միասին, վստահաբար հաճույքով կմասնակցես նրանց կյանքի փոքրիկ իրադարձություններին, կձանոթանաս բարի, ընկերասեր, ազահ, վախկոտ կամ ծույլ հերոսներին և կընտրես նրանց, ում հետ կուզենաս մտերմանալ և ընկերություն անել ամբողջ կյանքում:

Այս գրքում վեց մանկական հեքիաթ-պիեսների բեմական վարագույրը հերթով կբացվի քո առջև՝ բերելով իր աշխարհը, թույլ կտա մասնակցել բոլոր զվարճալի արկածներին, բարու ու չարի անվերջանալի հակամարտությանը, սակայն քո անմիջական օգնության շնորհիվ վերջում, անշուշտ, կհաղթանակի բարին:

Մանկական պիեսների հեղինակները, հայտնի և սիրված թե՛ երեխաների, թե՛ մեծերի կողմից, գուցե այլ ստեղծագործություններից արդեն որոշ չափով ծանոթ են քեզ, և այս նոր հանդիպումը թող կրկին ամրապնդի ձեր ընկերությունը և քո պատրաստակամությունն ու համառությունը՝ նպաստելու բարու հաղթանակին՝ այստեղ և ամենուր:

***Բարի օր՝ այսօր և ամեն օր***  
**Յուրի Սահակյան**



ԻՐԻՆԱ ՏՈԿՄԱԿՈՎԱ

# ԾՈՒՂՐՈՒՂՈՒՆ

Հեքիաթ-պիես  
երկու գործողությամբ,  
հինգ արարով

# Գործող անձինք

Աբաղաղ – բանաստեղծ

Թխական – նրա կինը

Պիկ

Պիպ } սրանց ճուտիկները

Ֆիլիպ

Խոզ

Գորտ

Կով

# ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

## Առաջին արար

Բակ: Յանկապատ: Ծղոտե տանիքով տնակ: Տնակի ձախ կողմում երկու մատղաշ կեչի: Նրանց միջև՝ լվացքի պարան: Պարանին, սպիտակեղենից բացի, փոված են երեք թաշկինակներ՝ «Ծուղ», «րու», «ղու» մակագրություններով: Լուսանում է: Դանդաղ բարձրանում է արևը: Ճոճալով բացվում է տնակի դուռը: Բակ է դուրս գալիս Աքաղաղը:

**Աքաղաղ** (Քայլում է՝ թեթևակի հարդարելով իրեն) – Բարի լույս: Լավ քնեցի: Վա՛յ, կներեք: Մոռացա ներկայանալ: Իմ անունը Աքաղաղ է: Ես բանաստեղծ եմ, բանաստեղծություններ եմ գրում.

*Ովքեր դպրոցը մոռանան,  
Քնած մնան մեր գյուղում,  
Նրանց սիրով կարթնացնի  
Իմ գրնգուն ծուղ-րու-ղղ...*

(Նրա ձայնը վերջին վանկի վրա կտրվում է): Վա՛յ, վա՛յ, ի՞նչ պատահեց: (Աքաղաղը նորից է արտասանում «ծուղ-րու-ղուն»՝ վանկարկելով, հերթով թաթիկը դնելով լվացքի պարանին չորացող թաշկինակներին: ) Վերջին «ղու»-ն լավ չի չորացել: Կինս երեկոյան լվացել է իմ «Ծուղրուղուն», ես էի խնդրել: Մի թեթև փոշոտվել էր: Իսկ բանաստեղծն իր «ծուղրուղուն» պիտի մաքուր պահի՝ անհրաժեշտ պահին անմիջապես կանչելու համար:

Տնակի դռնակը ճոճոճում է, և շեմին երևում է Թխսկանը:

**Թխսկան** – Ամուսնյակ ջան, նախաճաշը պատրաստ է: Մի՛ ուշանա, աղավնյակս:

**Աքաղաղ** – Ես աքլոր եմ Աքաղաղ, գումարած՝ նաև բանաստեղծ, իսկ նա՝ «աղավնյակս...»: Դե լավ, ոչինչ: Հո չեմ վիճելու հետը... Եկա՛, եկա՛:

*Աքաղաղը մտնում է տուն: Դանդաղ բացվում է պատուհանը, և հայտնվում է Պիպի գլուխը:*

**Պիպ** (Նայում է աջ ու ձախ) – Եղբայրներ՛ր, իմ հետևից:

*Ճուտիկներն իրար հետևից դուրս են ցատկում պատուհանից:*

Հասկացա՞ք:

**Պիկ** – Համա թե խելոքն ես, հա՛, Պի՛պ:

**Պիպ** – Ճիշտ է, Պի՛կ: Ես շատ խելոքն եմ:

**Ֆիլիպ** – Բացատրի՛ր ինձ, Պիպ, ես չհասկացա:

**Պիպ** – Դու միշտ էլ...

**Պիկ** – Ի՛նչ դմբո ես, Ֆիլի՛պ:

**Ֆիլիպ** – Ես դմբո չեմ: Ես փոքրիկ եմ:

**Պիպ** – Դե լավ, լսի՛ր: Տեսնո՞ւմ ես հայրիկի «ծուղրուղու»-ն, որ չորանում է: Հիմա մենք կվերցնենք այն, կտանենք թաքուն մի տեղ և ինքներս էլ կսովորենք «Ծուղրուղու» կանչել:

**Պիկ** – Ծատ լավ ես մտածել, Պիպ: Մենք արդեն այնքան ենք մեծ, որ ինքներս էլ կարող ենք «ծուղրուղու» կանչել:

**Պիպ** – Ոչ թե «ծուղրուղու», այլ՝ «ծուղրուղու»:

**Պիկ** – Ճիշտ է՝ «ծուղրուղու»:

**Ֆիլիպ** – Իսկ ի՛նչ է, կարելի՞ է:

**Պիպ** – Իսկ մենք չենք հարցնի, հասկացա՞ր:

**Ֆիլիպ** – Ես գիտեմ, որ չի կարելի առանց հարցնելու:

**Պիպ** – Այդ դեպքում դու տանը մնա, փոքրի՛կս:

**Պիկ** – Դե լավ, սկսեցի՛նք:



**Պիպ** – Ես վերցնեմ «ծու»-ն և «ղու»-ն, Պիկը՝ «րու»-ն, իսկ Ֆիլիպին բան չի մնում:

**Պիկ** – Խորամանկիս տես, է: Քեզ մի «ծու»-ն էլ հերիք է: Մենք պիտի հավասար բաժանենք, որ ամենքս էլ մի բան ունենանք: Եղբայրներ ենք, չէ՞:

**Պիպ** – Է՛լ ինչ կուզենայիր: Առաջինը իմ մտքով չանցա՞վ՝ «Ծուղրուղու»-ն թռցնել:

*Ճուտիկները բոթում են իրար, հրում, հրմշտում, աքլորանում «տղայավարի»:*

**Ֆիլիպ** – Մայրիկն ասում էր, որ ոչինչ չի կարելի գողանալ կամ թռցնել:

**Պիկ** – Մենք ժամանակավոր ենք գողանում, քանի դեռ հայրիկը նախաճաշում է:

**Պիպ** – Եվ ոչ ոք էլ չի իմանա այդ մասին:

**Ֆիլիպ** – Բա որ իմացա՞ն:

**Պիպ** – Վա՛յ, վախկոտի՛կ, վախկոտի՛կ, վախկոտն ուտի չոր խոտիկ:

**Պիկ** – Դե լավ, շո՛ւտ արեք:

*Ճուտիկները փորձում են լվացքի պարանից վերցնել «Ծուղրուղու»-ն: Ցատկում են վեր, վրիպում են: Նորից են փորձում: Ի վերջո, պարանին մնում են միայն ամրակները, իսկ տառազարդ թաշկինակները քարշ են տալիս մի ապահով տեղում պահելու համար: Ճուտիկները թաշկինակները թողնում են գետնին՝ հանդիսատեսի համար տեսանելի, յուրայինների համար՝ աննկատ մի տեղ:*

**Պիպ** – Առաջինը ես եմ փորձելու:

**Պիկ** – Ճիշտ է: Որովհետև դու ես ավագը:

**Պիպ** (Փորձում է կանչել) – Ծուուղղղ... Վա՛յ, չի լինում:

**Պիկ** – Պի՛պ ջան, տուր ես փորձեմ:

**Պիպ** – Չեմ տա (հետ է հրում Ֆիլիպին ու կանչում), «ղու-ղու...»: (Չայնը խզվում է, դառնում ձվձվոց): Չէ՛, չի լինում...

**Պիպ** (*խստորեն*) – Ֆիլի՛պ, ինչո՞ւ ես դողում:

**Ֆիլիպ** – Ես վախենում եմ:

**Պիպ** – Ինչի՞ց:

**Ֆիլիպ** – Բա որ հայրիկը բարկանա՞: Բա որ մայրիկը  
նեղանա՞:

**Պիկ** – Վախկոտ ճուտիկ, նըվ-նըվ բալիկ:

**Պիպ** – Մտնենք ցախանոց: Այնտեղ մեզ ոչ ոք չի  
տեսնի:

**Պիկ** – Պի՛պ, իսկ եթե հայրիկն արդեն ավարտե՞լ է  
նախաձաշը:

**Պիպ** – Չի ավարտել դեռ: Մայրիկը նրան երկար է  
կերակրելու... Մենք կհասցնենք:

*Ճուտիկները հեռանում են և իրենց հետ տանում  
«Ծուղրուղու»-ն: Գալիս է Աքաղաղը:*

**Աքաղաղ** – Կին եմ ասել, հա՛: Մինչև հինգ ավսե  
կորեկաձավար չկերցնի, դուրս չի թողնի: Հո  
չեմ վիճելու (*գալիս է բեմառաջ*): Ի՞նչ արևոտ  
առավոտ է: Երկնքում ոչ մի ամպ չի երևում:  
Այնպես եմ ուզում բանաստեղծությամբ  
արտահայտվել: (*Արտասանում է*).

*Նայի՛ր, նայի՛ր քո շուրջբոլոր,  
Տարածքներ են չնաշխարհիկ:  
Հասունանում են օրեցօր  
Հանդերում ցորենն ու գարին:  
Ծաղիկներն են տեսակ-տեսակ  
Ապրողներին ժպիտ հղում,  
Եվ նրանց հետ, բարեկամնե՛ր,  
Ծատ բարեհաճ իմ...*

(*Հազում է*) Սա ի՞նչ բան է: Ես չեմ կարո-  
ղանում ասել... ասել իմ գլխավոր բառը...  
(*հանդիսատեսին*): Հուշեք, խնդրում եմ: Ահա՛,  
այդ... (*հազում է*): Փորձեմ երկրորդ քառյա-  
կը... միգուցե կարողանամ.

Ծաղիկներն են տեսակ-տեսակ  
Ապրողներին ժպիտ հղում,  
Եվ նրանց հետ, բարեկամներ,  
Շատ բարեհաճ իմ...

(Հազում է) Սա ի՞նչ բան է: (Ծրջվում է  
դեպի լվացքի պարանը և տեսնում, որ այնտեղ  
«Ծուղրուղու» չկա): Կնի՛կ ջան, Թխսկան՛ն ջան:

*Բեմառաջքում հայտնվում է Թխսկանը:*

**Թխսկան** – Ի՞նչ է, աղավնյա՛կս:

**Աքաղաղ** – Ո՞ր է (հազում է): Ո՞ր է իմ այդ... իմ այդ  
գլխավոր բառը: Այստեղ էր, չորանում էր  
պարանին:

**Թխսկան** – Ես դեռ լվացքս չեմ հավաքել: Աստված  
իմ, ո՞ր է կորել: Ա՛յ, այստեղ էր:

*Աքաղաղաղն ու Թխսկանը շվարած նայում են իրար,  
նայում են դեռ ու դեռ, վազվզում են բակում, փնտրում ու  
չեն գտնում «Ծուղրուղու»-ն:*

**Աքաղաղ** – Չկա ու չկա:

**Թխսկան** – Չկա ու չկա, ամուսնյա՛կս:

**Աքաղաղ** – Կորավ իմ ամենակարևոր բառը, ես ո՞ւմ  
եմ պետք՝ առանց այդ բառի: Առանց այդ  
բառի ես նույնիսկ աքաղաղ չեմ: Առանց այդ  
բառի՝ բանաստեղծ չեմ այլևս:

**Թխսկան** – Ինչո՞ւ, ամուսնյա՛կս, ինչո՞ւ:

**Աքաղաղ** – Որովհետև ամեն մի բանաստեղծ պիտի  
ունենա իր սեփական՝ ամենակարևոր բա-  
ռը: Առանց այդ բառի՝ ես չեմ կարողանա  
բանաստեղծություն հորինել:

**Թխսկան** – Վա՛խ, վա՛խ, վա՛խ:

**Աքաղաղ** – Դե լա՛վ, լա՛վ: Ախուվախ մի՛ անի: Ես  
կգնամ փնտրելու իմ ամենակարևոր բառն  
աշխարհում: Երևի մի տեղ կգտնեմ: Հո իմ  
բառը չի՞ վերանա առհասարակ:

**Թխսկան** – Մի՛ գևա, ամուսնյա՛կ ջան: Լավ է գաս կորեկաձավարդ ուտելու:

**Աքաղաղ** – Կորեկաձավարի ժամանակ գտա՛ր, ա՛յ կնիկ:

**Թխսկան** – Բա որ ձանապարհին մրսես, մոլորվես, խեղդվես, թունավորվես:

**Աքաղաղ** – Դե լավ, վե՛րջ տուր: Կգտնեմ իմ ամենագլխավոր բառն ու կվերադառնամ: Գնա տուն, երեխաներին կերակրիր:

*Թխսկանը մտնում է տուն և անմիջապես վերադառնում է:*

**Թխսկան** – Չմրսե՛ս: Չմոլորվե՛ս: Հետդ անպայման ուտելու բան վերցրու (*հեռանում է*):

**Աքաղաղ** – Չե՛, պետք է անհապաղ ձանապարհվել: (*Վերցնում է ուսապարկը, պատրաստվում է մեծ ծամփորդության*): Հաց կվերցնեմ, գավազանս կվերցնեմ: Ճամփորդական երգս էլ կվերցնեմ: Ջահել ժամանակ եմ հորինել: Հիմա կհիշեմ: (Սկսում է վերհիշել մեղեդին, դնդնում է ինքն իրեն, հետո երգում է).

*Ուտքդ տևից հենց դուրս դնես,  
Հազար ձանապարհ է բացվում:  
Վազում եմ նրանք՝ ուր ասես,  
Այնտեղ, ուր քեզ եմ սպասում:  
Մտիր այգի, բանջարանոց,  
Հանդ ու հովիտ, դաշտ ու պուրակ,  
Ընտրիր ծամփան քեզ տանող,  
Երգիր երգերդ ուրախ:  
Դու կհասնես ուր կամենաս,  
Ուր կամենաս հյուր կլինես,  
Օրդ բացվեց, մի ուշանա,  
Թե չէ էլ չես սպասի քեզ:*

Այո: Այսպիսի երգ: Է՛: Մնացեք խաղաղությամբ: Ես գնացի:

# Երկրորդ արար

Վարագույրի առջևով քայլում է Աքաղաղը:

Աքաղաղ (Երգում է).  
Մտիր այգի, բանջարանոց,  
Հանդ ու հովիտ, դաշտ ու պուրակ,  
Ընտրիր ճամփան քեզ տանող,  
Երգիր երգերդ ուրախ....

Վարագույրը բացվում է: Նույն ցանկապատն է՝ ինչ առաջին տեսարանում: Ցանկապատին դոմի տերևներ են, ծոճվում են երկու արևածաղիկներ, սոխի ընձյուղներ: Ցանկապատի մոտ կռատուկ է աճում: Փոքրիկ մի գոմ կա՝ փոքրիկ փարախով: Դա խոզի տնակն է: Խոզը քնած է իր տաշտակի կողքին: Աքաղաղը մոտենում է Խոզին:

**Աքաղաղ** – Ա՛խ, մերուն ջան, գեղեցկուհի՛, թե լինեիր ընկերուհիս, չէիր պառկի գոհ ու անհոգ, չէիր թողնի ինձ մտահոգ:

**Խոզ** (Ծուլորեն բարձրացնում է մարմինը) – Արթևացրի՛ր, դե, ասա, ի՞նչ է քեզ պետք:

**Աքաղաղ** – Խոճկորամայր, դժբախտություն է պատահել:

**Խոզ** (Կողը քորելով ցանկապատին) – Ի՞նչ դժբախտություն:

**Աքաղաղ** – Կորել է իմ ամենագլխավոր բառը:

**Խոզ** (Ծարունակելով քորելը) – Ի՞նչ բառ է, որ...

**Աքաղաղ** – Դե, դու գիտես: Այդ ծու... ծու... (Հազում է) Աքլորերեն է...

**Խոզ** (Ստուգում է տաշտը, տաշտի շուրջը, համոզվում է, որ չկա) – Չէ՛, չկա՛: Չեմ տեսել ոչ մի տեղ: Չգիտեմ: Որտե՞ղ կորցրած կլինես:

**Աքաղաղ** – Այս ի՞նչ փորձանք եկավ գլխիս: Ես ի՞նչ անեմ հիմա:

**Խոզ** (Ծարունակելով քորելը) – Դե լա՛վ, արի միասին որոնենք: Նայի՛ր տաշտի մեջ, տաշտի տակ: Չկա՞:

**Աքաղաղ – Չկա՛:**

*Խոզն ու Աքաղաղը որոնում են բանջարանոցում, կռատուկի տերևների ու թփերի տակ: Աքաղաղը բարձրանում է խոզի մեջքին, որպեսզի որոնի արևածաղկի վրա:*

**Խոզ** – Կռատուկն այնքա՛ն է խոշոր: Լա՛վ նայեցիր:

**Աքաղաղ – Չկա՛:** Միայն մի բզեզ էր նստած այնտեղ:

**Խոզ** – Գուցե արևածաղկի վրա՞ է տաքանում:

**Աքաղաղ – Նայենք:** Չէ՛, չի՛ տաքանում:

**Խոզ** – Գուցե սոխի վրա՞ է ձոճվում:

**Աքաղաղ – Օ՛Ֆ, չէ՛:** Չի՛ ձոճվում:

**Խոզ** (*Մոտենում է ցանկապատին, քորում է կողը*) – Ոչ մի տեղ չկա:

**Աքաղաղ – Հիմա ի՞նչ քար տամ գլխիս:** Ի՞նչ անեմ ես:

**Խոզ** – «Ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ...»: Ի՞նչ իմանամ ինչ անես: Արի իմ լավագույն խոնչոցներից մեկը նվիրեմ քեզ: Ինչքան չլիկի, մենք հին հարևաններ ենք: Լսիր (*երգում, պարում է անձոռնի շարժումներով*).

*Ամենաչքնաղ հնչյունը  
Խոզերի խոնչյունն է.  
Խոռ-խոռ-խրռ,  
Խոռ-խոռ-խրռ,  
Քեզ եմ տալիս, վերցրո՛ւ:  
Հը՞, վերցնո՞ւմ ես:*

**Աքաղաղ** – Ծնորհակալ եմ, հարևա՛ն ջան: Քո խոնչոցն ինձ չի օգնի:

Ամեն իսկական բանաստեղծ պիտի իր սեփական գլխավոր բառն ունենա:

**Խոզ** – Ա՛խ, այդ բանաստեղծները: Քեզ ո՞նց բացատրեմ: Պատկերացրու, թե ինչքան սիրուն է ու բանաստեղծական խոնչոցը: Լսի՛ր նորից.

*Ձայների գլուխգործոցը*

*Խոզերի խոնչոցն է...*

*Վերցնում ես, թե՞ չէ:*

**Աքաղաղ** – Չէ՛, շնորհակալ եմ: Ուրիշինն ինձ պետք չէ: Ես կփնտրեմ ու կգտնեմ իմ ամենագլխավոր բառը:

**Խոզ** – Դե որ այդպես է, ինձ մի՛ խանգարիր: Ես քնել եմ ուզում:

*Խոզը հարմար տեղավորվում է իր տաշտակի մոտ՝ մեջքով դեպի դահլիճը, ու քնում:*

**Աքաղաղ** – Խո՛ղ ջան, հարևա՛ն ջան... Քնեց ու խոսել չի ուզում: Ի՞նչ արած, շարունակեմ ձանապարհս: Գուցե ինչ-որ մի տեղ կհայտնաբերվի իմ գլխավոր բառը: *(Երգում է).*

*Ոտքդ տնից հենց դուրս դնես,*

*Հազար ձանապարհ է բացվում,*

*Վազում են նրանք՝ ուր ասես,*

*Այնտեղ, ուր քեզ են սպասում....*

*Դեկորները թեթևակի փոփոխվում են: Ծարժվում է ցանկապատը: Ուրիշ բանջարանոցներ, ուրիշ մարգեր են բացվում: Երևում են սիսեռի թփեր, բազուկի կարմրավուն տերևներ, ձոճվող կակաչների գլխիկներ: Նրանց հետևում երևում ու անհետանում է Կատվի մեջքը: Ապա հանկարծակի հայտնվում է, և Աքաղաղը հայտնվում է նրան դեմ առ դեմ:*

**Կատու** – Ֆը՛ռթ: Չես կարող, չէ՞, առանց խանգարելու:

**Աքաղաղ** – Վա՛յ, այդ դո՛ւ ես, Կատո՛ւ: Վախեցրիր: Ի՞նչ ես անում այստեղ:

**Կատու** – Մկնիկին էի հետապնդում: Եվ քո պատճառով բաց թողեցի նրան: Բայց ես չեմ բարկանում, որովհետև պաշտում եմ բանաստեղծներին:

**Աքաղաղ** – Ների՛ր, Կատո՛ւ ջան: Ես քեզ մի հարց պիտի տամ:

**Կատու** – Հարցրո՛ւ, միայն թե արագ: Ես պիտի բռնեմ անևման այդ մկնիկին:

**Աքաղաղ** – Դու շատ ես վազվզում այս կողմերում: Քեզ ոչ մի տեղ չի՞ հանդիպել իմ ծ... ծ... (հազում է): Դե, այսպես ասած, իմ գլխավոր բառը:

**Կատու** – Ի՞նչ գլխավոր բառ...

**Աքաղաղ** – Դե այդ... (Հազում է):

**Կատու** – Հասկացա, բայց ի՞նչ է պատահել:

**Աքաղաղ** – Կորել է ամբողջովին: Իսկ առանց այդ գլխավոր բառի ես չեմ կարողանում բանաստեղծություններ հորինել:

**Կատու** – Մ-յ-ա-ո՛ւ... Ինձ թվում է, ես կարող եմ օգնել քեզ:

**Աքաղաղ** – Ինչպե՞ս:

**Կատու** – Կորցրածիդ փոխարինող մի ուրիշ բան կնվիրեմ:

**Աքաղաղ** – Ծնորհակալ եմ: Իսկ ի՞նչ:

**Կատու** – Լսիր (երգում է).

*Թե պոետ ես ուզում դառնալ,  
Մլավիր ու մռլտա,  
Մլավոցը երգի համար  
Հավագույն բառն է, որ կա.  
Մյաո՛ւ-մյաո՛ւ, մյաո՛ւ-մյա՛,  
Մյաո՛ւ-մյաո՛ւ, մյաո՛ւ-մյա՛....*

Լա՛վն է:

**Աքաղաղ** – Լավն է: Բայց դրանից իմ հոգսը չի թեթևանում:

**Կատու** – Ինչպե՞ս թե չի թեթևանում: Հասկացի՛ր ախր, ես քեզ եմ նվիրում իմ «մյաու»-ների ու «մռլտոց»-ների լավագույնները: Կարող ես բանեցնել՝ միևնույն կգտնես քոնր, քո կորցրածը: Դե վերցրու ու գնաս բարով:



**Աքաղաղ** – Է՛, հնարավոր չէ, Կատու ջան: Ամեն մի իսկական բանաստեղծ պիտի իր գլխավոր, իրեն բնորոշող բառը ունենա:

**Կատու** – Չեմ հասկանում: Ես միշտ էլ ասել եմ, որ բանաստեղծները խորհրդավոր անձնավորություններ են... Վա՛յ, վա՛յ, կներե՛ս, ահա և մուկը: (*Նետվում է թփերի մեջ ու անհետանում*):

**Աքաղաղ** – Ի՛նչ արած: Շարունակեմ ձամփաս: Առանց իմ գլխավոր բառի՝ ես կյանք չեմ ունենա: (*Երգում է*).

*Մտիր այգի, բանջարանոց,  
Հանդ ու հովիտ, դաշտ ու պուրակ,  
Գտիր քո ձամփան քեզ տանող  
Հնչեցրու երգերդ ուրախ...*

*Դեկորները շարժվում են: Աքաղաղը հայտնվում է գետափին: Ափին լացող ուռի է աճում: Ջրում ձերմակ շուշաններ են, ջրի մակերևույթն ամբողջովին ծածկված է նրանց տերևներով: Գետափին ձանապարհն ընդհատվում է: Գորտը դուրս է ցատկում ջրից և անմիջապես նետվում ջուրը: Աքաղաղը վախից նետվում է մի կողմ: Գորտը նորից է դուրս ցատկում:*

**Գորտ** – Անմտությո՛ւն: (*Նորից է նետվում ջուրը: Եվ նորից է հայտնվում ջրաշուշանի տերևի վրա*): Հիմարությո՛ւն:

**Աքաղաղ** – Ի՛նչ ես ասում:

**Գորտ** – Ասում եմ հիմարություն: Ճանապարհը չի ավարտվում: Գետն էլ ձանապարհ է: (*Դարձյալ ցատկում է ջրի մեջ, դարձյալ հայտնվում ափին*): Իսկ դու այստեղ ի՛նչ ես անում:

**Աքաղաղ** – Որո՞նում եմ: Որո՞նում եմ իմ ամենագլխավոր բառը: Կորել է:

**Գորտ** – Ո՛ր բառն է կորել:

**Աքաղաղ** – Դե՛, դու գիտես: Այդ ծ... ծ... Դու շատ ես

լսել երևի:

**Գորտ** – Իսկ գուցե նա ջո՞րն է ընկել:

**Աքաղաղ** – Ինչպե՞ս:

**Գորտ** – Շատերն են սիրում աղբը ջուրը նետել: Գուցե քո բառն էլ են աղբի հետ ջուրը նետել...

**Աքաղաղ** – Մի՛ վիրավորիր ինձ...

*Գորտը չի լսում մինչև վերջ: Դարձյալ նետվում է ջուրը և դուրս է լողում պահածոյի մի ժանգոտ տուփի հետ:*

**Գորտ** – Հո սա չէ՞:

**Աքաղաղ** – Ի՜նչ ես ասում...

*Գորտը դարձյալ չլմփում է ջրի մեջ և հայտնվում է ջրաշուշանի տերևի վրա՝ մի հին կոշիկ բռնած:*

**Գորտ** – Գուցե սա՞ է:

**Աքաղաղ** – Դու ինձ չես լսում, գո՛րտ:

*Գորտը նորից է ջուրը նետվում և դուրս է լողում մի փոքրիկ զանգակով:*

**Գորտ** – Սա չէ՞, լավ նայիր:

**Աքաղաղ** – Չէ՛, երևի դու ոչինչ չես հասկանում:

*Գորտը զանգակը նետում է ջրի մեջ:*

**Գորտ** – Իսկապես որ ես չգիտեմ, թե քեզ ինչ է հարկավոր:

**Աքաղաղ** – Ես բառ եմ կորցրել, հասկանո՞ւմ ես, բառ և ոչ թե ինչ-որ իր: Իսկ դու ցատկոտում ես ու չես լսում, թե ինչ եմ ասում:

**Գորտ** – Ա՛խ, բա՛ռ: Դե դու մի վշտանա բոլորովին: Դրա բանը շատ հեշտ է:

**Աքաղաղ** – Այդ ինչպե՞ս, Գո՛րտ ջան:

**Գորտ** – Ա՛յ, այսպե՛ս ղորտ-ղորտ:

**Աքաղաղ** – Ինչպե՞ս...

**Գորտ** – Շատ հասարակ՝ ղորտ-ղորտ: «Ղորտ-ղորտ»-ով հրաշալի երգ և անևման բանաստեղծություն կարելի է գրել: Մոռացել ես երևի, որ այդ երգը դու ես հորինել ինձ համար: Լսիր: *(Երգում է):*

*Քչքչում է ջուրը  
Բարալի՞կ, թե՞ հորդ,  
Ես նստել ավիև ու  
Երգում եմ «Ղորտ-ղորտ»:*

*Միջատներ եմ որսում ես,  
Թիթեռներ ու որդ,  
Ինչ էլ որսամ իմ երգը  
Ինձ հետ է՝ «Ղորտ-ղորտ»:*

*Իզուր ինձ չորոնես,  
Արագիլ ձախորդ,  
Ես լծակում պահվելու  
Տեղ ունեմ «Ղորտ-ղորտ»:*

**Աքաղաղ** – Իսկապես որ վատ երգ չէ: Բայց ինձ ոչ թե քո «Ղորտ-ղորտը», այլ իմ բառն է պետք: Ամեն բանաստեղծ պիտի իր գլխավոր բառն ունենա:

**Գորտ** *(Նեղացած)* – Ես քեզ «Ղորտ-ղորտ» չեմ առաջարկում: Ինձ էլ է պետք: Ցտեսություն: *(Ցատկում է ջրի մեջ):*

**Աքաղաղ** – Ա՛յ քեզ բան: Գետը չեմ անցնի: Հետ դառնամ ու գնամ տուն: Վե՛րջ: Իմ ամենագլխավոր բառը կորավ ու կորավ: Առանց այդ բառի ես նույնիսկ աքլոր էլ չեմ: Էլ ի՛նչ աքաղաղ, երբ իր ամենակարևոր բառը մոռացել է: Ծ... ծ... ծուղ... *(Հագում է):* Չէ՛, չի լինում: Տուն գնամ, պառկեմ քնեմ ու էլ չարթնանամ: Ինչո՞ւ արթնանամ...

*Հնչում է ձանապարհի երգը՝ վիատ ու դանդաղ: Թևով հրաժեշտ տալով հանդիսականներին՝ Աքաղաղը վշտացած թողնում է բեմը:*

## Երրորդ արար

*Առաջին տեսարանի դեկորներն են: Աշխատելով մնալ աննկատ՝ հայտնվում են ճուտիկները:*

**Պիպ** – Ձայն-ծպտուն չկա: Հայրիկը երևի նախաձաշում է:

**Պիկ** – Ճիշտ է, Պի՛պ, դեռ նախաձաշում է:

**Ֆիլիպ** – Ես էլ եմ ուտել ուզում:

**Պիպ** – Մի՛ նվնվա: «Ծուղրուղու»-ն կախենք իր տեղում:

*Ճուտիկները ջանադրաբար ցատկոտում և «Ծուղրուղուն»-ն կախում են լվացքի պարանիկ:*

**Պիկ** – Ինչո՞ւ մենք չենք կարողանում կարգին «ծուղրու» կանչել:

**Պիպ** – Ոչ թե «ծուղրու», այլ՝ «ծուղրուղու»

**Պիկ** – Ծուղրուղու...

**Ֆիլիպ** – Որովհետև չենք նախաձաշել: Սոված ենք:

**Պիպ** – Դե լա՛վ, ապերի՛կ: Գնանք մեր շիլան ուտենք: Կսովորենք հետո:

**Ֆիլիպ** – Ծղրտա՛լ կսովորենք:

**Պիպ** – «Ծուղրուղու», հիմարի՛կ ջան:

**Ֆիլիպ** – Մ-ա-ա-ա-մ, նա ինձ վիրավորում է:

*Ճուտիկները մտնում են խրճիթ: «Ծուղրուղու»-ն ձոճվում է պարանի վրա: Յանկապատի հետևից հայտնվում է կովի պոչը: Պոչը մի քանի անգամ թափահարելուց հետո հայտնվում են պոզերը, իսկ մի քիչ հետո՝ կովի դունչը:*

**Կով** – Ոչ ոք չկա: Ոչ ոք հյուրին չի դիմավորում: (Բակ է մտնում, շրջում է բակում: Մի երկու ծաղիկ է պոկում, որոճում: Կանգ է առնում լվացքի պարանի դիմաց, որտեղ «Ծուղրուղու»-ն է չորանում): Գուցե սա ավելի համով բան է: (Ծամում և կոպ է տալիս «Ծու»-ն) Ոնց որ թե ոչինչ: (Ծամում և կոպ

է տայիս մնացածները ևս): Իսկ հիմա կարելի է  
նաև երգել: Չի խանգարի: (Սկսում է «Լա»-ից՝  
ինքն իրեն տրամադրելով): Լա-լա-լա: Լավ է:  
(Սկսում է երգել: Բացում է բերանը և իր համար  
հանկարծակի հնչում է խլացուցիչ «Ծուղրուղու»-ն):  
Վայ-վայ: Սա ի՞նչ բան է: (Նորից է փորձում ձայնը  
և նորից է հնչում «Ծուղրուղու»-ն): Քահ-քահ-  
քահ ծիծաղում է: Ես սովորեցի «Ծուղրուղու»  
կանչել մեր սիրելի բանաստեղծ Աքաղաղի  
նման: Թող ևս այնքան էլ չպարծենա, իմն  
էլ պակաս չէ: Հրաշալի է: Սիրում եմ, երբ  
հիանում եմ ինձանով: Իսկ այն օրվանից  
ինչ կորցրել եմ իմ արծաթե զանգակը, ոչ ոք  
ինձանով չի հիանում: Գուցե նաև բանա-  
ստեղծություններ գրել սովորեմ: Հիմա կփոր-  
ձեմ: Բանաստեղծություն սոխակի մասին.

*Բարձրիկ ծառի ձյուղերից է  
Սոխակն ինձ հղում  
Իր երգերից լավագույնը՝  
Հրաշք «Ծուղրուղու»-ն:*

Վա՛խ, ի՞նչ լավ է: Ես արդեն բանաստեղծ  
եմ: Մի անգամ էլ փորձեմ: Այս անգամ էլ  
Կատվի մասին.

*Կատուն նստել է պատին  
Ու չի երկյուղում,  
Մոտեցավ նրան փիսուն,  
Ասաց՝ «Ծուղրուղու»:*

Հրաշալի՛ է: Աննման է: Գնամ գրեմ:  
Բոլորն էլ կհիանան նման բանաստեղ-  
ծություններով:

*Կովը հեռանում է՝ տռճիկ տալով: Ծուտիկները պա-  
տուհանից դուրս են ցատկոտում իրար հետևից:*

**Պիպ** – Ֆիլի՛պ, դու ինքդ տեսա՞ր:

**Ֆիլիպ** – Տեսա՛: Նա կերավ: Իսկ հետո սկսեց բա-  
նաստեղծություններ արտասանել:

**Պիպ** – Ինչո՞ւ անմիջապես չկանչեցիր:

**Ֆիլիպ** – Ծատ վախեցա:

**Պիկ** – Ինչի՞ց:

**Ֆիլիպ** – Բա որ հարու տա՞ր:

**Պիկ** – Հիմա ի՞նչ է լինելու:

**Պիպ** – Վատ բան է լինելու: Հայրիկն էլ չի կարողանա բանաստեղծություններ հորինել: *(Աքաղաղի ձայնով)* Ամեն մի բանաստեղծ իր սեփական ձայնը և իր գլախավոր բառը պիտի ունենա...

**Պիկ** – Ֆիլի՛պ, վազիր մայրիկի մոտ, իմացիր, թե որտեղ է հայրիկը:

*Ֆիլիպը վազում է տուն:*

**Պիպ** – Էսպիսի բաներ: Չգիտեմ թե ինչ է լինելու:

**Պիկ** – Իսկ ի՞նչ կլինի, Պի՛պ, եթե...

*Խոսքը չավարտած՝ հայտնվում է Ֆիլիպը:*

**Ֆիլիպ** – Հայրի՛կը... Մայրիկն ասում է, որ մե՛ծ դժբախտություն է, մե՛ծ դժբախտություն... Հայրիկը գնացել է իր գլխավոր բառը որոնելու: Ես շատ եմ վախենում... *(Սկսում է լաց լինել):*

**Պիպ** – Ուրեմն՝ այսպես, ապերիկնե՛ր: Գնանք Կովի տուն, պատմենք, բացատրենք ամեն ինչ ու խնդրենք, որ վերադարձնի հայրիկի բառը:

**Ֆիլիպ** – Բա որ հանկարծ չտա ու հարո՞ւ տա բոլորիս...

**Պիպ** – Սո՛ւս մնացեք: Գնացի՛նք:

*Ճուտիկները հեռանում են բակից: Հայտնվում է Թխսկանը:*

**Թխսկան** – Այդ ո՞ւր, այդ ո՞ւր, ձուտ-ձուտիկներ: Ինչո՞ւ շիլան չկերաք:

*Ճուտիկները փախչում են:*

# ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

## Չորրորդ արար

*Բանջարանոցի մի ուրիշ հատված: Ծանոթ ցանկապատ, կաղամբի մարգեր, կանեփի մի քանի բարձր ցողուններ, գազարի փրեր: Հայտնվում են ճուտիկները: Նրանք շատ են գրգռված: Վազվզում են կաղամբի մարգում: Պիպը, թափահարելով թևիկները, ցատկում, նստում է ցանկապատին: Պիկը ցատկում է կաղամբի վրա, Ֆիլիպն անօգնական ցատկոտում է տեղում:*

**Պիպ** – Եվ բոլորը քո պատճառով, վախկոտի՛կ:

**Ֆիլիպ** – Ինչո՞ւ որ:

**Պիկ** – Որովհետև... «Հարո՛ւ կտա, հարո՛ւ կտա...»:

**Պիպ** – Հիմա չգիտենք, թե որտեղ որոնենք նրան:

**Ֆիլիպ** – Իսկ եթե նա իսկապե՞ս հարու տվող է:

**Պիպ** – Ինչ ուզում է թող լինի: Թեկուզ հարու տվող, թեկուզ քացի տվող: Մենք պարտավոր ենք գտնել նրան ու վերադարձնել հայրիկի ամենազխավոր բառը:

*Լսվում է խոզի երգի մեղեդին: Հայտնվում է Խոզը: Մոտենում է ցանկապատին, երանությանմբ կողը քորում ու երգում.*

**Խոզ** – Ամենաչքնաղ հնչյունը

*Խոզերի խռնչունն է.*

*Խոռ-խոռ-խըռ,*

*Խոռ-խոռ-խըռ...*

*Անչափ գեղեցիկ հնչյուն է*

*Մեր՝ խոզերիս խռնչունը:*

*(Նկատում է ճուտիկներին):* Բարև ձեզ:  
Այստեղ ի՞նչ եք անում:

**Ճուտիկներ:** *(Իրար հերթաշտալով)* – Կովիկ եկք որոնում:  
Նա հայրիկի գլխավոր բառը ծամծամել-կերել  
է: Գուցե նա հարու տվող է, բայց, միևնույն է,  
պիտի գտնենք նրան, խլենք բառը ու կորից  
փռենք պարանիկ:

**Խոզ** – Հիմա ես ամեն ինչ հասկացա: Հասկացա, թե  
ով է փախցրել մեր բանաստեղծի գլխավոր  
բառը: Իսկ նա որոնում ու չի գտնում:

**Ճուտիկներ** – Խո՛զ մորաքույր, օգնե՛ք մեզ: Մենք  
պարտավոր ենք գտնել Կովիկ:

**Խոզ** – Ի՞նչ արած, մտածել է պետք: *(Կողը քորում է):*  
Մտածել է պետք...

*Ծառերի հետևից դուրս է ցատկում Կատուն:*

**Կատու** – Կանգնի՛ր: Կա՛ց, ո՞ւր ես փախչում: Բռնե՛ք  
դրան: *(Տեսնում է հավաքվածներին, կանգ է  
առնում):* Բարի օր, հարևաններ: Այս ի՞նչ  
հավաք է: Այս ի՞նչ պատանիներ են:

*Ճուտիկները շարք են կանգնում նրա դիմաց:*

**Պիպ** – Մենք ճուտիկներ ենք:

**Պիկ** – Կովը որոճել-կերել է մեր հայրիկի գլխավոր  
բառը:

**Ֆիլիպ** – Լվացքի պարանից է փախցրել-տարել: Իսկ  
մենք պիտի խլենք:

**Պիկ** – Կխլե՛ս, ոնց չէ, մանավանդ դու:

**Ֆիլիպ** – Պի՛պ, ասա նրան, թող ինձ չլեղացնի: Ախր  
ես փոքր եմ:

**Կատու** – Սպասե՛ք, երիտասարդներ: Ո՞վ է գողացել,  
ի՞նչ է գողացել, ումի՞ց է գողացել:

**Խոզ** – Կովը գողացել է մեր Աքաղաղի գլխավոր  
բառը: Իսկ նա որոնում է ամբողջ աշխարհով



մեկ ու երգել չի կարողանում ո՛չ հանգերով,  
ո՛չ առանց հանգերի:

*Կատուն ցատկում է ցանկապատին: Քայլում է հետ  
ու առաջ: Նստում, սկսում է հարդարվել: Լիզում է մոր-  
թը, թաթիկներով լվանում է դնչիկը, ճուտիկների հետ  
խոսում է ծուլորեն ու ներողամտորեն:*

**Կատու** – Ահա թե ո՛ւմ մոտ է Աքաղաղի գլխավոր  
բառը: Խեղճ Աքաղաղ: Ես պաշտում եմ  
բանաստեղծներին, իսկ Աքաղաղին՝ առանձ-  
նապես:

**Պիպ** – Կատո՛ւ քեռի, օգնի՛ր մեզ: Մենք պիտի  
անպայման գտնենք Կովին:

**Պիկ** – Պիտի գտնենք ու խլենք հայրիկի բառը:

**Կատու** – Իսկ ինչո՞ւ հայրիկին ինքներդ չասացիք  
այդ մասին:

**Ճուտիկներ** (*Շփոթված*) – Պի-պի-պի...

**Կատու** – Ի՛նչ եք ծամծամում, չեմ հասկանում:

**Ճուտիկներ** (*Ամաչելով*) – Պի-պի-պի...

**Խոզ** – Բացատրեք՝ հասկանանք:

**Պիպ** – Մենք... սկզբից մենք փախցրինք:

**Կատու** – Ֆրոթ: Ինչպիսի խայտառակություն:

**Պիպ** – Հենց այդ պատճառով էլ մենք պարտավոր  
ենք ինքներս գտնել ու հետ բերել այդ բառը:

**Ճուտիկներ** (*Բողորը միասին*) – Օգնե՛ք մեզ, Կատո՛ւ  
քեռի, օգնե՛ք մեզ, Խո՛զ մորաքույր:

**Կատու** – Ա՛խ, անպետք տղաներ, ձեզ պատժելն  
էլ քիչ է: Բայց քանի որ դուք էլ եք տուժող,  
կփորձենք օգնել, ի՛նչ արած:

*Հանկարծ կանեփի թփերի հետևից հայտնվում  
է Կովի պոչն ու անհետանում, և հանկարծ լսվում է  
գրնգուն «Ծուլորուղու»-ն:*

**Խոզ** – Նա այստե՛ղ է՝ ցանկապատի այն կողմում:

**Կատու** – Դե, շո՛ւտ, փախչենք, փախչենք, թե չէ...

*Նորից է լսվում «Ծուղրուղու»-ն:*

**Ճուտիկներ** – Դա հայրիկի բառն է: Ճիշտ և ճիշտ հայրիկի բառը:

*Բոլորն անցնում են ցանկապատից ու փախչում: Քիչ հետո ցանկապատի հետևից «դուրս է լողում» Կովը:*

**Կով** – Ա՛յ քեզ զարմանք: Ես կարողանում եմ բանաստեղծություններ հորինել: (Ճոճում է գլուխը): Այգում աճող բոլոր ներկաները կվկայեն:

*Իր բեռան տակ ճռնչում ու*

*Առաջ է շարժվում մրջյունը:*

*Հասնի ավարտին իր ուղու,*

*Սիրով կկանչի՝ «Ծուղրուղու»:*

*(Կովը խոնարհվում է կանեփին, կաղամբին, գազարին):*

Ձեզ դուր եկա՞վ: Երևի դուք հիացած եք ինձանով: Իհարկե, հիացած եք, միայն թե լեզու չունեք, որ խոստովանեք: Հիմա մի ուրիշը կարտասանեմ: Ի՛նչ հրաշալի է:

*Հավքերն են կապույտում սուզվում,*

*Ամպերին հասնել են ուզում:*

*Եվ ուզում են, որ մեր գյուղում*

*Լսեն իրենց ջերմ «Ծուղրուղու»-ն:*

*Ցանկապատի հետևից հայտնվում են ճուտիկները, Խոզը և Կատուն:*

**Բոլորը միասին** – Ահա Կովը: Ահա նա: Ահա...

**Կով** – Դուք եկել եք իմ համերգի՞ն: Հիմա ես ձեզ համար բանաստեղծություններ կկարդամ: Իսկ դուք կլսեք ու կծափահարեք ինձ:

**Կատու** – Ես պաշտում եմ բանաստեղծներին: Բայց

ոչ նրանց, ովքեր գողանում են ուրիշների բանաստեղծությունները: Ֆը՛ռթ: Ես արհամարհում եմ այդպիսիներին:

**Կով** – Ես այդպես համաձայն չեմ: Դուք պիտի հիանաք ու ծափահարեք:

**Խոզ** – Դա էր պակաս: Դու անմիջապես վերադարձրու Աքաղաղի բառը, որպեսզի ճուտիկները տանեն իրենց հայրիկին: Նա հիմա անչափ վշտացած է:

**Ճուտիկներ** – Կով մորաքույր, վերադարձրու հայրիկի բառը, շա՛տ ենք խնդրում:

**Կով** – Չե՛մ տա, չէ՛:

**Խոզ** – Եվ չե՞ս էլ ամաչում:

**Կատու** – Գոնե ճուտիկներին խղճա:

*Ճուտիկները սկսում են արտասվել:*

**Կով** – Իսկ դուք, ի՛նչ է, չգիտե՛ք, որ եթե վերադարձնեմ «Ծուղրուղու»-ն, այլևս չեմ կարողանա բանաստեղծություններ հորինել: Դրանից հետո ո՞վ պիտի հիանա ինձանով: Իմ զանգակը կորցնելուց հետո ես պարծենալու և հիացնելու ոչինչ չունեմ: Ես զբոսնում էի գետափին ու չնկատեցի, թե ինչպես կորցրի իմ հրաշալի զանգակը:

**Կատու** – Վերադարձրու Աքաղաղի գլխավոր բառը: Դա կլինի բարի գործ, իսկ բարությամբ հիանում են բոլորը:

**Կով** – Բարությունը սրտի մեջ է, չի երևում: Իսկ ես ուզում եմ, որ բոլորն էլ այն տեսնեն:

**Կատու** – Այն, ինչ միանգամից նկատվում է, գեղեցկությունն է: *(Կատուն ձեմելով՝ ցանկապատի վրա ցուցադրում է իր գեղեցկությունը):*

**Կով** – Ծատ ճիշտ է: Ես կվերադարձնեմ «Ծուղրուղու»-ն իմ զանգակի փոխարեն: Գտե՛ք արծաթե դողանջով իմ զանգակը, և բոլորը կսկսեն հիանալ ինձանով:

**Խոզ** – Դու խիղճ ունե՞ս:

**Կատու** – Որտեղի՞ց գտնենք քո զանգակը:

**Կով** – Որտեղից ուզում եք: Թե չէ «Ծուղրուղու»-ն չեք ստանա: Չե՛մ տա ու վե՛րջ: *(Երգում է)*.

*Պոետ լինելը լավ բան է.*

*Հորինիր տողը տողին,*

*Ողջույնի «Ծուղրուղու»-դ ասա*

*Անցորդին ու եկողին:*

Տոետություն: Վերադարձեք զանգակով:

*(Կովը, ցցելով պոչը, ծածկվում է կանեփի թփերի հետևում):*

**Խոզ** – Ա՛յ քեզ փորձանք: Ուրիշ ձար չկա: Պիտի փնտրենք զանգակը:

**Պիպ** – Դե՛, ձե՛զ տեսնեմ, երեխե՛ք:

*Բոլորը ցրվում են բանջարանոցում որոնելու զանգակը: Տեսողում են կաղամբի գլուխները, ծածկվում ու հայտնվում են կանեփի ու գազարի թփերի արանքում: Կատուն հանդիսավորությամբ հետ ու առաջ է քայլում ցանկապատի վրա՝ թաթիկներով ցույց տալով մերթ այս, մերթ այն կողմը:*

**Ճուտիկներ** *(Լալիս են)* – Ոչ մի տեղ չկա: Պի-պի-պի...

**Կատու** – Հապա սպասեք: Կովը ասաց, որ գետափին գբոսնելիս է կորցրել զանգակը... Վազենք գետափ: Ճիշտ կլինի այնտեղ որոնել:

**Բոլորը** – Իսկապես որ: Ծուտ վազենք գետափ:

*Դուրս են վազում:*

## Հինգերորդ արար

**Գորտ** – Հո՛ւյ: Մի մոծակ էլ կերա: Համեղ է, բայց քիչ է: Հո՛ւյ: Էլի մեկը: Ոչինչ: Բայց էլի սոված եմ: Հո՛ւյ: Ա՛յ այսպես: Լավ է:

*Վազեվազ գալիս են Կատուն, Խոզը և ճուտիկները: Նրանք շատ են շտապում: Հուզված են և խոսում են իրար ընդհատելով:*

**Բոլորը միասին** – Գո՛րտ ջան, Կովը գողացել է «Ծուղրուղու»-ն... Մեր խեղճ հայրիկը... Կովը հիմա բանաստեղծություններ է հորինում... Այդ մենք ենք մեղավորը... Պի-պի-պի...

**Գորտ** – Դուք հո չե՞ք գժվել: Ոչինչ չեմ հասկանում... Ի՞նչ կով... Ի՞նչ հայրիկ... Ի՞նչ գողություն... Ի՞նչ բանաստեղծություն... *(Այս ասելիս Գորտը մերթ սուզվում, մերթ հայտնվում է ջրի երեսին):*

**Ճուտիկներ** *(Լալիս են)* – Պի-պի-պի... Խե՛ղճ հայրիկ...

**Խոզ** *(Սաստում է նրանց)* – Դե վե՛րջ տվեք, պատի՛կ լացկաններ: Կատո՛ւ, դո՛ւ խոսիր:

**Կատու** *(Նստում և սկսում է հարդարվել՝ ինքն իրեն լպստելով)* – Հասկանո՛ւմ ես, Գորտ ջան, ես պաշտում եմ բանաստեղծներին, նրանք այնքա՛ն խորհրդավոր են:

**Խոզ** *(Ընդհատում է նրան)* – Մի՛ շեղվիր, Կատո՛ւ ջան: Գործից խոսիր:

**Կատու** – Թողեք ասեմ ասելիքս: Եվ խոսեմ այնպես, ինչպես ես եմ խոսում:

**Գորտ** – Կարո՞ղ եք ասել, թե ինչ է պատահել:

**Կատու** – Կորել է արծաթե զանգակը:

**Գորտ** – Կարգին բացատրեք:

**Կատու** – Կովը որոճել, կուլ է տվել Աքաղաղի գլխավոր բառը: Հիմա Կովը ինքն է «Ծուղրուղու»

կանչում և ինքն է բանաստեղծություններ  
հորինում, իսկ խեղճ Աբաղաղը վշտից  
կարող է հիվանդանալ:

*Ներս է վազում այլայլված Թխսկանը:*

**Թխսկան** – Տկարացա՛վ, հիվանդացա՛վ իմ խեղճ  
ամուսնյակը: Վտանգավոր հիվանդություն է:  
Գնացի որոնելու նրա գլխավոր բառը, բայց  
ի՞նչ կկարողանա անել խեղճ թխսկանը:  
Զգիտեմ ո՞ւր գնալ, որտե՞ղ փնտրել:

**Ճուտիկներ** – Պի-պի-պի...

**Թխսկան** – Վա՛խ, ճուտիկներ ջան, դուք է՛լ եք  
այստեղ՝ առանց ավագների, առանց ճաշի:

**Գորտ** – Հիմա արդեն ամեն ինչ խառնվեց:

**Կատու** – Ամեն ինչ կպարզվի, եթե գտնվի Կովի  
զանգակը: Գտնվե՞ց Կովի զանգակը՝ նա  
անմիջապես կվերադարձնի Աբաղաղի  
գլխավոր բառը: Եվ Աբաղաղը կապաքինվի,  
կառողջանա:

**Թխսկան** – Իսկ ի՞նչ գիտենք, թե որտեղ պիտի  
որոնենք զանգակը:

**Գորտ** – Որտե՞ղ է կորցրել այդ զանգակը:

**Կատու** – Կովը ասաց, որ զանգակը կորցրել է գետա-  
փին զբոսնելիս: Նա հիմա բանաստեղծու-  
թյուններով է խոսում:

*Բոլորը ցրվում են գետափին: Փնտրում ու չեն գտնում:  
Տխրում են:*

**Բոլորը** – Չկա ու չկա:

**Թխսկան** – Սարսափելի է: Ամուսնյակս չի դիմանա:  
Կմենի իմ Աբաղաղը:

**Ճուտիկներ** – Պի-պի-պի...

*Դանդաղ քայլերով հայտնվում է վշտահալած Աբա-*

*ղաղը: Թխսկանը և ճուտիկները նետվում են դեպի Աքաղաղը:*

**Թխսկան** – Ինչո՞ւ վեր կացար անկողնուց: Բժիշկն ասաց, որ չի կարելի:

**Ճուտիկներ** – Հայրի՛կ:

**Աքաղաղ** – Եկա, որ հրաժեշտ տամ ձեզ:

**Թխսկան** – Հիմա դու, հիմա դու... Այս վիճակով ո՞ւր ես գնում հիմա դու:

**Աքաղաղ** – Ես գնալու ոչ մի տեղ չունեմ այլևս: Պարզապես գիտեմ, որ առանց իմ գլխավոր բանի էլ չեմ կարողանա ապրել...

*Բոլորը հառաչում են վշտացած:*

**Գորտ** – Հիմարություն: Ես չեմ հիշում, թե ինչ բան է զանգակը, բայց առվի մեջ այնքան աղբ ու զանազան իրեր կան: Գուցե զանգակն էլ է այնտեղ: Հիմա կիմանամ:

*Գորտը սուզվում է ջրի մեջ և դուրս է ցատկում այնտեղից դուրս բերելով տարբեր բաներ՝ պահածոյի տուփ, գրամոֆոնի փող... Ամեն անգամ, երբ նա հերթական անգամ սուզվում է, ներկաների հուսալառ հայացքները ուղղվում են նրան և ընկրկում են հերթական հուսախաբությամբ... Վերջապես հնչում է արծաթե զնգոցը. Գորտը դուրս է ցատկում ջրից՝ զանգակը թաթիկի մեջ պահած:*

Գուցե սա՞ է:

**Բոլորը** – Դա՛ է: Դա՛ է: Ծա՛տ ապրի Գորտը: Կեցցե՛ Գորտը:

**Աքաղաղ** – Զարմանում եմ, թե ինչո՞ւ եք ուրախանում: Խեղճ բանաստեղծի ինչի՞ն է պետք զանգակը, երբ նա իր գլխավոր բառն է կորցրել:

*Այս բառերի վրա հնչում է «Ծուղրուղու»-ն, և հայտնվում է Կովը:*

**Կով** – Ո՞վ է այստեղ հնչեցնում իմ զանգակը:

*Զբոսնելիս առվի ափին  
Կորցրի զանգալս թանկագին:  
Հիմա զանգիս՝ հանդում, գյուղում  
Փոխարինում է «Ծուղրուղու»-ն:*

**Աքաղաղ** – Դա իմ գլխավոր բառն է: Կո՛վ ջան, վերադարձրու իմ գլխավոր բառը:

**Կով** – Նախ վերադարձրեք իմ աննման զանգակը: Ես չեմ դիմանում, երբ ինձանով չեն հիանում:

**Գորտ** – Խոնարհիիր գլուխդ, որ կապեմ:

*Գորտը ցատկոտում, բայց չի հասնում Կովի պարանոցին: Կովը խոնարհվում է: Գորտը, ի վերջո, զանգակը կապում է Կովի վզին:*

**Կով** – Ա՛յ, հիմա հրաշալի՛ է, սքանչելի՛ է կրկնակի: «Ծ ու ղ ր ու ղ ո՛ւ»:

**Խոզ** – Լավ բան չես անում: Ծուտ վերադարձրու Աքաղաղի բառը:

**Կով** – Իհարկե կվերադարձնեմ: Ես կատակ արեցի: Ահա, վերցրեք:

*Կովը ձևացնում է, թե ուզում է հեռանալ:*

**Թխսկան** – Դու այդ ո՞ւր: Դու այդ ո՞ւր:

**Ճուտիկներ** – Պի-պի-պի... Կո՛վ մորաքույր, խղճացե՛ք մեր հայրիկին:

**Կով** – Դե լա՛վ, մի՛ հուզվեք: Ես կատակեցի: Իհարկե, կտամ: Վերցրեք, ահա՛: Զանգակով էլ ես շատ հմայիչ եմ: (*Կովը բացում է բերանը և կանչում «Ծուղրուղու»*): Վա՛յ, հիմա չգիտեմ, թե ինչպես ազատվեմ դրանից:

**Աքաղաղ** (*Դեռևս թույլ ձանով*) – Ես քեզ կսովորեցնեմ: Դա բոլոր բանաստեղծներն էլ գիտեն: Դու պետք է արտասանես քո գլխավոր բառը, որպեսզի օտար բառը քեզանից պոկվի:

**Կով** – Մու-մու-մո՛ւ... Հետ եմ սովորել: Օգնեցե՛ք, խնդրում եմ:



Կովը փորձում է մնչալ: Նախ չի կարողանում: Բայց աստիճանաբար ձայնը դառնում է հաստատուն, և նրա կոկորդից դուրս են գալիս «Ծուղրուղու»-ի տառերով թաշկինակները: Բոլորը նետվում են դեպի Կովը, ձգում են թաշկինակները և, դուրս քաշելով, փոփում են գետնին՝ բացի Կատվից, որը ցանկապատի բարձունքից ղեկավարում էր նրանց: Հետո բոլորը փրկված թաշկինակների հետ նետվում են դեպի Աքաղաղը:

**Ճուտիկներ** – Հայրի՛կ, ահա՛ և քո ամենագլխավոր բառը:

**Թխական** – Սիրելի՛ս, դու այլևս չես մեռնի: Ծուտով լրիվ կլավանաս: Մնում է միայն, որ ախորժակով ուտես իմ պատրաստած ճաշիկները:

**Խոզ** – Փա՛նք Աստծու (քորում է կողը՝ ցանկապատին քսելով):

**Կատու** – Կապրի մեր բանաստեղծը: Պաշտում եմ բանաստեղծներին: Կեցցե՛ն բոլոր բանաստեղծները:

*Աքլորը փոքր-ինչ առուցանում է, աշխուժանում, բացում թևերը ու կանչում իր ամենագլխավոր բառով:*

**Աքաղաղ** – Ծնորհակալ եմ, կի՛ն ջան: Ծնորհակալ եմ, երեխանե՛ր: Ծնորհակալ եմ, բարեկամներս՝ Կատու, Խոզ, Գորտ: Դուք օգնեցիք ինձ, որ ես շարունակեմ երգել թե՛ ինձ, թե՛ բոլորիդ համար: Հենց հիմա կփորձեմ.

*Առավոտ շուտ արևն ելնում*

*Իր շողերն է մեզ հղում,*

*Իսկ ես որտեղ էլ որ լինեմ,*

*Պիտի երգեմ՝ ծուղրուղու:*

Բարեկամներ՝, հաջողվե՛ց: Ես դարձյա՛լ բանաստեղծ եմ:

Ծուղ-րու-ղո՛ւ...

**Վերջ**



Դավիդ Սամոյլով

# ՓՂԻԿԸ ԳՆԱՑ ՍՈՎՈՐԵԼՈՒ

Թարգմանությունը՝  
Յուրի Սահակյանի

# Գործող անձինք

Վարող  
Փղի ձագ  
Փիղ մայրիկ  
Գայլ  
Արջամուկ  
Կատու  
Մկներ

**Վարող** – Կար-չկար մի փղի ձագ,  
Լավիկն էր ու համարձակ:  
Երբ որ տարին բոլորեց,  
Շատ կամեցավ սովորել:  
Անգործ ինչպե՞ս մնա նա,  
Չէ՛, պարապ չի դիմանա:

**Փղի ձագ** – Մա՛մ, սովորել եմ ուզում:

**Փիղ մայրիկ** – Դու չես մնա անուսում,  
Քնի՛ր հիմա, լուսերե՛ս:  
Կուզե՞ս՝ հեքիաթ պատմեմ քեզ:

**Փղի ձագ** – Հեքիաթ չե՛մ ուզում,  
Սովորե՛լ եմ ուզում:

**Փիղ մայրիկ** – Քոնն ես պնդում դու անընդհատ:  
Կուզե՞ս մի կտոր շոկոլադ:

**Փղի ձագ** – Շոկոլադ չե՛մ ուզում:  
Սովորե՛լ եմ ուզում:

*(Դուռը ծեծում են):*

**Փիղ մայրիկ** – Սպասի՛ր, մեկը ծեծում է դուռը:  
Ահա և Գայլ մորաքույրը:  
Խնդրե՛մ, ներս եկեք:  
Համեցե՛ք, նստե՛ք:

**Գայլ մորաքույր** – Անցնում էի ձեր տան մոտով,  
Ահա՛, մտա:  
Հը՞, ինչպե՞ս եք,  
Ի՞նչ կա-չկա:  
Խոզը կնունքի է կանչել ինձ բարով,  
Բայց խոզի միսը տանել չեմ կարող:

**Փիղ մայրիկ** – Կուզե՞ք մնացեք՝ միասին ճաշեք:  
Խնդրեմ, համտեսե՛ք  
Դիմիկով կիսել:

**Գայլ մորաքույր** – Ա՛խ, ի՞նչ եք ասում,  
Կուշտ եմ, ազնիվ խոսք:

**Փիղ մայրիկ** – Շա՛տ ափսոս, որ մենք ճաշունենք մսով:  
Գա՛յլ ջան, բալիկն իմ վեցը բոլորել

Եվ հիմա շատ է ուզում սովորել:  
Բայց ի՞նչ անեմ ես,  
Դպրոցներ չկան: Խայտառակությո՛ւն,  
Ի՞նչ կասեք սրան:  
Դպրոց կա միայն մեր Հնդկաստանում,  
Բայց, դե, Հնդկաստան որդուս ո՞նց տանեմ:  
Առնվազն մի վերամբարձ է պետք:

**Գայլ մորաքույր** – Ձեզանից ոչ հեռու  
Նապաստակների մի լավ դպրոց կա:

**Փիղ մայրիկ** – Նապաստակների դպրոցը գիտեմ:  
Ես շատ եմ նրանց հետևել, դիտել:  
Հարցրել եմ: Այնտեղ փիղ չեն վերցնում,  
Որովհետև նապաստակները վախենում են անչափ,  
Փախչում-ցրվում են,  
Ընկնում է, ասում են, առաջադիմությունը:

**Գայլ մորաքույր** – Իսկ թռչունների դպրո՞ցը:

**Փիղ մայրիկ** – Տեսել եմ դա էլ:  
Ափսո՛ս, դպրոցն այդ ծառի վրա է:  
Հետո բացբերան թռչուններն անխելք  
Սիրում են իրար ծաղրել-ծանակել,  
Իսկ իմ որդին շատ սուսիկ-փուսիկն է:

**Գայլ մորաքույր** – Իսկ մեր արջերի մասին ի՞նչ  
կասես:

**Փիղ մայրիկ** – Հարևաններ ենք, ի՞նչ պիտի ասեմ:  
Բարեհաճ են շատ, գևալ-գալ միշտ կա,  
Բայց արձակուրդը նրանց դպրոցում  
Տևում է երկար: Հենց ձյուն է գալիս,  
Պառկում անհամբեր,  
Բրդոտ թաթերն են ծծում ողջ ձմեռ.  
Խռմփոցից այդ ես կխլանամ...

**Փղի ձագ** – Մա՛մ, սովորե՛լ եմ ուզում:

**Փիղ մայրիկ** – Տեսնո՞ւմ ես՝ ի՞նչ է կատարվում,  
Ամբողջ օրը նույնն եմ լսում.  
«Սովորե՛լ եմ ուզում, սովորե՛լ եմ ուզում...»:

**Փղի ձագ** – Միննո՛ւյն է, սովորե՛լ եմ ուզում:

**Փիղ մայրիկ** (*Գայլիկ*) – Գա՛յլ ջան, ախր ի՞նչ անեմ:

**Գայլ մորաքույր** – Կա մի դպրոց մկների,  
Ընդունում են բոլորին,  
Մեծերին ու փոքրերին:

**Փիղ մայրիկ** – Գա՛յլ ջան, անչափ գոհ եմ ձեզից,  
Թե չէ տղաս գնաց ձեռից...

**Վարդ** – Մկների դպրոցը լեռան վրա է,  
Բավականին լայն մի հին բարայր է:  
Դռները նրա բարձր են ու լայն,  
Որ գազանները մտնել կարենան:  
Պատուհանները՝ շատ նեղլիկ անցքեր,  
Որ կատուները ներս չթափանցեն:  
Ծուխ է բարձրանում նրա երդիկից,  
Մոտենանք մի քիչ, նայենք մոտիկից:  
Հիմա ներսում երգի դաս է,  
Երևի պետք է սպասել:

**Արջամուկ** – Այսօր պիտի մենք սովորենք  
«Զգուշացե՛ք, մկնե՛ր» երգը:  
Ո՞վ է այնտեղ սեղան կրծում,  
Ա՛յ թե կընկնի նա իմ ձեռքը:  
Դե՛, ուշադի՛ր: Սկսում ենք:  
Կերգեն բոլորը, հույս ունեմ:

*(Մկները քմծիծաղում են, Արջամուկը ջութակ է նվագում,  
իսկ մկները երգում են):*

Զգուշացե՛ք կատվից, մկնե՛ր,  
Տրա՛-լլա՛-լլա՛, տրա՛-լլա՛-լլա՛:

Տեսե՛ք՝ կատվի ճանկը չընկնե՛ք,  
Տրա՛-լլա՛-լլա՛, տրա՛-լլա՛-լլա՛:

Մկնի՛կ, այդտեղ խելոք մնա,  
Տրա՛-լլա՛-լլա՛, տրա՛-լլա՛-լլա՛:

Թե չէ տետրից բան չի մնա,  
Տրա՛-լլա՛-լլա՛, տրա՛-լլա՛-լլա՛:

Դասագիրքդ կարգին պահիր,  
Տրա՛-լա՛-լա՛, տրա՛-լա՛-լա՛:

Թե չէ կատուն կպատահի,  
Տրա՛-յա՛-յա՛, տրա՛-յա՛-յա՛:  
Կճանկի քեզ, հիմարիկիդ,  
Տրա՛-յա՛-յա՛...

(Դուռը ծեծում են):

**Մկներ** – Վա՛յ, վա՛յ, նա է: Նա է՝ Կատո՛ն,  
Թաքնվում ենք հիմա իսկույն:  
Վա՛յ, փորի՛կս... Փորի՛կս, վա՛յ...  
Մի՛ տրորիր ոտքս, հիմա՛ր...

**Արջամուկ** (Վճռակա՛ն) – Ես կխոսեմ այդ ավազակի հետ:  
Կատուն էլ ինձ համար սարսափելի չէ:  
Հե՛յ, ո՞վ է:

**Փիղ մայրիկ** – Մենք ենք՝ փղերս,  
Փիղ մայրիկն ու փղիկը:

**Արջամուկ** – Թե կի՛րթ լինեիք, քաղաքավարի՛,  
Դասաժամը մեր չէիք խանգարի:  
Ո՞նց կարելի է, պարապմո՛նք է, չէ՛:

**Փիղ մայրիկ** – Ների՛ր, սիրելի՛ Արջամուկ,  
Խանգարեցի՛նք ականամ,  
Որդիս սովորել է ուզում,  
Արդեն վեց է դարձել նա:  
Նա այնքա՛ն բան է հասկանում,  
Այնքա՛ն բան է իմանում...  
Ուշադիր է ու ջանադիր,  
Շատ բաների է գիտակ,  
Նույնիսկ Գետաձին զարմացավ,  
Ասաց՝ շա՛տ է ընդունակ...

**Արջամուկ** – Ի՛նչ արած, հիմա կքնենք նրան:  
Փղի՛կ ջան, խնդրե՛մ, մտի՛ր դասարան,  
Ա՛խ, ինչ խոշորն է, շա՛տ է մոր նման...

**Փիղ մայրիկ** – Այո՛, արագ են բալիկներն աճում:

**Արջամուկ** – Ծանոթացի՛ր:

**Փղի ձագ** – Վա՛յ, ի՛նչ փոքրիկ փղիկներ են,  
Ի՛նչ սիրունիկ-լավիկներն են:



- Արջամուկ** – Չէ՛, չէ՛, դրանք փղիկներ չեն,  
Մկներ են ու մկնիկներ են:
- Փիղ մայրիկ** – Ի՞նչ լավ փոքրիկներ են, իրո՞ք,  
Կարդում ու գրում են սիրով:
- Արջամուկ** – Նե՛րս մտիր, Փղի՛կ: Այդպե՛ս: Շա՛տ ապրես:  
Միայն թե զգո՛ւյշ, դուռը չջարդես:  
Պահարանը շուռ չտաս,  
Չնստես համադասարանցիներիդ վրա...  
Մկնե՛ր, չորս նստարան ազատեք  
Աշխարհագրական քարտեզի մոտ:  
Ո՞նց է: Նստեցի՞ր:
- Փղի ձագ** – Նստեցի, այո:
- Արջամուկ** – Ոչի՞նչ, դիմացի՛ր:  
Իսկ հիմա, խնդրեմ, անունդ ասա:
- Փղի ձագ** – Չգիտե՛մ:
- Արջամուկ** – Ասա, որտե՞ղ են փղերը ապրում:
- Փղի ձագ** – Չգիտե՛մ:
- Արջամուկ** – Քանի՞ տարեկան ես:
- Փղի ձագ** – Չգիտե՛մ:
- Արջամուկ** – Ճաշին ի՞նչ ես կերել:
- Փղի ձագ** – Չգիտե՛մ:
- Փիղ մայրիկ** – Շատ էլ լավ գիտի, շփոթվել է լոկ,  
Կարծում եմ, որ դուք կներեք, իրոք:  
Թույլ տվեք ինքս հարցնեմ նրան,  
Գուցե դա օգնի:  
Այսօր ի՞նչ ես կերել, տղաս:  
(Հուշում է):  
Սը՛մ...
- Փղի ձագ** – ...բա՛կ:
- Փիղ մայրիկ** – Ոչ թե բա՛կ, այլ՝ բո՛ւկ:
- Փղի ձագ** – Բո՛ւկ:

**Փիղ մայրիկ** – Ծա՛տ ձիշտ է՝ սը՛մ-բո՛ւկ:  
Ուրիշ ի՞նչ՝ ասա:  
(Հուշում է):  
Սա՛...

**Փղի ձագ** – ...լո՛ր:

**Փիղ մայրիկ** – Ծա՛տ ձիշտ է, սա՛-լ ո՛ր:  
Ինչո՞վ կերար:  
(Հուշում է):  
Բո՛ւլ...

**Փղի ձագ** – ...կո՛վ:

**Փիղ մայրիկ** – Ի՞նչ բուկու:

**Փղի ձագ** – Չամիչո՞վ բուկու:

**Փիղ մայրիկ** – Տեսնո՞ւմ եք, թե ինչ խելոքն է ձագս:

**Արջամուկ** – Խելոք է, հարկավ:  
Իսկ որևէ բան կարո՞ղ է կարդալ:

**Փղի ձագ** – Չե՛մ կարող:

**Արջամուկ** – Հաշվել կարո՞ղ ես:  
Ի՞նչ կանի, ասենք, երկու անգամ երկու:

**Փղի ձագ** – Հի՛նգ:

**Արջամուկ** – Տիկի՛ն Փիղ, ինքս չեմ կարող վերցնել:  
Գնա՛նք տնօրենի կարծիքը հարցնենք:  
Իսկ դո՛ւք, մկնիկնե՛ր, խելո՞ք մնացեք:  
(Գնում են):

**Մկնիկներ** – Վա՛յ, մկնիկնե՛ր, նայե՛ք սրան,  
Ի՛նչ էլ մեծ է, ամա՛ն, ամա՛ն,  
Ի՛նչ խոշոր է, տեսե՛ք, տեսե՛ք,  
Դպրոցի երես չի տեսել:  
Ի՛նչ ամոթ է, ի՛նչ ամոթ,  
Վայ թե շա՛տ է ծուլամորթ:  
Այդքա՛ն խոշոր,  
Այդքա՛ն հսկա,  
Երևի դպրոցի չափ կա,  
Դպրոցից էլ մեծ է երևի,  
Երկրագնդի չափ կլինի:

Ծերունի՛ է նա, ծերունի՛:  
**Փղի ձագ** – Ի՛նչ եք ասում, ինչո՞ւ խաբել,  
Ազնիվ խոսք, ես փղի ձագ եմ:  
Փոքրի՛կ եմ դեռ:  
Եվ ես մեղավոր չեմ հաստատ,  
Որ խոշոր եմ ու մի քիչ հաստ:  
Ծուլլիկ էլ չեմ,  
Մի քիչ դժբախտ եմ պարզապես,  
Որովհետև անուս եմ ես...

(*Լալիս է*):

**Վարդ** – Լաց է լինում փղիկն, ահա,  
Արցունքներն են թափվում առատ,  
Նախ՝ շիթի պես,  
Հետո՝ առվի,  
Հետո՝ գետի նման վարար:

**Փղի ձագ** – Վա՛յ, ի՛նչ մեղք եմ ես,  
Ի՛նչ դժբախտ եմ ես:

**Վարդ** – Արցունքներն ավելի շատացան,  
Ջուրը դասարանում բարձրացավ:  
Մկնիկներն սկսեցին տագնապել...

**Մկնիկ** – Ջրհեղե՛ղ է:

Տեղատարա՛փ:

Մկնե՛ր, մկնե՛ր, ելե՛ք շտապ,

Փրկե՛ք գրքեր ու տետրակներ:

Ի՛նչ փորձանք էր, մենք ի՛նչ անենք,

Դե՛, վե՛րջ տուր քո լացուկոծին,

Արդեն ամեն ինչ թրջեցիր:

Կկորչի մի ողջ դասարան,

Մկնե՛ր, խուտուտ չտա՛նք սրան:

**Վարդ** – Մկներն սկսեցին խտուտ տալ Փղին,  
Սա լացը թողեց, կպավ ծիծաղին:

**Փղի ձագ** – Հի՛-հի՛-հի՛: Հա՛-հա՛-հա՛:

**Վարդ** – Ծիծաղում է Փիղը, ահա,  
Կնձիթը իր ոլորած,  
Քրքջում են մկնիկներն էլ  
Նրա շուրջը բոլորած:

Մեկ էլ, ըհը, դռան բախոց...

(Դռուը ծեծում են):

**Կատու** (Դռան հետևից) – Մկնիկների դպրոցում  
Այս ի՞նչ քրքիջ է:  
Գժվե՞լ եք, ինչ է:  
Քնած էի ես թագավորի պես,  
Երազներ էի տեսնում աննման՝  
Մեկը մյուսից համով, գեղեցիկ,  
Դուք ձեր աղմուկով քունս շեղեցիք:  
Վե՛րջ: Ես այս անգամ ձեր հախից կգամ:

**Մկներ** – Վախենո՞ւմ ենք:  
Մա՛մ ջան, մաաա՛մ...

**Փղի ձագ** – Քա՛հ-քա՛հ-քա՛հ, հի՛-հի՛-հի՛...  
Ա՛յ քեզ ծիծաղ: Փիղ կպայթի:

**Մկներ** – Փղի ձագը ահ չունի Կատվից:

**Փղի ձագ** – Նա ի՞նչ է որ, չնչի՛ն բան է:

**Մկներ** – Սա ոչ ոքից չի վախենում  
Եվ կարող է մեզ պաշտպանել:

**Փղի ձագ** – Դե՛, իհա՛րկե: Լսի՛ր, Կատո՛ւ,  
Մեկ էլ այստեղ չերևաս դու:  
Թե մկներին դիպար մեկ էլ,  
Ուրեմն քո վերջն է եկել:  
Դե՛, փի՛շտ, փախի՛ր:

**Մկներ** – Դե՛, փի՛շտ, դե՛, փի՛շտ:

**Կատու** (Սիրալիիր) – Ծա՛տ կներեք, ազնի՛վ ընկեր,  
Սխալմամբ եմ այստեղ ընկել:  
Մոլորվել եմ, ձիշտ եմ ասում,  
Ինձ Խոզի տանն են սպասում...  
Այստեղ մնալ ես չեմ կարող,  
Ներս կգայի ես մեծ սիրով...  
Գործեր շատ կան ինձ խանգարող...  
Յտեսություն:

(Մկները ծիծաղում են):

**Մկներ** – Տեսե՛ք, խորամանկը փախավ,  
Տրա՛-լա՛-լա՛,

Փղի ձագից սարսափահար,  
Տրա՛-լա՛-լա՛:  
Լեղաձաք ընկավ տանիքից,  
Տրա՛-լա՛-լա՛,  
Ուրախացրեց ամենքիս,  
Տրա՛-լա՛-լա՛...

**1-ին մկնիկ** – Նա դուր է գալիս բոլորիս,  
Թող մնա՛ մեզ հետ սովորի:

**2-րդ մկնիկ** – Սովորելում մենք քեզ կօգնենք:

**3-րդ մկնիկ** – Սրանք տառեր են՝ «Ա»-ն ու «Բ»-ն:

**4-րդ մկնիկ** – Դե, կրկնի՛ր դու՝ «Ա» և «Բ»:

**Փղի ձագ** – «Ա» և «Բ»

**Մկնիկ** – Ա՛յ, շա՛տ ապրես:

**Մկնիկ** – Հիմա կավիճը վերցրու:

**Փղի ձագ** – Սա կավիճ է:

**Մկնիկ** – Ինչո՞ւ կավիճը դու կերար:

**Փղի ձագ** – Կարծեցի, թե շաքար է դա,  
Ուզեցի համս իմանալ:

**Մկնիկ** – Այս սևը գրատախտակ է,  
Գրատախտակին գրում եմ «Կե»-ն:  
«Կե»-ն փոքրիկ կայծակ է կարծես,  
Որ երկնքից է հարվածում:

**Փղի ձագ** – Դու օգնիր ինձ, չի հաջողվում:

**Մկնիկ** – Ծա՛տ լավ, կօգնեմ: Իսկ սա  
«Ու»-ն է:

Կարդում ենք՝ «Կ» և «Ու»:

**Փղի ձագ** – Կո՛ւ:

**Մկնիկ** – «Կ» և «Օ»: Ի՞նչ կկարդաս...

**Փղի ձագ** – Կօ՛: Կօ՛-կո՛ւ-կո՛ւ:

Կօ՛-կօ՛-կօ՛:

Հեշտ չէ, իրոք:

**Մկնիկ** – Դու մի կարծիր, թե դժվար է:

**Փղի ձագ** – Իսկ ես կարող եմ փողհարել:

**Մկնիկներ** – Դու կարողանում ես փողհարե՞լ:

Նույնիսկ նոտաներո՞վ:

**Փղի ձագ –**

Դե՛, իհա՛րկե, նոտաներով:

Դա ի՛նչ է որ:

Տե՛ր իմ Աստված,

Ահա՛, պատին շեփոր է կախված,

Եկեք նվագենք ու երգենք:

Ուշադրութիւն՛,

Սկսում ենք:

*(Երգում են):*

Փողհարում է փիղն ուրախ,

Մկնիկները պարում են,

Պոչիկներով չափ տալիս,

Ուրախ թափահարում են:

Տրա՛-տա՛-տա՛, տրա՛-տա՛-տա՛,

Այդ նվագից ու խաղից

Ծլկում փախչում են հեռու

Կատունները ողջ թաղի:

Մեկտեղ նեղվածք չէ բնավ,

Ընկերներ են փիղ ու մուկ,

Փղիկը շատ է ուրախ.

Մկներն են զվարճանում:

Տրա՛-տա՛-տա՛, տրա՛-տա՛-տա՛,

Այդ նվագից ու խաղից

Ծլկում-փախչում են հեռու

Կատունները ողջ թաղի:

Փղիկը գրել սովորեց:

Գրքից երբեք չի հոգնում:

Հաշվել այնքան չգիտե,

Բայց մկնիկներն են օգնում:

Տրա՛-տա՛-տա՛, տրա՛-տա՛-տա՛.....

**Վերջ**

**ՈՍԿԵ  
ԱՔԼՈՐԻԿԸ**

Թարգմանությունը՝  
**Յուրի Սահակյանի**

# Գործող անձինք

Գայլ  
Աղվես  
Ճուտիկ  
Պապի ձայնը  
Տատի ձայնը  
Կկվի ձայնը



## ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### Պատկեր առաջին

Անտառի կանաչ բացատ: Բազմաթիվ բազմերանգ ձախրող թիթեռներ, հավքերի դայլայլներ: Երաժշտության առաջին իսկ ակորդների հետ թռչունների դայլայլներին միահյուսվում է երգը: Վարագույրը բացվում է:

#### Մուտքի երգ

Քամին սվսվում է,  
Թռչունը երգում է,  
Թիթեռը ձախրում է,  
Ջուրը՝ կարկաչում:  
Արևն աշխարհին  
Նայում ու ժպտում է,  
– Ա՛խ, ի՛նչ հաճելի է  
Լույսի ճաճանչում:

#### Վարագույրը փակվում է:

Թիթեռների պարը: Թփերից լսվում են չարագուշակ ձայներ: Երգն ընդհատվում է: Թիթեռներն անհետանում են, հավքերը սսկվում են: Հայտնվում է ինքն իրեն սարսափազդու, կատաղի ու նենգամիտ երևակայող Գայլը: Գայլի հագուստը ձմռթված է, քայլվածքը՝ անփույթ: Եվ քանի որ նա իրեն համարում է սարսափազդու, կատաղի, նենգամիտ արարած, քայլում է տարօրինակ ու կատաղի մի երգ երգելով:

#### Գայլի առաջին երգը

Սուտ-սուտ լուրեր ու հանցանքներ,  
Թակարդներ ու հալածանքներ...  
Գայլերով են վախեցնում, ահ տալիս:  
Իրականում մենք՝ գայլերս,  
Ոնց էլ գցենք մեր քայլերը,  
Անվնաս ենք խոճկորից ու ճագարից:  
Շներ, փոսեր, կրակոցներ,  
Քսի, քսա, քսքսոցներ,  
Ավազակի համբավ ունենք, մեղք  
չունենք:  
Մենք կռվում ենք արիությամբ  
Հանուն ինքնապաշտպանության,  
Հարձակվում ենք, որ իսկապես  
պաշտպանվենք:  
Այս անման աշխարհի մեջ  
Ո՞նց ասես չեն փնտվում մեզ,  
Անվանարկում են բառերով սպանող:  
Մենք ձեզ խժոռում ագահաբար,  
Բայց արցունք ենք թափում առատ...  
Չլինեիք գոնե այդքան դուք համով:

### **Վարագոյրը բացվում է:**

*Գայլը նկատում է Աղվեսին: Վերջինս նստել է չոր ծառաբնին և կլանված է «Անտառային լուրերի» ընթերցանությամբ:*

*Համայնապատկերն անշարժանում է: Գայլը մոտենում է թիկունքից՝ ձգնելով հասկանալ, թե ի՞նչն է այդպես կլանել Աղվեսին: Գայլը, համբերությունը սպառած, բազմանշանակ հազում է: Աղվեսը բացարձակապես ուշադրություն չի դարձնում: Գայլը թաթով դիպչում է շեկլիկի ուսին: Աղվեսը բարձրացնում է գլուխը:*

**Աղվես (Ձևացնելով)** – Ա՛, այդ դո՞ւ ես, հարևա՛ն: Ի՞նչ ես ուզում:

**Գայլ** – Ի՞նչ պիտի ուզեմ վախեցնելուց, փախցնելուց ու խժոռելուց բացի:

**Աղվես** – Իսկ չէի՞ր ուզենա ազնվորեն վաստակել:

**Գայլ** – Ո՞նց թե՛ ազնվորեն: Այդպես չի լինում:

**Աղվես** – Հիմա դու լսիր:

(Ընթերցում է լրագիրը:)

«Տատի ու պապի  
Խատուտիկ հավիկը մի ձու ածեց»:

**Գայլ** – Պետք է ահաբեկել ու խլել:

**Աղվես** – Օ՛ֆ: Համբերի՛ր ու լսի՛ր շարունակությունը:

**Գայլ** – Լա՛վ, լա՛վ, լսում եմ: Կարդա՛:

**Աղվես** (Կարդում է:–) – «Բայց մկնիկը չանցավ ձվի կողքով, պոչով չդիպավ ձվին, ձուն էլ չընկավ ու չկոտրվեց»:

**Գայլ** – Իսկ ինչո՞ւ:

**Աղվես** (Կարդում է:–) – «Որովհետև այդ պահին մկնիկը ձաշի էր հրավիրված Կատվի տուն»:

**Գայլ** – Երևի համով է եղել:

**Աղվես** – Մեկի համար՝ համով, մյուսի համար...

**Գայլ** – Իսկ այդ Խատուտիկ հավիկը ապրո՞ւմ է: Կա՞:

**Աղվես** – Ապրում է, ապրում: Իսկ դու ինչ-որ բան հասկացա՞ր:

**Գայլ** – Հասկացա՞՛ն էլ ո՞նց: Պապին պիտի ահաբեկենք:

**Աղվես** – Ճի՛շտ է:

**Գայլ** – Տատին պիտի ահաբեկենք:

**Աղվես** – Ճի՛շտ է:

**Գայլ** – Խատուտիկ հավիկին պիտի գողանանք և ուտենք:

**Աղվես** – Ձո՛ն պիտի գողանանք, ձո՛ն, այլ ոչ թե Խատուտիկ հավիկին:

**Գայլ** – Ձուն շատ փոքր է, երկուսիս չի հերիքի: Իսկ հավի՛կը...

**Աղվես** – Ինչքան դու մեծ ես, այդքան խելքդ փոքր է:  
Ախր ձուն հասարակ ձու չէ, ոսկի՛ է, ոսկի՛:  
Հասկացա՞ր:

**Գայլ** – Հասկացա: Ձուն կծախենք, հավ կառնենք ու  
կուտենք: Ճի՞շտ է:

**Աղվես** – Ո՛չ:

**Գայլ** – Ուրեմն՝ ձուն կուտենք ու կսկսենք ինքներս ձու  
ածել: Ճի՞շտ է:

**Աղվես** – Ո՛չ: Մենք ինքներս թուխս կնստենք և  
կունենանք ոսկե ճուտիկ:

**Գայլ** – Ա՛յ քեզ բան: Եվ կուտե՞նք:

**Աղվես** – Դարձյալ՝ ոչ: Ճուտիկը կմեծանա և կդառնա  
մի նոր Խատուտիկ հավիկ:

**Գայլ** – Հրաշալի է: Եվ մենք նրան կուտե՞նք:

**Աղվես** – Ո՛-ո՛-ո՛-չ: Մեր ոսկե հավիկը ամեն օր մեզ  
համար մի ոսկե ձու կածի: Մենք ազնվորեն  
կհարստանանք, ազնվորեն ձեռք կբերենք  
Տատի և Պապի տևակը, ազնվորեն կապրենք  
կվայենք:

**Գայլ** – Ի՛նչ եմ ասել, հա՛: Երբեք մտքովս չէր անցնի,  
որ կարելի է այդպես ազնվորեն կողոպտել  
մարդկանց:

**Աղվես** – Եթե ազնվորեն ես կողոպտում, դա  
կողոպուտ չէ:

*Երաժշտություն:*

*Աղվեսը երգում է: Գայլը ձայնակցում է:*

### **Գայլի ու Աղվեսի երգը**

Բոլորին է վաղուց հայտնի.

Ով չի բռնվել, նա է ազնիվ:

Ով չի բռնվել, նա է ազնիվ:

**Կրկներգ**

Մենք երկուսով բարեհաճ ենք,  
բարետես,  
Ուրիշ ո՞վ կա մեզանից լավ կամ մեզ  
պես:

Մենք չունենք խաբելու  
Եվ ոչ մի հակում,  
Մեր հացն ազնիվ  
Գողությամբ ենք վաստակում:

### **Կրկներգ**

**Աղվես** – Հը՞, ձե՞ռ է տալիս:

**Գայլ** – Էն էլ ո՞նց:

**Աղվես** – Ուրեմն՝ գնացի՞նք: Սկզբում դու կգնաս, իսկ  
ես՝ քեզանից հետո: Կհանդիպենք այս ևույն  
տեղում:

*Երաժշտություն:*

*Գայլը հեռանում է: Աղվեսը պարում ու երգում է  
բարձրաձայն:*

Բոլոր հերոսներն աշխարհի  
Հիմարներ են իսկական:  
Խորամանկներն են աշխարհի  
Հերոսները պատվական:

*Աղվեսը թաքնվում է թփի հետևում:*

### **Վարագույր**

## Պատկեր երկրորդ

Հեռվից լսվում են Պապի ու Տատի ձիչերը:

**Պապ** – Հասե՛ք, բռնե՛ք, փրկե՛ք:

**Տատ** – Օգնությո՛ւն... Կողոպտեցի՜ն... Տարա՜ն...  
Գողե՛ր, ավազակնե՛ր...

Վարագույրը բացվում է: Աղմուկ-աղաղակները մարում են: Բեմ է վազում շնչասպառ Գայլը՝ ճակատին մի մեծ ուռուցք: Թփերի հետևից դուրս է գալիս սուտի կաղացող Աղվեսը:

**Աղվես** (Հեզնելով պապին ու տատին) – Բռնեցե՛ք, օգնեցե՛ք, ավազակնե՛ր... Ամո՛թ է, ամո՛թ... Անհարմար է: Ոնց էլ չեն ամաչում... Ոչ մի կուլտուրա... Օ՛Ֆ... (Դիմելով Գայլին): Ես չլինեի՝ դու ողջ չէիր պրծնի: Ո՛ր է ձուն:

Գայլը բացում է երախը: Երախից խոտերին է գլորվում ոսկե ձուն:

**Գայլ** – Քիչ մնաց կուլ տայի: Հազիվ էի ինձ զսպում:

**Աղվես** – Ծատ էլ լավ էիր անում, որ զսպում էիր: Թե չէ կռթկռթան էիր դառնալու:

**Գայլ** – Չէ, հա՛:

**Աղվես** – Բա ո՞նց: Կսկսեիր կչկչալ՝ կո՛-կո՛-կո...

**Գայլ** – Հավատալս չի գալիս: Սարսափելի դաժան գայլ ու հանկարծ՝ կո՛-կո՛-կո՛...

**Աղվես** – Հերիք կչկչաս: Ծտապ չոր խոտ հավաքիր:

**Գայլ** – Ինչի՞ համար:

**Աղվես** – Բնի համար: Բույն պիտի սարքենք: Ձուն չպիտի հովանա:

**Գայլ** – Հենց հիմա:

Գայլը դուրս է վազում:

**Աղվես** (Գայլի հետևից) – Հիմար՝ հիմարի որդի: Բայց,

ոչինչ, ճուտիկը աշխարհ եկավ թե չէ, ես կա-  
զատվեմ քեզանից: Ես արդեն մի բան մտածել  
եմ:

*Հայտնվում է Գայլը՝ մի խտիտ չոր խոտով:*

**Գայլ** – Որտե՞ղ դնեմ:

**Աղվես** – Ա՛յ, այստեղ: Դե՛, արի բույնը սարքենք:

*Աղվեսն ու Գայլը բույն են սարքում:*

**Աղվես** – Լավ է: Հարմար է: Ձուն դնում ենք բնի  
մեջ: Ա՛յ, այսպե՛ս: Իսկ հիմա էլ արի վիճակ  
զգենք:

**Գայլ** – Ինչի՞ համար:

**Աղվես** – Տեսնենք, թե մեզանից ո՞վ պիտի առաջինը  
թուխս նստի:

**Գայլ** – Թուխս նստե՞լ: Թուխս նստելը տղամարդու  
գործ չէ: Հավերը վրաս կծիծաղեն:

**Աղվես** (*Հառաչելով*) – Ոնց կուզես: Ես ինքս թուխս  
կնստեմ: Ինքս կնստեմ ու Ոսկե ճուտիկն էլ  
իմը կլինի:

**Գայլ** – Դա հո իսկական կողոպուտ է:

**Աղվես** – Դա ազնիվ կողոպուտ է:

**Գայլ** – Դե լա՛վ, լա՛վ: Արի վիճակ զգենք: Միայն թե՛  
ազնվորեն:

**Աղվես** – Բա դա ասելո՞ւ բան է: Չե՞ որ մենք աշխարհի  
ամենաազնիվ ավազակներն ենք: Սկսում  
եմ:

### **Երաժշտություն**

Դու լռում ես՝  
Ես հաշվում եմ:  
Ես հաշվում եմ՝  
Լռում ես դու:  
Դու նստում ես՝

Ես գնում եմ:

Ես գնում եմ

Նստում ես դու:

Ամեն ինչ ձիշտ է: Ես գնում եմ, նստում ես  
դու: Մի քիչ կնստես, կհոգնես, հետո նորից  
կհաշվենք:

**Գայլ** – Դե լա՛վ, գնա զբոսնիր, ես թուխս կնստեմ:

*Գայլը նստում է ձվի վրա:*

**Աղվես** – Տե՛ս, հա՛, խաբել չկա: Տեղիցդ չշարժվես,  
թե չէ ձուն կսառչի, և ոչ մի ձուտ էլ դուրս չի  
գա:

*Աղվեսը հրաժեշտ է տալիս ու երգելով հեռանում:*

**Գայլ** (*Հառաչելով*) – Արի ինքս հաշվեմ: Նրան  
վստահել չի կարելի: Այս ծառը կփոխարինի  
Աղվեսին:

*Սկսում է հաշվելուկը.*

Դու լռում ես՝

Ես հաշվում եմ:

Ես հաշվում եմ

Լռում ես դու:

Դու նստում ես

Ես գնում եմ:

Ես գնում եմ

Նստում ես դու:

*Դուրս է գալիս՝ ոչ թե ես, այլ Աղվեսը պիտի նստի:  
Դա անազնիվ խաղ է:*

Հե՛յ, խափլա՛ն Աղվես, ո՞ւր կորար:

*Հայտնվում է Աղվեսը:*

**Աղվես** – Կանչեցի՞ր ինձ:

**Գայլ** – Կանչեցի՛, կանչեցի՛: Մոտ արի:

**Աղվես** – Հը՞, ի՞նչ կա:



**Գայլ** – Հապա նորից հաշվիր: Ոնց որ թե սխալվել էս:

**Աղվես** – Լա՛վ իմացիր, Աղվեսը երբեք չի սխալվում:

**Գայլ** – Հաշվի՛ր, հաշվի՛ր:

**Աղվես** – Խնդրե՛մ:

Դու լռում ես՝  
Ես հաշվում եմ:  
Ես հաշվում եմ  
Լռում ես դու:  
Դու նստում ես՝  
Ես գնում եմ:  
Ես գնում եմ  
Նստում ես դու:

Հիմա ինքդ ասա, հիմա ինքդ ասա, թե ով է սխալ: Կուզե՞ս նորից հաշվեմ:

**Գայլ** (*Շփոթված*) – Լա՛վ, լա՛վ... Կարիք չկա: Ես քեզ հավատում եմ: Պարզապես, մենակ մնալով, մի քիչ տխրեցի:

**Աղվես** – Տխրեցի՛... Կարծում ես՝ ինձ համար հե՞շտ է անընդհատ այս ու այն կողմ վազվզել: Նստիր ու մի աղմկիր: Թե չէ՝ ձուտը ջղային կձևվի: Դե՛, ես գնացի: Ողջո՛ւյն:

*Աղվեսը հեռանում է երգելով:*

**Գայլ** – Հիմա ի՞նչ անեմ: Ոչ ուտել կարող եմ, ոչ խմել: Բայց շատ եմ սոված: Չեմ կարողանում դիմանալ:

*Երաժշտություն: Գայլի տխուր երգը.*

Նստել եմ ձվին	Գուցե ինքս ինձ
Հավի պես համառ,	Սատարեմ երգով.
Դժվար է թխսկան	Կո՛-կո՛, կո՛-կո՛-կո՛,
Դառնալ ինձ համար:	Կո՛-կո՛-կո՛, կո՛-կո՛:

*Հեռվից լսվում է կկվի կվկվոցը:*

Կկո՛ւ ջան, կկո՛ւ, ես ինչքա՞ն պիտի նստեմ  
այս ձվի վրա:

**Կկու** – Կու-կու: Կու-կու: Կու-կու: Կու-կու....

**Գայլ** (*Բռնելով գլուխը*) – Անհուսությունից խելագարվել  
կարելի է:

*«Տուկ... տուկ... տուկ...», – լսվում է մոտիկից:*

**Գայլ** – Ո՛վ է:

*«Տուկ-տուկ-տուկ...», – կրկնվում է շատ մոտիկից:  
Գայլը ցատկում է տեղից ու նայում է բնին: Կիսված  
ոսկե ձվից դուրս է եկել փափկամազիկ, փումփուշիկ  
ճուտիկը: Զարմանքից Գայլի երախը մնում է բացված:*

**Ճուտիկ** – Բարն՛, մայրի՛կ:

**Գայլ** – Ե՞ս... Ի՞նձ ես ասում: Այսինքն՝ ոչ... Ի՞նչ  
ասեմ... Դե՛, իհա՛րկե... Մոռացել եմ, թե ոնց  
էին ինձ անվանում:

**Ճուտիկ** – Դու իմ հայրի՞կն ես:

**Գայլ** – Հայրի՞կը: Դե՛, իհա՛րկե, հայրիկը... Ավելի  
շուտ՝ հայրիկը: Բայց սպասի՛ր, երբեք ինձ  
այդպես չեն անվանել...

**Ճուտիկ** – Բարև, հայրի՛կ ջան: (*Ցատկում, կոցում է  
Գայլի դունչը*):

**Գայլ** (*Հուզված, շփոթված, աչքերը ձգձգացնելով*) – Ինձ  
այդպես մի՛ անվանիր...

**Ճուտիկ** – Ինչո՞ւ:

**Գայլ** – Ես սարսափելի եմ ու դաժան:

**Ճուտիկ** (*Ծիծաղելով*) – Դո՞ւ ես սարսափելին ու  
դաժանը: Չեմ հավատում: Դու ամենաբարին  
ես, ամենախելոքն ու ամենաուժեղը:

**Գայլ** – Առաջին անգամ եմ լսում: Դու քո ասածներին  
հավատո՞ւմ ես:

**Ճուտիկ** – Իհա՛րկե, հավատում եմ:

**Գայլ** – Ինչո՞ւ:

**Ճուտիկ** – Պարզ չէ՞, թե ինչու: Որովհետև դու իմ հայրիկն ես:

*Երաժշտություն: Ճուտիկը պատվում է Գայլի շուրջը՝ պարելով ու երգելով: Գայլը ծափ է տալիս:*

Գիտեմ, հարմար չէ երևի,  
Գիտեմ, հարմար չէ երևի,  
Բայց ձեզանից, բայց ձեզանից  
Չեմ թաքցնի այսօր,  
Որ իմ բախտը բերել է շատ,  
Որ իմ հայրը բարի է շատ,  
Որ իմ հայրը խելոք է շատ  
Եվ ամենազոր...  
Պիտի ուժեղ լինեմ ես էլ,  
Պիտի խելոք լինեմ ես էլ,  
Պիտի բարի լինեմ ես էլ  
Հայրիկիս նման:  
Եվ նմանվեմ պիտի, այո՛,  
Եվ նմանվեմ պիտի, այո՛,  
Եվ նմանվեմ պիտի, այո՛,  
Հորս աննման...

Հայրի՛կ, իսկ ո՞ր է իմ մայրիկը:

**Գայլ** – Ի՞նչ: Հա՛, դե, իհա՛րկե, մայրի՛կը... Մայրիկը զբոսնում է մոտերքում: Այսինքն՝ նա գնացել է մթերքներ բերելու... (Շփելով ծոծրակը): Ինձ ի՞նչ անվանեց...

**Ճուտիկ** – Բան ասացի՞ր, հայրի՛կ:

**Գայլ** – Հայրի՞կ: Գուցեն՝ հայրիկ... Ես չգիտեմ, թե ինչպես վարվեմ քեզ հետ...

**Ճուտիկ** – Այդքան մեծ ես ու չգիտե՞ս:

**Գայլ** (Հուզված) – Չգիտեմ: Ես երբեք երեխաներ չեմ ունեցել:

**Ճուտիկ** – Ոչի՛նչ: Ընտելացիր ու սկսիր ինձ դաստիարակել:

**Գայլ** (*Սարսափած*) – Դ-ա-ս-տ-ի-ա-ր-ա-կ-ե՛-լ...

**Ճուտիկ** – Հեչ էլ մի վախենա: Ես շատ եմ ուզում, հայրի՛կ: Դե՛, սկսի՛ր:

**Գայլ** – Լա՛վ, սկսում եմ:

**Ճուտիկ** – Մի՛ վախենա: Համարձա՛կ:

**Գայլ** – Սկսում եմ:

**Ճուտիկ** – Ես սպասում եմ, հայրի՛կ:

**Գայլ** – Իսկ ինչի՞ց սկսեմ:

**Ճուտիկ** – Ամենասկզբից: Նախ և առաջ մի անուն տուր ինձ:

*Թփերի հետևից Աղվեսը ծիկրակում է:*

**Աղվես** – Այդպե՛ս, այդպե՛ս: Ուրեմն՝ ձվից դուրս է եկել: Հետաքրքիր է, թե ի՞նչ է կատարվում այստեղ: Չլիևի՞ ուզում են ինձ խորամանկել: (*Կրկին թաքնվում է*):

**Գայլ** (*Մտախոհ*) – Հասկացա: Հիմա դու ճուտիկ ես: Երբ մեծանաս, կդառնաս հավ: Խատուտիկ հավ:

**Ճուտիկ** (*Ծիծաղելով*) – Չէ՛, ես ծիծաղից կմեռնեմ: Իսկական փորձանք են այս հայրիկները:

**Գայլ** – Չհավանեցի՞ր:

**Ճուտիկ** – Ախր դա աղջկա անուն է:

**Գայլ** – Իսկ դու աղջիկ չե՞ս:

**Ճուտիկ** – Աղջիկ չեմ: Տղա՛ եմ: Աբլորի՛կ եմ ես:

**Աղվես** (*Ծիկրակելով թփի հետևից*) – Ա՛յ քեզ դժբախտություն: Ամե՛ն ինչ կորավ: Ամե՛ն ինչ կորավ... (*Թաքնվում է*):

**Գայլ** (*Մտախոհ*) – Եթե դու աբլորիկ ես, ուրեմն՝ երբեք հավիկ չես դառնա:

**Ճուտիկ** – Իհարկե, չեմ դառնա: Ես աքլորիկ եմ:  
Կմեծանամ ու կդառնամ քեզ նման գեղեցիկ  
և ուժեղ աքլոր:

**Գայլ** – Ինձ նման աքլոր՞ր: Դա շա՛տ դժվար բան է:

**Ճուտիկ** – Ոչի՛նչ: Ես չեմ ծուլանա, կաշխատեմ  
նմանվել քեզ ամեն ինչում: Ա՛յ, կտեսնե՛ս:  
Դե՛, ասա՛, ի՞նչ անուն մտածեցիր:

**Գայլ** – Եթե դու հիմա աքլորիկ ես, ապա երբ մեծանա  
կդառնաս մի իսկական կարմրակատար:  
Կարմրակատա՛ր: Հավանեցի՞ր:

**Ճուտիկ** – Ծա՛տ: Դու ուղղակի աննման հայրիկ ես:  
Ծատ խելոք ես և շատ ու շատ լավը:

**Գայլ** – Առաջին անգամ եմ նման բան լսում: *(Ինքն  
իրեն)* Չգիտեմ ինչու շատ հաճելի մի բան  
եմ զգում *(թաթը դնում է կրծքին)* այ այստեղ:  
Սրտի խփոց:

**Աղվես** *(Ծիկրակելով)* – Կորա՛վ, կորա՛վ իմ հարս-  
տուօթյունը: Ի՞նչ անեմ հիմա ես: Հիմա ես ի՞նչ  
անեմ: *(Թաքնվում է):*

**Ճուտիկ** *(Գայլին)* – Դու շարունակի՛ր, շարունակի՛ր:

**Գայլ** – Ի՞նչը շարունակեմ, որդի՛ս: *(Ինքն իրեն)* Վա՛յ,  
էլի մի հաճելի զգացում ունեցա այ այստեղ:  
Սրտի խփոցներ:

**Ճուտիկ** – Ծարունակիր դաստիարակել ինձ:  
Սովորեցրու «ծուղրուղու» կանչել:

**Գայլ** – Ծուղրուղո՞ւ: Ինչպե՛ս: Ախր ես... Բայց դու դեռ  
շատ ես փոքրիկ:

**Աղվես** *(Ծիկրակելով թփերի հետևից)* – Մտածեցի:  
Ստիպված կլինեմ նրան բռնել և ուտել:  
*(Թաքնվում է):*

**Ճուտիկ** – Ծա՛տ եմ խնդրում, հայրի՛կ:

**Գայլ** *(Ինքն իրեն)* – Դարձյալ հաճելի զգացում:  
*(Ճուտիկին):* Կարմրակատար, դու չգիտե՞ս՝

ի՞նչ է այստեղ: (Յույց է տալիս սրտի տեղը):  
Այստեղ ինչ-որ բան է խփում:

**Ճուտիկ** – Սպասիր, լսեմ: (Ականջը դնում է Գայլի սրտին, լսում է): Բում-բում, բում-բում...

**Գայլ** – Հը՞, ի՞նչ կա այնտեղ:

**Ճուտիկ** – Դա քո սիրտն է, հայրի՛կ:

**Գայլ** – Բայց ես անսիրտ էի միշտ էլ: Որտեղի՞ց սիրտը հայտնվեց:

**Ճուտիկ** – Բոլոր իսկական հայրիկները պիտի սիրտ ունենան: Արի «ծուղրուղու» կանչենք:

**Գայլ** (Մտախոհ) – Ի՞նչ արած: Ուրեմն՝ ես իսկական հայր եմ:

**Աղվես** (Ծիկրակելով) – Իսկական տխմար ես: Երբ է կորչելու այստեղից: (Կրկին թաքնվում է):

**Ճուտիկ** (Ճպուռ տեսնելով) – Վա՛յ, սա ի՞նչ է:

*Ճպուռի երաժշտություն:*

**Գայլ** – Դա Ճպուռ է:

**Ճուտիկ** – Ի՞նչ գեղեցիկ է Ճպուռը: Ես երբեք Ճպուռ չեմ տեսել:

**Գայլ** – Արի բռնենք նրան:

**Ճուտիկ** – Արի բռնենք:

*Գայլն ու Ճուտիկը աղմուկով հետապնդում են Ճպուռին:*

**Գայլ** – Ո՞ր կորավ:

**Ճուտիկ** – Չգիտեմ:

*Իսկ այդ պահին Ճպուռը նստում է Գայլի պոչի ծայրին ու թևիկներն է թափահարում: Ճուտիկը նկատում է նրան:*

**Ճուտիկ** – Վա՛յ, հայրիկ ջան:

**Գայլ** – Ի՞նչ է որ:

**Ճուտիկ** – Թո պոչը զարդարվել է ժապավենով:

**Գայլ** (*Շրջելով գլուխը*) – Սուս մնա: Մի՛ աղմկիր: (*Պոչը դանդաղ մոտեցնում է դնչին: Ճպուռը ցատկում ևստում է Գայլի քթին*):

**Ճուտիկ** – Վա՛յ, վա՛յ, հայրի՛կ, հիմա քիթդ կճախրի:

*Գայլը փռչտում է: Ճպուռը դարձյալ ծախրում է բացատի վրա և դարձյալ վերսկսվում է նրա հետապնդումը:*

**Ճուտիկ** – Ո՛ր կորավ Ճպուռը: Ճպուռն ո՞ր կորավ:

**Գայլ** – Ահա՛, բռնեցի՛: Նայի՛ր:

**Ճուտիկ** – Վա՛յ, ի՛նչ փոքրիկն է, ի՛նչ լավիկն է...

**Գայլ** – Արի բաց թողնենք, թող գնա ապրի:

**Ճուտիկ** – Բաց թողնենք, թող գնա ապրի:

**Գայլ** – Թռի՛ր, Ճպո՛ւտ:

**Ճուտիկ** – Թռի՛ր, թռի՛ր, մի՛ վախեցիր:

*Ճպուռը թռչում, պտտվում է մոտակայքում:*

**Գայլ** – Գնա՛, Ճպուռ:

**Ճուտիկ** – Գնա՛, Ճպո՛ւտ: Իսկ հիմա, հայրի՛կ, արի «ծուղրուղուն» սովորենք:

**Գայլ** – Չի՞ լինի, որ դրանով հետո զբաղվենք:

**Ճուտիկ** – Գոնե մի անգամ, հայրի՛կ, շա՛տ եմ խնդրում:

**Գայլ** – Դե լավ, կփորձեմ: (*Հազարով մաքրում է կոկորդը, տնկում է գլուխը, փորձում է կանչել*): Ծու-ու-ու... Ծու-ղու-ու-ու-ու-ու... Չէ՛, չի լինում: Ուժ չի մնացել: Վաղուց ոչինչ չեմ կերել:

**Ճուտիկ** – Հրաշալի «ծուղրուղու» էր: Արի մի բան ուտենք ու սկսենք նորից:

**Գայլ** – Ճիշտ ես ասում, թե չէ փոթրիս մեջ կարծես որդեր են գալարվում:

**Ճուտիկ** – Որդե՞ր: Երևի դրանք շա՛տ համով են:

**Գայլ** – Համո՞վ: Հա... Իհարկե: Անևման բան է: Դու

այստեղ սպասիր, հիմա ես ձիճուներ ու որդեր կբերեմ:

**Ճուտիկ** – Միայն թե շուտ վերադարձիր: Առանց քեզ շատ պիտի տխրեմ:

**Գայլ** (*Ինքն իրեն*) – Օհո՛, նորից հաճելի մի բան զգացի: (*Ճուտիկին*) Չտխրե՛ս, շատ չեմ ուշանա: (*Գնում է*):

*Հայտնվում է Աղվեսը:*

**Աղվես** – Ահա և ես:

**Ճուտիկ** – Վա՛յ, դու ո՞վ ես:

**Աղվես** – Ի՜նչ երեխաներ են մեծանում, իրենց հարազատ մորն էլ չեն ճանաչում:

**Ճուտիկ** (*Նետվում է դեպի Աղվեսը*) – Մայրի՛կ ջան:

**Աղվես** – Չգո՛ւյշ: Մուշտակս կկեղտոտես:

*Ճուտիկը քարանում է տեղում:*

**Ճուտիկ** (*Վախեցած*) – Բարև՛, մայրի՛կ: Ի՜նչ գեղեցիկն ես դու:

**Աղվես** (*Կեղծ քնքշությամբ*) – Բարև՛: Բարև՛, սիրելի՛ս:

*Երաժշտություն: Աղվեսը երգում է՝ իրեն գորովագույթ մայր ներկայացնելով:*

Բարև՛, բարև՛, իմ լա՛վ ճուտիկ,

Իմ անուշի՛կ բալիկ,

Իմ սիրունի՛կ, իմ փումփուշի՛կ

Ճուտի՛կ, չնաշխարհի՛կ:

Իմ սիրո՛ւն բալիկ,

Իմ անո՛ւշ բալիկ,

Ես մայրիկն եմ քո

Շատ գորովալից:

Մենք նման ենք անչափ իրար,

Իրար շատ ենք նման:

Ուրիշ ովքե՛ր կան աշխարհում

Մեր չափ իրար նման:



Իմ սիրո՛ւն բալիկ...  
Դու էլ, ահա՛, ինձ պես շեկվիկ,  
Մեր ցեղից ես, իրո՛ք,  
Մոտի՛կ արի, էլի՛, էլի՛,  
Որ քեզ գրկեմ սիրով:  
Իմ սիրո՛ւն բալիկ...  
Դե մոտեցի՛ր, մոտեցի՛ր ինձ:

*Ճուտիկը մոտենում է վախվորած:*  
Մոտեցի՛ր, մոտեցի՛ր, մի՛ վախեցիր:

**Ճուտիկ** – Ես չեմ վախենում, մայրի՛կ:

**Աղվես** – Դե, ուրեմն, համբուրի՛ր ինձ: Ա՛յ, այստեղ:  
Զգո՛ւյշ: Թարթիչներս չկեղտոտե՛ս:

*Աղվեսը խոնարհվում է: Ճուտիկը զգուշորեն համբուրում է նրան:*

Ի՞նչ նիհարն է, Տեր իմ Աստված: Մսի կտոր չկա վրան:

*Շոշափում է Ճուտիկին:*

**Ճուտիկ** – Ցավացնո՛ւմ ես, մայրի՛կ:

**Աղվես** – Ի՞նչ է, հայրիկդ քեզ չի՞ կերակրում:

**Ճուտիկ** – Նա շուտով ուտելիք կբերի:

**Աղվես** (*Արհամարհանքով*) – Կբերի՛, ո՞նց չէ: Նա միայն իր մասին է մտածում:

**Ճուտիկ** – Նա մտածում է իմ մասին, մայրի՛կ:

**Աղվես** – Իսկ դու ձենդ կտրիր: Էդ էր պակաս, որ ինձ խելք սովորեցնես: Քո հայրիկին ես լավ եմ ճանաչում: Նա մինչև վաղը չի վերադառնա: (*Ստից արտասովորով*): Եվ միշտ էլ այդպես է եղել, միշտ էլ... Գնում, չգիտես ուր է կորչում, իսկ ես նստում եմ միայնակ ու սոված-ծարավ սպասում...

**Ճուտիկ** – Լաց մի՛ լինի, մայրի՛կ, ա՛յ, կտեսնե՛ս, նա շուտով կգա:

**Աղվես** – Չէ՛, մենք նրան չենք սպասի: Գնանք: Ես

ինքս քեզ կկերակրեմ, որդյա՛կս:

**Ճուտիկ** – Բայց հայրիկն ասաց, որ սպասեմ:

**Աղվես** – Իսկ մայրիկն ասում է՝ չենք սպասի:

**Ճուտիկ** – Չգիտեմ ինչ անել: Ո՞ւմ լսեմ հիմա՝  
մայրիկի՞ն, թե՞ հայրիկին:

**Աղվես** – Միայն մայրիկին: Ես քո հարազատ  
մայրիկն եմ: Դա անմիջապես երևում է: Ես  
էլ եմ շեկվիկ, դու էլ: Դու ոչնչով նման չես  
հայրիկին:

**Ճուտիկ** – Հիմա նման չեմ: Մեծանամ կնմանվեմ:

**Աղվես** – Ահա և հայրիկի դաստիարակությունը:  
Դու ինձ չես սիրում: (*Փղձկում է*): Եվ սա իմ  
հարազատ որդին է:

*Աղվեսն աննկատելիորեն պայուսակի մեջ է խոթում  
ձվի ոսկե կճեպները:*

**Ճուտիկ** – Սպասե՛լ, թե՞ չսպասել:

**Աղվես** – Ու դեռ մտածում էլ է: Մե՛ղք եմ, մե՛ղք...  
Դժբա՛խտ եմ, դժբա՛խտ... (*Ինքն իրեն*): Իսկ  
կճեպները ոնց որ թե ոսկի են... (*Փորձում է  
ատամով*): Այո, ոսկի են: (*Կրկին շարունակում է  
լսել*):

**Ճուտիկ** – Լաց մի՛ լինի, մայրի՛կ: Ես կգամ քեզ հետ:

**Աղվես** (*Իբր չորացնելով աչքերը*) – Գնա՛նք, որդի՛ս,  
գնա՛նք: Մայրիկիդ հետ չես կորչի: Մայրիկդ  
քեզ կկերակրի, կչաղացնի, կդարձնի շատ  
համով Ճուտիկ:

*Աղվեսն ու Ճուտիկը գնում են:*

## Վարագույր

*Փակ վարագույրի առջևով անցնում է Գայլը:*

**Գայլ** – Ի՛նչ հաճելի է,  
ի՛նչ հաճելի է շոյել, գուրգուրել,

Ծոյե՛ն, գուրգուրե՛լ որդուն հարազատ:  
Ի՛նչ հաճելի է,  
Ի՛նչ հաճելի է սիրող հայր լինել,  
Ավելի՛ սիրուն, ավելի՛ լավ բան աշխարհում չկա:

### Երգ

Բախտն իմ հանդեպ շատ էր ժլատ,  
Բախտն իմ հանդեպ շատ էր ժլատ,  
Հիմա սակայն դժգոհելու չունեմ առիթ.  
Ես հայրիկ եմ արդեն, հայրի՛կ,  
Ես հայրիկ եմ արդեն, հայրի՛կ.  
Սիրո՛ղ, սիրո՛ղ, սիրո՛ղ, սիրո՛ղ,  
Անչա՛փ սիրող հայրիկ...  
Ա՛խ, իմ որդին սպասում է ինձ ընթրիքի,  
Սպասում է ինձ ընթրիքի նա ժպտերես,  
Հաճելի՛ է, շա՛տ հաճելի է ամենքին,  
Երբ դու պետք ես մեկին անչա՛փ,  
Իսկ մեկն էլ՝ քեզ:

*Փակ վարագույրի առջևով անցնում է երջանիկ Գայլը:  
Վարագույրը բացվում է: Գայլը երգելով հեռանում է  
բեմից:*

## ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### Պատկեր երրորդ

*Բեմում նախորդ գործողության տեսարաններն են:  
Հեռվից լսվում է Գայլի ձայնը:*

**Գայլ** – Ճուտի՛ի՛ի՛կ: Կարմրակատա՛ն՛ա՛ր: Գալի՛ս  
եմ, գալի՛ի՛ի՛ս:

*Հայտնվում է Գայլը՝ ձեռքին մի կապոց: Երգում է:*

Ես որդեր եմ հավաքել,  
Ես որդեր եմ հավաքել...  
Որդուս համար սիրելի  
Ես որդեր եմ հավաքել...  
Հիմա, հիմա իմ որդին  
Կունենա շատ համով կեր...

Օ՛ֆ, հոգնել եմ: Ո՞ր ես, Կարմրակատա՛ր:  
Ո՞ր ես, որդյա՛կս:

*Գայլը շփոթված շուրջն է նայում: Ստուգում է ծառի  
հետևը, թփերի մեջ:*

**Գայլ** – Ճուտի՛կ, այդ ես եմ քո հայրիկը: Քեզ  
համար համով ձիճուններ ու չաղլիկ որդեր  
եմ բերել: Ո՞ր ես, հը՞... (*Հոտոտում է*): Ոնց  
որ թե Աղվեսի հոտ եմ առնում: (*Քայլում է  
բացատրով՝ որոնելով հետքերը*): Դե՛, իհա՛րկե:  
Անցել է այստեղով, հետ է եկել... Իսկ հետո...  
Ո՞ր է գնացել հետո: Ա՛յն կողմ, թե՞ այս...  
(*Գայլը հետ ու առաջ է վազվզում փորձելով  
հասկանալ ու ճշտել ուղղությունը*): Կարծես՝ այս

կողմ... Չէ՛, այն կողմ: Ահա՛ նրա հետքերը, իսկ սրանք ո՞ւմ հետքերն են... Չլինի թե՛ ճուտիկինը: Այո՛, այո՛, սրանք էլ իմ որդու հետքերն են: Աղվեսն է տարել նրան: Ա՛յ քեզ դժբախտություն... Ա՛յ քեզ դժբախտություն... Եթե Աղվեսն իմանա, որ ճուտիկն աքլորիկ է... Այն ժամանակ... Մտածելն իսկ ահավոր է: Նա կուտի իմ որդուն... Կուտի՞: Իմ որդո՞ւն: Իմ Կարմրակատարի՞ն: Դե՛, Աղվե՛ս, սպասի՛ր:

*Վարագույրը փակվում է:*

*Գայլը նետվում է հետապնդելու: Ծարժվում է համայնապատկերը: Հնչում է հետապնդումի տազնապալի երաժշտություն: Գայլը վազում է շնչասպառ: Առաջ անցնելով շարժվող համայնապատկերից՝ նա անհետանում է կուլիսներում: Համայնապատկերը դանդաղորեն անշարժանում է: Բեմում մետաղյա ցանցով վանդակ է: Հայտնվում է Աղվեսը՝ ճուտիկի հետ: Աղվեսը ճուտիկին մոտեցնում է վանդակին: Վարագույրը բացվում է:*

**Աղվես** – Մայրիկը քեզ համար ոչինչ չի խնայի: Այնպե՛ս կերակրեմ, որ... (ճուտիկը մտնում է վանդակ: Աղվեսը սողնակով փակում է դռնակը): Իսկ հիմա՝ սնվում ենք: (Աղվեսն անցնում է վանդակի հետևն ու վերադառնում է մի մեծ հյուսկեն զամբյուղով՝ լի ամեն տեսակի ուտելիքներով): Օ՛Ֆ, ծանր է շատ:

**Ճուտիկ** – Այդ ամենը ե՞ս պիտի ուտեմ:

**Աղվես** (Զամբյուղը տեղավորելով վանդակին մոտիկ) – Բա էլ ո՞վ... Քեզանից բացի ո՞վ ունեմ ես: Կե՛ր, կե՛ր: Միևուձարիս համար ոչինչ էլ չեմ խնայի... Էլ ո՞ր օրվա մայրիկն եմ:

*Աղվեսը դատարկում է զամբյուղի պարունակությունը՝ երգելով:*

Սա քեզ՝ պաշտետ,

Սա քեզ՝ աղցան,  
Սա՝ շոկոլադ:  
Թան՝ մի աման,  
Ջուր՝ մի աման,  
Կե՛ր ու խմի՛ր,  
Իմ անևման:  
Կե՛ր, կե՛ր, չաղացի՛ր  
Կուտես, կճարպոտես, կդառնաս կլոր ու թմբիկ:  
Մի՛ ծուլանա, կե՛ր: Մայրիկդ էլի կբերի:

*Աղվեսը վերցնում է դատարկ զամբյուղն ու հեռանում:  
Ճուտիկը դիտում է մթերքների կոյտն ու հառաչում:*

**Ճուտիկ** – Ուտելիք կա, բայց ատորժակ չկա... Գոնե հայրիկը շուտ վերադառնար ու որդ բերեր: Հայրիկը լավ գիտի, թե ճուտիկին ինչ է հարկավոր: Իմ հայրիկը լավն է, բարի է, նա երբեք ինձ վրա չի բարկանում: Իմ հայրիկը սիրում է ինձ:

## Ճուտիկի երգը

### ԱՄԵՆԱԼԱՎ ՄԱՅՐԻԿԸ

Մանուկներն ուրախ  
Երգում են, պարում  
Մայրերի բարի հայացքների տակ:  
Սակայն լավագույն մայրը աշխարհում,  
Իհարկե, իմ հայրն է հարազատ:  
Մայրը դողում է  
Չավակի համար,  
Նա փրկիչն է մեր, ինչ կուզես, ասա,  
Բայց ամենալավ մայրը աշխարհում,  
Իհարկե, իմ հայրն է հարազատ:  
Հայրս ինձ երբեք  
Վանդակ չէր նետի...  
Նա ոչ մի անգամ մի չար խոսք չասաց...

Չէ՛, ամենալավ մայրը աշխարհում,  
Իհա՛րկե, իմ հայրն է հարազատ:

*Երաժշտությունն աստիճանաբար մարում է:  
Հայտնվում է Աղվեսը՝ լիքը զամբյուղով:*

**Աղվես** (*Նախաստինքով*) – Վա՛յ, դու դեռ ոչինչ չե՛ս կերել: Խեղճ մայրը չարչարվում, կեր է հայթայթում, ինքը համարյա ոչինչ չի ուտում... Իսկ որդին... որդին... (*Աղվեսը լալիս է*): Իսկ որդի՛ն, խնդրե՛մ... Կե՛ր այս պատառը, կե՛ր՝ գոնե մի քիչ սիրտս հանգստանա, կե՛ր՝ հանուն մայրիկիդ:

*Ճուտիկը տհաճությամբ կտցում է մի քանի անգամ:*

**Աղվես** – Ապրե՛ս: Շա՛տ ապրես: Էլի՛ փորձիր: Կեր՝ միս բռնիր... Թե չէ ամբողջովին կաշի ես ու ոսկոր: Այդ ո՛ւմ ես նման:

**Ճուտիկ** – Հայրիկիի՛ն:

**Աղվես** (*Բարկությամբ*) – Հայրիկի՞ն: Հայրիկի՞ն ուրեմն, հայրիկի՞ն: Կե՛ր այս պատառը հայրիկի համար:

**Ճուտիկ** – Հայրիկի՞ համար: Հայրիկի համար դա շատ քիչ է: Կուտեմ ամբողջը:

**Աղվես** – Ի՛նչ սքանչելի տղա ես: Կե՛ր, թանկագինս, կե՛ր: Ինչքան ուտես՝ կբերեմ:

*Ջամբյուղի պարունակությունը կուտակելով վանդակում անընդհատ կրկնում է. «Կե՛ր, կե՛ր, սիրելի՛ս: Կե՛ր, էլի՛ կբերեմ: Կե՛ր՝ ինչքան կարող ես»: Ամբողջովին դատարկելով զամբյուղի պարունակությունը՝ Աղվեսը թեթևացած շունչ է քաշում. «Բարի ախորժակ, սիրելի՛ս, բարի ախորժակ: Ա՛յ, հիմա ես էլ կպատրաստվեմ ընթրիքի»: Աղվեսը տանում է դատարկ զամբյուղն ու վերադառնում մի մեծ դանակ ձեռքին: Նստում է այնպես, որ Ճուտիկը իրեն չնկատի: Նախ պետք է սրել դանակը: (Քարի վրա սրում է դանակը):*

**Ճուտիկ** – Մայրի՛կ, ի՞նչ ես անում:

**Աղվես** – Օձիք եմ կարում քեզ համար, որ կոկորդո  
չմբսի:

**Ճուտիկ** – Ծնորհակալ եմ, մայրի՛կ: Դու շատ հոգա-  
տար մայրիկ ես:

**Աղվես** – Իսկ դու կե՛ր: Կե՛ր, չաղացի՛ր, իմ համո՛վ  
բալիկ:

*Երաժշտություն: Աղվեսը, կանգնելով մարգերի մեջ և  
դառնալով դեպի դահլիճը, երգում է:*

### Աղվեսի տանգոն

Տապակած ճուտիկը,	Ինքդ քեզ մի քիչ
Իհարկե, համով է,	Նախատում ես հետո,
Խորոված ճուտիկը,	Չորս օր, չորս գիշեր
Իհարկե, համով է,	Լալիս ես հետո,
Ինչ խոսք, շա՛տ համով է,	Որ չես պահել
Համո՛վ է, համո՛վ...	Այդ համով ճուտիկից
Չնայած մի քիչ	Գոնե մի կտոր,
Ափսոսում ես հետո,	Գոնե մի կտոր...

*Երաժշտությունը շարունակում է հնչել: Աղվեսը  
պարում է՝ կրկնելով երգի վերջին մասը:*

**Ճուտիկ** – Ինչի՞ մասին էիր երգում, մայրի՛կ:

**Աղվես** – Այն մասին, թե որքան եմ սիրում քեզ,  
որդի՛ս:

**Ճուտիկ** – Ծնորհակալ եմ, մայրի՛կ:

**Աղվես** – Իսկ դու մի՛ շեղվիր, թանկագինս: Կե՛ր՝  
որքան հնարավոր է շատ:

**Ճուտիկ** – Մայրի՛կ, իսկ դու ինչո՞ւ ոչինչ չես ուտում:

**Աղվես** – Նախ՝ դու պիտի ուտես, իսկ հետո ես կուտեմ:  
Ծատ կարևոր է, որ լցվես, չաղանաս: Ես  
շատ եմ սիրում թմբլիկ ճուտիկներին: Հիմա



գևամ կարգի բերեմ օջախը, թավան դնեմ  
կրակին: Բարի ախորժակ, Ճուտի՛կ ջան:

**Ճուտիկ** – Շնորհակալ եմ, մայրի՛կ:

*Աղվեսը գնում է: Բեմ է մտնում շնչասպառ Գայլը:*

**Գայլ** – Ո՞ր է, ո՞ր է իմ Կարմրակատարը:

**Ճուտիկ** – Ուռա՛ւ, հայրիկս եկավ:

**Գայլ** (*Շուրջը աչք ածելով*) – Ո՞ր ես, Ճուտիկս, ես քեզ  
չեմ տեսնում:

**Ճուտիկ** – Այստե՛ղ եմ, այստե՛ղ: Կարկանդակի մոտ:  
Ահա՛, ահա՛:

**Գայլ** (*Մոտենում է վանդակին*) – Ի՞նչ ես անում այդտեղ,  
տղա՛ս:

**Ճուտիկ** – Ուտում եմ քեզ համար:

**Գայլ** – Ինձ համա՞ր:

**Ճուտիկ** – Այո՛, հայրի՛կ: Մայրիկը խնդրեց, որ ուտեմ  
քեզ համար: Հիմա, քանի որ դու եկար, ինքդ  
կեր քեզ համար: Այստեղ լիքը ուտելիք կա:  
Ներս մտիր: Արի ուտենք, չաղանանք:

**Գայլ** – Չաղանա՞նք:

**Ճուտիկ** – Իհա՛րկե, հայրի՛կ: Մայրիկը շատ է սիրում  
չաղիկներին ու հաստլիկներին: Մայրիկը  
քեզ էլ կսիրի, եթե չաղանաս:

**Գայլ** – Շնորհակալ եմ շատ: Ես դրա կարիքը չունեմ  
(*Գայլը բացում է վանդակի դռնակը*): Դո՛ւրս  
արի, որդի՛ս: Շուտ դուրս արի այդտեղից: Ես  
քեզ համար որդեր եմ բերել:

**Ճուտիկ** – Եկա՛, հայրի՛կ: Իմացիր, որ առանց որդերի  
էլ ես քեզ սիրում եմ:

**Գայլ** (*Ինքն իրեն*) – Սիրոսս նորից ջերմացավ: (*Ճու-  
տիկին*) Հիմա ես քեզ կօգնեմ: Ա՛յ, այդպես:

**Ճուտիկ** (*Համբուրում է Գայլին*) – Ես քեզ սպասում էի,  
հայրի՛կ:

**Գայլ** – Ես էլ քեզ էի որոնում, որդի՛ս: Արի շուտ հեռանանք այստեղից, քանի դեռ քեզ չեն կերել:

**Ճուտիկ** – Այդպիսի բան է՞լ է պատահում, հայրի՛կ:

**Գայլ** (*Շփոթված*) – Դեռ պատահում է... Միայն գազանների ու վայրենիների աշխարհում:

**Ճուտիկ** – Մայրիկը գազա՞ն է:

**Գայլ** – Իսկական մայրիկը գազան չի լինի:

**Ճուտիկ** – Իսկ իմ մայրիկը իսկակա՞ն մայրիկ է:

**Գայլ** – Ուզո՞ւմ ես իմանալ:

**Ճուտիկ** – Ծա՛տ եմ ուզում:

**Գայլ** – Հիմա դռնակը կփակենք ու կթաքնավենք: Ծուտով դու ամեն ինչ կիմանաս (*Գայլը փակում է դռնակը*): Իսկ հիմա թաքնվենք այս թփի հետևում: Չաղմկես: Տապ արա ու լսիր:

*Գայլն ու Ճուտիկը թաքնվում են: Երգելով գայլիս է Աղվեսը:*

**Աղվես** – Տապակած ճուտիկը,  
Իհարկե, համով է:  
Խորոված ճուտիկը,  
Իհարկե, համով է,  
Ինչ խոսք, շա՛տ համով է,  
Համո՛վ է, համո՛վ...

*(Կանգնում է վանդակի մոտ)*

Այս ի՞նչ լռություն է... (*Լարում է լսողությունը*):  
Քնել է երևի: Ոչի՛նչ, թող մի քիչ էլ քնի:  
Քնած ժամանակ էլ են չաղանում: Իսկ երբ  
որ արթնանա, ես նրան՝ չիկ: Կղնեմ թավայի  
մեջ, կտապակեմ և կուտեմ փորոտիքների  
հետ: Եվ ոչ մի հայրիկ նրան չի օգնի:

**Ճուտիկ** – Օ՛յ:

**Գայլ** – Սո՛ւս:

**Աղվես** (*Ջգուշավոր*) – Երևի արթնացավ: (*Ճուտիկին*)  
Արթնացա՞ր, Ճուտիկ: (*Ականջ է դնում*) Ձայն  
հանիր... Տարօրինակ է: Չլինի՞ թե շատ  
խորն է քնել: Մտնեմ ստուգեմ:

*Աղվեսը բացում է վանդակի դռնակը ու մտնում է  
ներս: Գայլն անմիջապես փակում է դռնակը:*

**Գայլ** – Ա՛ն քեզ: Կերա՞ր:

**Աղվես** – Ա՛խ, այդ դո՞ւ ես, բարեկա՛մ: Ո՞ր էիր կորել:  
Մեռա քեզ սպասելով, իսկ դու չկաս ու չկաս:  
Իսկ Ճուտիկին ես կարգին բտել եմ արդեն:  
Ո՞ր է: Չի երևում: Պարզ է, որ կերել ես նրան...

**Ճուտիկ** (*Դուրս գալով թփի հետևից*) – Իմ հայրիկը ոչ  
վայրենի է, ոչ էլ գազան, հասկացա՞ր:

**Գայլ** – Հասկացա՞ր:

**Աղվես** – Բա՛ց թող ինձ, Գա՛յլ:

**Ճուտիկ** – Բաց չթողնես, հայրի՛կ, ես վախենում եմ  
նրանից:

**Գայլ** – Մի՛ վախեցիր, որդիս: Բաց չեմ թողնի: Արի  
գնանք այստեղից:

**Աղվես** – Բաց չես թողնի, հա՞: Ուրեմն ես կպատմեմ  
նրան, թե ով ես դու իրականում:

**Գայլ** – Մի՛ պատմիր, Աղվե՛ս: Մի՛ պատմիր, շա՛տ եմ  
խնդրում:

**Ճուտիկ** – Նա ի՞նչ է ասում, հայրի՛կ:

**Աղվես** – Բաց արա դուռը (*ծաղրանքով*), հայրի՛կ...  
Թե չէ...

**Գայլ** – Լա՛վ, լա՛վ: Հիմա կբացեմ: Միայն թե՛ ձայնդ  
կտրիր, շատ եմ խնդրում:

*Գայլը բացում է դռնակը: Աղվեսը ծլկում է վանդակից:*

**Ճուտիկ** – Ինչո՞ւ բաց թողեցիր, հայրի՛կ:

**Գայլ** (*Աղվեսին*) – Գնա՛, գնա՛, հեռացի՛ր: Խնդրում  
եմ:

**Աղվես** – Գնում եմ, գնում: *(Բավական հեռանալով):*  
Հե՛յ դու, սատկելու ապրանք, գիտե՞ս, թե ով է քո հայրը:

**Գայլ** – Չասե՛ս, չասե՛ս: Չէ՞ որ խոստացար:

**Աղվես** – Քո հայրիկը, տխմա՛ր արարած, Գա՛յլն է, Գա՛յլը:

**Գայլ** *(Գլխահակ)* – Այո՛, Կարմրակատա՛ր: Այդպես է: Ես Գայլն եմ:

**Ճուտիկ** *(Հիացմունքով)* – Ի՛նչ հրաշալի անուն է:

**Աղվես** *(Ճուտիկին)* – Ոչինչ էլ չես հասկանում: Գայլը գազան է, վայրենի մի գիշատիչ:

*Աղվեսը հեռանում է: Գայլը կանգնել է գլխահակ:*

**Ճուտիկ** – Գազա՞ն: Հայրի՛կ, դու իսկապե՞ս վայրենի գազան ես:

**Գայլ** *(Դժվարությամբ)* – Այո՛, որդի՛ս... Այսինքն՝ ոչ: Ես մի ժամանակ էի գազան... Իսկ հիմա...

**Ճուտիկ** – Է՛իս, հայրի՛կ, հայրի՛կ, ինչո՞ւ ինձ ոչինչ չես ասել...

**Գայլ** – Վախենում էի: *(Հառաչելով)* Իսկ հիմա արդեն ոչինչ չես շտկի: Ների՛ր ինձ, որդի՛ս:

### **Վարագույրն իջնում է:**

*Գայլը հեռանում է գլխահակ: Համայնապատկերը շարժվում է դանդաղորեն: Գայլը երգում է իր տխուր երգը:*

Ի՛նչ հաճելի էր,

Ի՛նչ հաճելի էր՝ շոյել, գուրգուրել,

Ծոյել, գուրգուրել որդուն հարազատ:

Ի՛նչ հաճելի էր,

Ի՛նչ հաճելի էր բարի հայր լինել,

Ավելի հուզիչ, ավելի լավ բան աշխարհում չկար:

Բախտն իմ դարձյալ շատ է ժլատ,

Բախտն իմ դարձյալ շատ է ժլատ,  
Կարծում էի՝ դժգոհելու չկա առիթ,  
Բայց ես դարձա նախկին հայրիկ,  
Բայց ես դարձա նախկին հայրիկ,  
Թեկուզ սիրող, սիրող, սիրող,  
Հազար անգամ սիրող հայրիկ.

*Գայլը կանգնում է ու հառաչում.*

**Գայլ** – Էի՛, Ճուտիկ, էի՛... Հիմա ի՞նչ անեմ առանց քեզ: Հիմա ես ոչ հայրիկ եմ, ոչ էլ գայլ և այլևս որդի չունեմ... Ոչ ոք չունեմ... Իսկ եթե աղվեսը վերադառնա՞: Ի՞նչ հիմարություն... Ի՞նչ հիմարություն: Ա՛յ քեզ փորձանք...

*Գայլը շտապ հետ է դառնում և անհայտանում շարժվող համայնապատկերից առաջ անցնելով: Հայտնվում է շփոթված ու վշտացած Ճուտիկը:*

**Ճուտիկ** (*Հառաչելով*) – Հիմա ես հայրիկ էլ չունեմ: Իմ հայրիկն այնքան լավն էր, այնքան բարի... Իսկ ես նրան չհավատացի... Վշտացրի նրան իմ անվստահությամբ: Հիմա ես ո՞ւմ եմ պետք...

*Հայտնվում է Աղվեսը:*

**Աղվես** – Ինչպե՞ս թե՛ ում ես պետք: Ի՞նձ ես պետք: Ես մեծագույն հաճույքով կխժռեմ քեզ ընթրիքի ժամանակ: (*Մոտենում է Ճուտիկին*):

**Ճուտիկ** – Չմոտենա՛ք: Հայրիկիս կկանչեմ:

**Աղվես** – Ինչքան ես եմ քո մայրիկը, նույնքան էլ նա է քո հայրիկը:

**Ճուտիկ** – Միևնույն է, նա սիրում է ինձ:

**Աղվես** – Իսկ ես քեզ ավելի շատ եմ սիրում, իմ համով-հոտով:

*Մոտենում է Ճուտիկին:*

**Ճուտիկ** – Հայրիիի՛կ: Հայրիիի՛կ, օգնի՛ր ինձ...

*Թփերի հետևից դուրս է նետվում Գայլը:*

**Գայլ** – Այստե՛ղ եմ, որդի՛ս: Մի՛ վախենա: *(Աղվեսին)*  
Կորի՛ր այստեղից: Ծո՛ւտ:

**Ճուտիկ** – Կորի՛ր այստեղից: Ծո՛ւտ:

**Գայլ** *(Աղվեսին)* – Կորի՛ր այստեղից: Թե չէ ես քեզ...  
մի լավ դաս կտամ:

**Ճուտիկ** – Թե չէ՛ մենք քեզ մի լավ դաս կտանք:

**Աղվես** – Այնքան էլ քեզ մի երևակայիր, որ հայրդ  
հայտնվեց:

**Ճուտիկ** – Իսկ ինչո՞ւ չերևակայեմ: Չէ՞ որ հայրիկս  
վերադարձավ: Հայրի՛կ, իսկ ո՞վ է իմ  
մայրիկը:

**Գայլ** – Ես հիմա կողեկցեմ քեզ Տատի ու Պապի տուն,  
քո իսկական մոր՝ Խատուտիկ Հավիկի մոտ:

**Ճուտիկ** – Եվ կմնա՞ս մեզ հետ:

**Աղվես** – Նա ո՞ւմ է պետք այնտեղ:

**Ճուտիկ** – Ինձ: Կմնաս, չէ՞, հայրի՛կ: Կմնաս, չէ՞:

**Գայլ** – Կմնա՛մ, որդի՛ս: Կմնամ: Կապրեմ բակում և  
կաշխատեմ որպես շուն: *(Աղվեսին)* Եվ այն  
ժամանակ փորձիր երևալ մեր կողմերում:  
Գնա՛նք, որդի՛ս:

*Գայլի մի ականջը կախվում է, պոչը՝ ոլորվում, և նա,  
վերափոխվելով, դառնում է շուն:*

**Ճուտիկ** – Գնա՛նք, հայրի՛կ:

*Համայնապատկերը շարժվում է: Անտառով քայլում  
են Գայլն ու Ճուտիկը: Նրանք հեռանում են երգելով:*

### Երկուսով

Իրար հետ քայլում ենք,

Իրար հետ երգում ենք,

Իրար հետ ամեն ինչ

Հեշտ է ավելի:

**Ճուտիկ** – Հիմա դու ինձ հետ ես:

**Գայլ** – Հիմա ես քեզ հետ եմ:

**Ճուտիկ** – Երբ մենք իրար հետ ենք...

**Գայլ** – Հեշտ է ավելի:

### **Երկուսով**

Ինչ էլ որ լինի, մենք,  
Ոնց էլ որ լինի, մենք  
Կփրկվենք, կեննենք մենք  
Դավ ու ցավերից:

**Ճուտիկ** – Դու հիմա ինձ հետ ես:

**Գայլ** – Ճիշտ որ, ես քեզ հետ եմ:

**Ճուտիկ** – Երբ մենք իրար հետ ենք...

**Գայլ** – Հեշտ է ավելի:

Առանց քեզ այլևս  
Չեմ կարող ապրել ես,  
Մանկան ժպիտից լավ  
Ի՞նչ կա ավելի,  
Քանզի մանուկները  
Մեր կյանքի զարդերն են:

**Ճուտիկ** – Մեր կյանքի զարդերն են:

**Գայլ** – Հույս ու լույսով լի:

*Վարագույրը փակվում է: Դերասանները դուրս են գալիս միջևորմի հետևից և երգում են երգի վերջին տունը:*

**Վ ե ր ջ**





**ԵՐԲ**  
**ԾԱՂԿՈՒՄ Է**  
**ՄԱՐԳԱՐՏԱԾԱՂԻԿԸ**

# Գործող անձինք

Բաղ  
Երեք բաղիկ  
Արջուկ  
Նապաստակ  
Փայտփորիկ  
Ավանակ  
Աղվես

## ԱՌԱՋԻՆ ՏԵՍԱՐԱՆ

### ԻՆՉԻ ԵՆ ՊԵՏՔ ԾԱՂԻԿՆԵՐԸ

*Կանաչ բացատով՝ նոր ծլած մատղաշ խոտերի միջով  
քայլում է Բաղը, հետևից՝ երեք բաղիկ:*

**Բաղ** – Կը՛ն-կը՛ն, բաղիկներս,  
Անուշիկ ու լավիկներս,  
Պահպանեք շարք շիտակ,  
Լավ նայեք ոտքերի տա:

*Բոլորը լցվում են ջուրը, նախ՝ Բաղը, իսկ հետո՝  
բաղիկները:*

**Բաղ** – Կը՛ն-կը՛ն, բաղիկներս,  
Անուշիկ ու լավիկներս,  
Ինչ անում եմ, նույնը արեք,  
Սուզվել, լողալ մի ալարեք:

**Բաղիկներ** – Նույնիսկ հոսանքը վարար  
Ահավոր չէ մայրիկի հետ:  
Սուզվում, լողում եևք ահա,  
Հետ չենք մնում մայրիկից մեր:

**Բաղ** – Կը՛ն-կը՛ն, բաղիկներս,  
Անուշիկ ու լավիկներս,  
Մի՛ խառնվեք, մի՛ շփոթվեք,  
Շա՛տ, շա՛տ ապրեք, ձագուկներս:

*Բաղը դուրս է լողում բացատ: Կարգը պահպանելով՝  
նրան են հետևում երեք բաղիկները:*

**Բաղիկ** – Էլ ի՞նչ անենք, մայրի՛կ անգին:

**Բաղ** – Ինչ մայրիկը հրահանգի:

Չորացրեք ոտքեր, թևեր,

Ուղիղ շարքով ինձ հետևեք:

**Բաղիկներ** (*Թոթափելով իրենց վրայից ջուրը՝ նորից շարք են կազմում*) – Էլ ի՞նչ պիտի անենք հիմի:

**Բաղ** – Բլրից այն կողմ բացատ կա մի,

Տեսնենք բացատում արևկա

Արդեն բացված ծաղիկ չկա՞...

**Բաղիկներ** – Մայրի՛կ, ասա՛, մենք չգիտենք,

Ծաղիկները ինչի՞ են պետք:

**Բաղ** – Որպեսզի ծաղկեն ու բուրեն,

Ուրախություն մեզ նվիրեն:

*Բաղերի շարանը խոտերի միջով շարժվում է առաջ:*

## ԵՐԿՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

*Արջուկը նստած է բացատում: Դիմացից հայտնվում են Բաղը և բաղիկները:*

**Բաղիկ** (*Նկատելով Արջուկին*) – Նայեք, նայեք դեպի ձախ, Ծաղիկ չէ՞ սա՝ դունչը կախ:

**Բաղ** – Չագուկներ ջան, Արջուկն է դա,  
Մի քիչ քնկոտ ու փնթփնթան:

**Արջուկ** (*Դժվարությամբ բարձրացնում է թաթերից մեկը*).  
– Հոո՛ւ պ... (*Թաթն ընկնում է*) Լաա՛վ: Ուրեմն՝  
դու չե՞ս ուզում: Հիմա էլ դու փորձիր: (*Փորձում է բարձրացնել մյուս թաթը*): Դե՛, սկսեցիկք,  
հոո՛ւ պ... (*Թաթը անզգայացած ընկնում է ցած*):  
Պարզ է, ուրեմն դու էլ չես ուզում: Լա՛վ, հիմա  
դու մի անգամ էլ փորձիր: (*Ամեն ինչ կրկնվում է նույնությամբ*): Տեսնում եմ, որ ոչ մեկդ էլ չեք  
ուզում արթնանալ... Դե լավ, ի՞նչ արած...  
(*հորանջում է և նորից պատրաստվում քնելու*):

**Բաղ** (*Մոտենում է բաղիկների հետ*) – Հե՛յ, Արջո՛ւկ, ի՞նչ  
ես անում, Արջո՛ւկ:

**Արջուկ** (*Բերանը լայն բացած՝ հորանջելով*) – Ի՞նչ եմ  
անում... փորձում եմ արթնացնել թաթիկ-  
ներս... իսկ նրանք արթնանալ չեն ուզում:  
(*Հետ է ընկնում, որպեսզի նորից քնի*):

**Բաղ** – Արջո՛ւկ, հե՛յ, Արջո՛ւկ, շուտ արթնացիր...

**Արջուկ** (*Վախից ցնցվելով վեր է ցատկում*) – Ճիշտ եմ  
ասում, հիմա ինքներդ կհամոզվեք: (*Թաթին*)  
Ծատ եմ խնդրում, արթնացի՛ր: (*Արջուկը մի  
քիչ բարձրացնում է թաթը, որը թուլացած ընկնում  
է ցած*): Իսկ դո՞ւ: Միգուցե դո՞ւ փորձես, հը՞...  
(*Մյուս թաթն էլ է ընկնում*): (*Բաղին*) Ուղքերս

չեն ուզում տեղից շարժվել... այնպես որ,  
քնելուց բացի, ոչինչ չեմ կարողանում անել,  
որովհետև *(երգում է)*։

Արջուկն առանց, Արջուկն առանց,  
Արջուկն առանց թաթի  
Չի կարող իր մեջքը բորել,  
Եթե մեղուն խայթի:

Արջուկն առանց, Արջուկն առանց,  
Արջուկն առանց թաթերի  
Ո՛չ կարող է փախչել կովից,  
Ո՛չ կարող է պարել:

*(Նորից է ուզում քնել):*

**Բաղ** – Լսի՛ր, Արջո՛ւկ... Արևը վաղուց է բարձրացել...  
Ճի՞շտ է, ձագուկներս:

**Բաղիկներ** – Արևն արդեն տաք է, տաք,  
Մենք շոգում ենք նրա տակ:

**Արջուկ** – Գուցե շատ է բարձրացել արևը, գուցե շատ  
է տաքացել արևը: Բայց որ թաթիկներս չեն  
ուզում... Ի՞նչ անեմ: (Հորանջելով պառկում  
է կրկին):

**Բաղ** *(Փորձում է բարձրացնել Արջուկին: Փորձում է  
նստեցնել նրան:)* – Խոտերը բարձրացել են,  
տերևները կանաչել են, հավքերը երգում են,  
ձի՞շտ է, ձագուկներ՛ր ջան:

**Բաղ** *(երգում է)* – Աշխարհը ծաղկում է,  
Հավքերը երգում են:

**Արջուկ** – Գուցեն երգում են: Ի՞նչ կարող եմ անել:  
Ես մեղավոր չեմ: Թաթերս ինձ չեն  
ենթարկվում... *(Նորից է ընկնում):*

**Բաղ** *(Հրում է նրան)* – Դե լա՛վ, բավական է... Բա դու  
ձմռանը չե՞ս սովածացել, ի՞նչ է...

**Արջուկ** – Սովածացե՛լ: Սպասի՛ր, սպասի՛ր... Ինչ

ասացի՞ր: Իհա՛րկե, իհա՛րկե, ես սովածացել  
եմ: Այո, շա՛տ եմ սովածացել...

**Բաղ** – Ես հիմա կարթնացնեմ թաթերդ: *(Մի քիչ հետ  
է գնում):* Վա՛յ, տե՛ս ինչ հրաշալի սևկեր կան  
այստեղ:

**Բաղիկներ** – Վա՛յ, վա՛յ, տես՝ ինչքա՛ն սևկեր կան  
այստեղ:

**Արջուկ** – Սևկե՛ր: Թա՛րմ, համո՛վ, գարնանային  
սևկե՛ր:

**Բաղիկ** – Այդքան սունկ երբեք չեմ տեսել:

**Բաղ** – Սևկեր համով,  
Սևկեր գարնան,  
Ո՞ւմ եք ուզում  
Բաժին դառնալ:

**Արջուկ** – Իհարկե, ինձ... Խնդրում եմ, մի քանի սունկ  
տվեք ինձ... Ա՛խ, իմ թաթիկները... Գոնե մի  
սունկ...

**Բաղ** – Չէ՛, չենք կարող: Մենք շտապում ենք: Բայց  
այստեղ ես մի սկյուռ եմ տեսնում, որ ուզում է...

**Արջուկ** – Սկյուռիկը... *(Արագ վազում է դեպի սևկերը):*  
Վա՛խ, ի՛նչ համով են... *(Կանգնում է հետևի  
թաթերի վրա: Կանգնում է, բարձրացնում է մի թա-  
թը, հետո մյուսը):* Ուռա՛: Արթնացան... Ուռա՛ ...

**Բաղ** – Արթնացա՛ն:

**Բաղիկներ** – Արթնացա՛ն:

**Արջուկ** – Հոգիս դուրս եկավ, մինչև սրանց արթնաց-  
րի... Կարծում էի՝ էլ վերջ, մնում է պառկեմ ու  
քնեմ... Որովհետև *(երգում է)։*

Արջուկն առանց, Արջուկն առանց,  
Արջուկն առանց թաթի...

**Բաղիկներ** – Գիտե՛նք... Գիտե՛նք... *(Շարունակում են երգը)։*

Չի կարող իր մեջքը բորել,  
Եթե մեղուն խայթի:

Արջուկն առանց, Արջուկն առանց,  
Արջուկն առանց թաթերի  
Ոչ կարող է կանգնել ոտքի,  
Ոչ կարող է հաղթել:

**Արջուկ** – Իսկ հիմա... *(Վեր է ցատկում, անշնորհք պարում է)* Ես շատ ապրեմ... Արժե, որ մի սունկ էլ ստանամ... *(Ծուրջն է նայում):* Իսկ սևկերն ո՞ր կորան...

**Բաղ** – Բացատի որևէ մասում...

**Արջուկ** – Ճիշտ է, ճիշտ է, սևկերը երևի թաքնվել են բացատի որևէ անկյունում: Եվ քանի որ նրանք այնտեղ են, պետք է որոնել նրանց: Իսկ ես ուզո՞ւմ եմ սունկ որոնել, թե՞ չեմ ուզում... Չգիտեմ: *(Բաղիկներին)* Գուցե դո՞ւք եք ուզում սունկ որոնել: Հը՞...

**Բաղիկներ** – Մենք ուզո՞ւմ ենք սունկ որոնել, հը՞...

**Բաղ** *(Բաղիկներին)* – Դուք երևի մոռացե՞լ եք, թե ուր եք գնում:

**Բաղիկներ** – Ո՛չ... ո՛չ... Մենք չենք ուզում սունկ որոնել: Ուզում ենք իմանալ՝ ծաղկե՞լ են ծաղիկները, թե՞ ոչ...

**Արջուկ** – Իսկ ես ուզո՞ւմ եմ իմանալ՝ ծաղկե՞լ են ծաղիկները, թե՞ ոչ... Ուզո՞ւմ եմ, թե՞ չեմ ուզում: Այդ ծաղիկները վարդագույն, կապույտ, նուրբ ծաղիկնե՞ր են... Ուզո՞ւմ եմ: Ես էլ եմ գալիս ձեզ հետ:

*Բոլորը միասին ձանապարհվում են: Առջևից բաղն է: Նրանից հետո՝ բաղիկները, իսկ ամենավերջում՝ Արջուկը:*

**Բաղ** – Կըռ-կըռ, բաղիկներս,  
Անուշիկ ու լավիկներս,  
Պահպանեցեք շարքը շիտակ,  
Լավ նայեք ձեր ոտքերի տակ:

**Վերջին Բաղիկ** *(Ծրջվում է դեպի Արջուկը և խորհրդա-*



*վոր ձայնով հարցնում)* – Իսկ դու գիտե՞ս, թե ի՞նչ է ծաղիկը:

**Արջուկ** (*Նույնպես խորհրդավոր*) – Այդ ծաղիկ կոչվածը նուրբ մի բան է, կպար թե չէ՝ կկոտրվի:

**Բաղիկ** (*Առջևից գնացող Բաղիկին*) – Ծաղիկ կոչվածը նուրբ մի բան է, կպար թե չէ՝ կկոտրվի..

**Բաղիկ** (*Իր առջևի Բաղիկին*) – Ծաղիկ կոչվածը ինչ-որ նուրբ մի բան է, կպար թե չէ...

*Հեռանում են տեսադաշտից:*

## ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

### ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՎԱԽԻ ԴԵՄ

*Ահա և Նապաստակը: Կանգնել է բացատում, իսկ մոտակա ծառի վրա նստել է Փայտփորիկը... Իրար հետևից հայտնվում են Բաղը, բաղիկները և Արջուկը:*

**Փայտփորիկ** (Նապաստակին) – Սկսե՞մ:

**Նապաստակ** (Փայտփորիկին) – Սկսի՛ր...

*(Փայտփորիկը կտցահարում է ծառը):*

**Փայտփորիկ** – Տուկ-տուկ...

**Նապաստակ** (Ամեն հարվածից հետո ցնցվում է և սարսափահար, սարսափահար ցատկում մինչև ծառի կատարը: Փայտփորիկին): Դադարեցրո՛ւ... դադարեցրո՛ւ, խնդրում եմ:

*(Փայտփորիկը դադարեցնում է կտցահարելը):*

**Նապաստակ** – Չէ՛, չէ՛, սպասի՛ր: Հենց աղմուկ եմ լսում, սարսափից վեր եմ ցատկում, երկնքին եմ նայում:

**Փայտփորիկ** – Սկսե՞մ:

**Նապաստակ** – Սկսի՛ր:

**Փայտփորիկ** – Տուկ-տուկ...

**Նապաստակ** (Ցատկում է մինչև ծառի կատարը և այնտեղից գոռում) – Դադարեցրո՛ւ... (Ընկնում է գետնին): Այսքան փոքրիկ կենդանի և այսքան մեծ ականջներ, կարծես լոկատորներ լինեն. ամենափոքր շշուկն անգամ որսում են: Դե արի ու վախից մի ցատկոտիր: (Փայտփորիկին): Գուցե խցկեմ ականջներս...

Հը՞... Եթե խցկեմ, ոչինչ, ոչինչ չեմ լսի ու ոչ մի բանից էլ չեմ վախենա... *(Կապում է ականջները):* Պատրա՛ստ:

**Փայտփորիկ** – Տուկ-տուկ...

**Նապաստակ** *(Նապաստակը ցատկում անցնում է ծառից և կրկին ու կրկին աղմուկով ընկնում գետնին) –* Օ՛ֆ...

*(Փայտփորիկը նայում է Նապաստակին ու վախենում է այլևս կոցահարել):*

**Բաղ** *(Մոտենալով) –* Բարև, Նապաստակ: Ի՞նչ ես անում:

**Նապաստակ** – Վախի դեմ միջոցներ եմ որոնում: Դա բոլոր նապաստակների համար պարտադիր է, բայց, ափսոս, ոչինչ չի հաջողվում: Գուցե դո՛ւք օգնեք, հը՞:

**Բաղ** – Իհարկե, մենք անպայման կօգնենք:

**Արջուկ** – Բայց ինչպե՞ս:

**Բաղիկներ** – Բայց ինչպե՞ս:

**Նապաստակ** – Շատ հասարակ: Արջուկ, դու կնստես իմ ոտքերի վրա: Բաղն ու Բաղիկը կկախվեն իմ բեղիկներից ու կձգեն ներքև, իսկ մյուս երկու բաղիկները կխցկվեն ականջներիս մեջ, որ ոչինչ չլսեմ... Արեք այնպես, ինչպես սասաղի:

**Փայտփորիկ** – Պատրա՛ստ ես:

**Նապաստակ** – Պատրա՛ստ եմ:

**Փայտփորիկ** – Տուկ-տուկ...

**Նապաստակ** *(Կրկին ցատկում է մինչև ծառի կատարը, բայց այս անգամ բոլորին տանելով իր հետ):*

**Արջուկ** – Տեսա՞ք, ես երբեք այսքան բարձր չեմ ցատկել:

**Բաղիկներ** *(Ծիծաղում են նրա վրա:)* – Արժե, որ դրա համար սունկ ստանաս:

**Արջուկ** – Ո՞ր է սունկը:

**Նապաստակ** (*Այնքան բարձր է թռել, որ նոր է ընկնում Արջուկի վրա*) – Վա՛խ...

**Արջուկ** (*Դժվարությամբ բարձրանալով*) – Ինձ թվում է, թե ես պիտի «վախ» ասեի և ոչ թե նա:

**Նապաստակ** (*Հուսահատ*) – Տեսնում եք, չէ՞: Ամեն ինչ զուր է...

**Բաղ** – Լսի՛ր, եթե նույնիսկ բոլոր կենդանիներին հավաքենք ու միասին նստենք վրադ... Եթե նույնիսկ սար կպցնենք պոչիդ... Եթե նույնիսկ քեզ հաջողվի վեր-վեր չցատկել, միևնույն է, քո սիրտը վախից ցնցվել է:

**Նապաստակ** – Ա՛խ, իմ ականջները... Ա՛խ, իմ երկար ականջները...

**Բաղ** – Ականջներդ մեղավոր չեն, հասկացի՛ր: Մեղավորը սիրտդ է... Դու պետք է սի՛րտդ վարժեցնես և ոչ թե ականջներդ:

**Բաղիկներ** – Սիրտդ և ոչ թե ականջներդ:

**Նապաստակ** – Ո՞նց վարժեցնեմ... Նապաստակի սիրտ է, չէ՞:

**Բաղ** – Հիմա կասեմ: Դու և Փայտփորիկը ընկերներ եք, չէ՞:

**Նապաստակ** – Ճիշտ է: ընկերներ եմք:

**Բաղ** – Եվ դու, իհարկե, ուրախանում ես, երբ հանդիպում ես նրան:

**Նապաստակ** – Ո՞նց չուրախանամ, շա՛տ եմ ուրախանում:

**Բաղ** – Ուրեմն՝ լսիր, հենց որ լես Փայտփորիկի թակոցը, ասա՝ սիրտ ջան, սա իմ բարեկամն է, մի՛ վախեցիր, և սիրտդ չի ցնցվի, որովհետև սիրտը բարեկամներից չի վախենում...

**Նապաստակ** – Ուրեմն ես նրան պետք է անմիջապե՞ս ասեմ՝ սա իմ բարեկամն է...

**Բաղ** – Հենց այդպես...

**Բաղիկներ** – Հենց այդպես:

**Արջուկ** (*Բաս ձայնով*) – Հենց այդպես:

**Նապաստակ** (*Փայտփորիկին*) – Սկսի՛ր:

**Փայտփորիկ** – Տուկ-տուկ...

**Նապաստակ** (*Քիչ է մնում վեր ցատկի, բայց անմիջապես գոռում է՝ բարեկամս է... բարեկամս... (Մնում է տեղում և կասկածով շուրջն է նայում)*): Վեր թռա՛, թե՛ չէ:

**Արջուկ** – Կարծես թե չէ: Բայց եթե հարցնում ես, գուցե և վե՛ր ես թռել:

**Բաղ** – Նապաստակը վեր չթռավ:

**Բաղիկներ** – Նապաստակը վեր չթռավ:

**Նապաստակ** – Իսկ որևէ բան վրաս ցնցվե՞ց, օրինակ, ականջներս կամ բեղիկներինս ծայրերը:

**Բաղ** – Ո՛չ, ի՛նչ ես ասում, ոչինչ էլ չցնցվեց:

**Բաղիկներ** – Ոչինչ էլ չցնցվեց:

**Նապաստակ** – Ա՛յ քեզ բան... (*Երգում է*).

Ես չեմ երկնչի, ես չեմ վախենա,  
Ես չեմ դողդողա ահ ու սարսափից:  
Հենց որ ինձ ասեն՝ բարեկամ է նա,  
Սիրտս կսկսի բաբախել հանգիստ...

Մորեխները խոտերի մեջ  
Ինձ ընկեր են ու բարեկամ,  
Խլուրդները խոր բներում  
Ընկեր են ինձ ու բարեկամ,

Կաչաղակները շատախոս,  
Փայտփորիկները ջանասեր,  
Եղնիկները արագավազ,  
Ընկեր են ինձ ու բարեկամ,  
Ընկեր են ինձ ու բարեկամ:

(*Հոգոց է հանում*): – Ընկե՛ր, բարեկա՛մ, ի՛նչ հրաշալի բառեր են:

**Արջուկ** (*Նապաստակին*) – Մենք էլ ենք քո ընկերները:  
Ա՛յ, դու երգում էիր... Դու երգում էիր Կաչա-  
ղակի, Մորեխի, Խլուրդի մասին, իսկ Արջու-  
կի, բաղիկների մասին՝ ոչ մի խոսք:

**Բաղ** – Փոքրիկներն ավելի հեշտ են ընկերանում:

**Արջուկ** – Դե, ուրեմն, քանի որ մենք ընկերներ ենք,  
դու էլ արի մեզ հետ: Կգաս, չէ՞:

**Նապաստակ** – Իսկ դուք ո՞ւր եք գնում:

**Բաղիկներ և Արջուկ** – (*Պարում են ու երգում*).

Մենք ուզում ենք իմանալ,  
Այնտեղ, ծանոթ բացատում,  
Դեռ չի՞ ծաղկել ծաղիկն այն,  
Որ առաջինն է ծաղկում:

**Նապաստակ** – Խաղաղ, ամոթխած, անուշիկ ծա-  
ղիկները:

**Բաղիկներ և Արջուկ** – Այո՛:

**Նապաստակ** – Իհարկե, ես էլ կգամ ձեզ հետ:

*Բարեկամները ճանապարհվում են: Առջևից գնում է  
Բաղը, նրան հետևում են բաղիկները, ապա՝ Նապաս-  
տակը, Նապաստակին՝ Արջուկը:*

**Բաղ** – Կը՛ռ-կը՛ռ, բաղիկներս,  
Կը՛ռ-կը՛ռ, լավիկներս,  
Պահպանեցեք շարքը շիտակ  
Եվ լավ նայեք ձեր ոտքի տակ:

**Վերջին Բաղիկ** (*Նապաստակին՝ խորհրդավոր*) – Իսկ  
դու գիտե՞ս, թե ի՞նչ է այդ ծաղիկ կոչվածը:

**Նապաստակ** – Ծաղիկը այնպիսի մի բան է, որից  
չպետք է վախենալ:

**Բաղիկ** (*Առջևից գնացող Բաղիկին*) – Ծաղիկն այնպիսի  
մի բան է, որից չպետք է վախենալ:

**Բաղիկ** – Ուրեմն՝ ծաղիկն այնպիսի մի բան է...

*Բարեկամները հեռանում են:*

# ՉՈՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԱՎԱՆԱԿԸ ՃԳՆՈՒՄ Է ԴԱՌՆԱԼ ՀՄԱՅԻՉ

**Ավանակ** (Կանգնել դիտում է իրեն՝ մի կտոր ապակում: Ժապավեններ է կապում իր ականջներին, դիտում է իրեն աջից ու ձախից...) – Ասում են, որ այս բոլորը դատարկ բաներ են, բայց, իմ կարծիքով, եթե դու հարգում ես ուրիշներին, պետք է հետևես քո գեղեցիկ արտաքինին... (Լարում է հին գրամոֆոնը: Հնչում է երաժշտություն հիշեցնող ինչ-որ աղմուկ):

Այդ պահին նրա մոտ կանգնում են Բաղը, Բաղիկները, Արջուկը և Նպաստակը:

**Ավանակ** (Բարձրից դիտելով վերջիններին) – Ժամանակակից պարեր են... (Պարում է անձոռնի շարժումներով: Պարելու ընթացքում ներկաներին հիշեցնում է իր պարած պարերի անվանումները): Հը՞, ի՞նչ կասեք:

**Բաղիկներ** (Խմբով յուրաքանչյուր անվանումից հետո) – «Թվիստն» ի՞նչ է, մայրի՛կ: Ի՞նչ է նշանակում «Չա-չա-չա»... Իսկ «Շեյքն» ի՞նչ է...

**Բաղ** (Նախատիկով) – Նախ և առաջ ի՞նչ պետք է ասել:

**Բաղիկներ** – Ի՞նչ պետք է ասենք: Բարի օր...

**Ավանակ** – Իսկապես, բարի օր... Թող տարօրինակ չթվա, ժամանակակից պարեր են, չափազանց հետաքրքիր (շարունակելով պարել)...

Լսվում են բարեկամների ձայները:

Այո... Իսկ ինչո՞ւ չէ... Ի՞նչ կա որ... Ի վերջո... Այնուամենայնիվ... Չեմ կարծում... Վերջապես...

**Արջուկ** – Վերջապես մենք գնացինք...

**Ավանակ** (*Ծփոթված ընդհատում է պարելը:*) – Ինչպե՞ս թե: Չե՞ք ուզում մնալ...

**Արջուկ** – Ո՛չ, ինչո՞ւ մնալ... Մենք ընդհանրապես ուզում էինք գնալ (*Ուզում են գնալ*)...

**Ավանակ** (*Փակելով նրա ծանապարհը*) – Բացի սրանից՝ ուրիշ բաներ էլ գիտեմ... (*Եվ մինչ պարան է ամրացնում ծառից ծառ՝ շարունակում է խոսել*): Սա անչափ հետաքրքիր է... Հիմա կտեսնեք... Միայն թե մի քիչ սպասեք... Երկու ամիս անընդհատ միայն սրանով եմ զբաղվել... Դա անչափ հետաքրքիր է... (*Ներկաների շփոթված հայացքների տակ վերցնում է ձիպոտը, բարձրանում պարանի վրա և ցուցադրում լարախաղացի իր վարպետությունը*): Ահա, տեսնում եք...

**Բադ** – Անմիջապես ցած իջիր:

**Բադիկներ** – Մայրի՛կ, նա հիմա կընկնի...

**Ավանակ** (*Հանդիսավորությամբ հայտարարում է*) – Հիմա կցուցադրեմ հատուկ թռիչք... (*Անշնորհք մի պտույտ անելով՝ ընկնում է գետնին: Բոլորը հավաքվում և են օգնում նրան ոտքի կանգել*):

**Բադ** – Ինչի՞ համար են այդ անհեթեթությունները...

**Նապաստակ** – Երևի լավ ընկնելու համար...

**Ավանակ** (*Դժվարությամբ ոտքի ելնելով՝ հուսահատ երգում է*).

Օ՛ֆ, հոգնել եմ, իմ թանկագին,

Հոգնել եմ անչափ,

Երբ ասում են՝ ավանակից

Անմիտը չկա:

Որ նման բան էլ ինձ չասեն,

Տեսնում եք՝ ինչի՞ եմ հասել...



Լավ կլիներ, որ այսուհետ  
Ասեին, իրոք,  
Ավանակի նման խելոք  
Էլ չկա ոչ ոք:

*(Սրբում է արցունքները):*

**Բաղ** – Լաց մի՛ լինի, Իշո՛ւկ ջան:

**Բաղիկներ** – Լաց մի՛ լինի, Իշո՛ւկ ջան:

**Նապաստակ** – Ինչ որ մենք տեսանք, շատ հե-  
տաքրքիր էր:

**Արջուկ** – Այո՛, շատ էր հետաքրքիր:

**Բաղ** – Դրա համա՛ր էիր ուզում զուգվել ժապավեն-  
ներով և ուլունքներով:

**Ավանակ** – Ուզում էի մի քիչ առանձնահատուկ ու  
հմայիչ դառնալ...

**Բաղ** – Գիտե՞ս ինչ, արիտեսներք, թե ինչպիսին կլինես  
առանց այդ ավելորդ զարդարանքների:  
*(Հանում է նրա ականջներին կապված ժապա-  
վենները):* Ի՛նչ գեղեցիկ ականջներ են...  
*(Հանում է ուլունքները)* Ի՛նչ գեղեցիկ գլուխ է,  
ինչ գեղեցիկ պարանոց... Այսպես դու ինձ  
ավելի ես դուր գալիս:

**Ավանակ** – Իսկապե՞ս... Քո կարծիքով չե՞մ դառնում  
սովորական մի ավանակ...

**Նապաստակ** – Ի՛նչ ես ասում, այդպես դու իրոք  
շա՛տ լավն ես...

**Արջուկ** – Դե, գնացիք... Որովհետև... Արդեն ժա-  
մանակն է... Պետք է տեսնել:

**Բաղ** – Մենք ուզում ենք տեսնել ծաղկե՛լ են ծաղիկ-  
ները, թե՞ չէ:

**Արջուկ** *(Ցույց տալով ավանակին)* – Ինձ թվում է...

**Բաղ** – Քեզ ի՛նչ է թվում, Արջո՛ւկ:

**Արջուկ** *(Ցույց տալով ավանակին)* – Որ նա արդեն մեր

ընկերն է: Մեր ընկերը: Թող նա էլ մեզ հետ  
գա...

**Բաղ** – Դու ուզո՞ւմ ես մեզ հետ գալ, Քուռա՛կ:

**Բաղիկներ** – Դու ուզո՞ւմ ես գալ մեզ հետ:

**Ավանակ** – Դուք ուզում եք, որ սովորական... նույնիսկ  
շատ ձանձրալի մի ավանակ գա՞ ձեզ հետ:

**Բաղ** – Լսի՛ր, Իշո՛ւկ ջան, բարեկամների համար  
նշանակություն չունի, թե ով ինչպիսին է,  
նրանք պարզապես սիրում են իրար:

**Ավանակ** – Ուրեմն մենք բարեկամներ՞ր ենք:

**Արջուկ** – Մենք բոլորս... բարեկամներ ենք:

**Ավանակ** – Գալի՛ս եմ... (*Ուրախացած*): Գալի՛ս եմ...

**Բաղ** – Կը՛ռ-կը՛ռ, բաղիկներս,  
Անուշիկ ու լավիկներս,  
Պահպանեցեք շարքը շիտակ  
Ու լավ նայեք ձեր ոտքի տակ:

**Վերջին Բաղիկ** (*Ավանակին*) – Իսկ դու գիտե՞ս ինչ  
բան է ծաղիկը:

**Ավանակ** (*Բաղիկին*) – Ծաղիկն այնպիսի մի բան է,  
որին բոլորն են ուշադրություն դարձնում,  
չնայած որ...

*Բարեկամները հեռանում են:*

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

*Աղվեսը, որ միշտ օգուտ է փնտրում նրանց հաշվին, ուվքեր օգուտ չեն փնտրում, զգուշորեն ու դանդաղ հետևում է բարեկամներին:*

**Աղվես** – Ո՞ւմ են փնտրում այդ բաղիկները... Ո՞ւմ են պետք այդ ծաղիկները: Ամենևին էլ բանի պետք չեն... Ա՛յ, բաղիկները ուրիշ բան... Նրանց կարելի է ուտել: Երբ ես յուղածաղիկներ եմ տեսնում, թվում է, թե դրանք բաղիկներ են... Բաղիկներ...

Անտառի մեջ ամենքն էլ  
Մի լավ բան են երազում,  
Մեղավո՞ր եմ, որ ես էլ  
Բաղիկներ եմ երազում:

Կը՛ռ-կը՛ռ, բաղիկներ,  
Անուշիկներ, լավիկներ,  
Թե լցվեք փորս հիմի,  
Ամեն ինչ լավ կլինի:

Ես սիրուն եմ ու խելոք,  
Զգուշավոր ու համառ,  
Ինչե՛ր ասեք չեմ քաշի,  
Անուշիկներ, ձեզ համար:

Կը՛ռ-կը՛ռ, բաղիկներ,  
Անուշիկներ, լավիկներ,  
Թե լցվեք փորս հիմի,  
Ամեն ինչ լավ կլինի:

Ես հիմա գևամ նրանց հետևից, պետք է  
նրանց հետևեմ:

## ՎԵՑԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

*Առաջին Մարգարտաձաղիկը:*

*Մեր բարեկամները շարունակում են իրենց ճանապարհը: Բացատում երևում է Մարգարտաձաղիկի ցողունը՝ դեռևս չբացված կոկոններով: Առաջինը Նապաստակն է նկատում:*

**Նապաստակ** – Տեսե՛ք, տեսե՛ք... Ահա՛ նա:

**Բաղիկներ** – Մայրի՛կ, սա՞ է ծաղիկը:

**Բաղ** – Մարգարտաձաղիկը... Առաջին Մարգարտաձաղիկը:

**Բաղիկներ** – Վա՛յ, ի՞նչ լավիկն է:

**Բաղիկ** – Իսկապես, եթե դիպչես, նա կկոտրվի:

**Բաղիկ** – Իսկապես, նրանից չպետք է վախենալ:

**Բաղիկ** – Իսկապես, թեկուզ նա լուռ է, մենք ուշադրությամբ ենք դիտում նրան:

**Արջուկ** – Այո, ծաղիկներն այդպիսին են:

*Բոլորը շրջան են կազմում Մարգարտաձաղիկի շուրջը, սկսում են երգել ու պարել:*

Առաջին, առաջին,  
Ամենաառաջին ծաղիկը,  
Մարգարտաձաղիկ ծաղիկը,  
Ամենասիրուն ծաղիկը...  
Առաջին, առաջին,  
Ամենաառաջին ծաղիկը,  
Մարգարտաձաղիկ ծաղիկը....

**Նապաստակ** – Նա դեռ չի ծաղկել, դեռ պետք է ծաղկի... Կտեսնեք, թե ինչպես կգեղեցկանա, երբ բացվի ամբողջովին:

**Բաղիկներ** – Մայրի՛կ, մայրի՛կ, իսկ մենք կտեսնե՞նք,  
թե ինչպես է նա ծաղկում:

**Բաղ** – Կտեսնե՞նք: Անպայման կտեսնենք: Վաղն  
առավոտյան մենք նորից կգանք այստեղ:

**Արջուկ** – Իսկ վաղը ինձ ո՞վ պիտի արթնացնի:

**Նապաստակ** – Մենք:

**Բաղիկներ** – Իսկ եթե գիշերը ծաղկին մի բա՞ն պա-  
տահի:

**Ավանակ** – Ես կմնամ ու կպահպանեմ նրան:

**Բաղ** – Ո՞վ պետք է նեղացնի ծաղկին: Հիմա մենք  
բոլորս կգնանք տուն, իսկ վաղը նորից  
կվերադառնանք:

*Բարեկամները հեռանում են:*

**Աղվես** (*Դուրս գալով թաքստոցից*) – Առաջին Մարգար-  
տածաղիկ... Տեսնենք, թե ի՞նչ կլինի վաղը,  
երբ ծաղկի ձեր այդ Մարգարտածաղիկը:  
Հի՛, հի՛, հի՛... Վաղը կտեսնենք... Վաղն  
առավոտյան...

## ՅՈՒԹԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Հաջորդ առավոտյան Մարգարտաձաղիկն արդեն ծաղկել է: Գալիս է Աղվեսը:

**Աղվես** – Իսկ հիմա տեսնենք կկարողանա՞մ բաղիկներին բռնել: *(Սկսում է անխղճորեն պոկոտել Մարգարտաձաղիկի թերթիկները):* Կկարողանա՞մ, թե՞ ոչ... Այո... Ոչ... Այո... Ոչ... *(Զայրացած):* Ա՛խ, ուրեմն՝ ոչ... Դու համարձակվում ես ինձ «ոչ» ասել... *(Պոկում, տրորում է ծաղկաթերթիկները):* Հիմա ոչ ոք ինձ չի կարողանա ոչ ասել... Միևնույն է, ես նրանց կուտեմ... Իսկ մինչ այդ հարկավոր է մյուսների հախից գալ... Նապաստակի բանը հեշտ է, կծկի, ու վերջ: Բա Արջու՞կը... Ըհը, ոնց որ թե հևարը գտա... Ավանակի հարցն էլ կլուծեմ: Իսկ հիմա՝ գործի: *(Գնում է):*

## Ութերորդ Տեսարան

Արջուկը քնած է բացատում: Գալիս է Աղվեսը՝ մի զամբյուղ լի սևկով: Զգուշորեն մոտենում է Արջուկին ու զամբյուղը դնում նրա թաթերի արանքում:

**Աղվես** – Հակավոր է արթնացնել նրան, քանի դեռ չեն եկել նրա բարեկամները: (Թաքնվում է ծառի հետևում և կանչում նմանակելով բադիկներին):  
Արջո՛ւկ:

**Արջուկ** (Շարժվում է) – Այդ դո՛ւք եք, բադիկներ: (Շուրջն է նայում): Ոչ ոք չկա:  
Դեռ կարելի է քնել: (Քնում է):

**Աղվես** – Արջո՛ւկ... (Համոզվելով, որ Արջուկն արթնացավ, հեռանում է):

**Արջուկ** – Զարմանալի է... Ոչ ոք չկա: Իսկ գուցե պետք է ավելի լավ արթնանալ: (Թաթին) Սկսենք, հո-ո՛ւպ... (Թաթը բարձրանում և ընկնում է սևկով լի զամբյուղի վրա: (Բայց, միևնույն է, ինչ-որ մեկը... Ինչ-որ մի բան կա այստեղ... (Բարձրանում ու դիտում է զամբյուղը): Սունկ... (Երգում է).

Համով սևկեր,  
Սիրուն սևկեր,  
Ինչ-որ մեկին  
Կդառնաք կեր:

Խոսքը իմ մասին է, իհարկե: (Շտապ-շտապ, ախորժակով ուտում է բոլոր սևկերը, և հանկարծ փորն սկսում է ուռչել: Արջուկը փորձում է ոտքի կանգնել, բայց ընկնում է փորի վրա): Տարօրինակ է... Ինչ-որ մի բան ինձ ձգում է գետնի... Ինչ որ մի բան...

*(Դարձյալ ընկնում է գետնին):*

**Բաղ** – Արջո՛ւկ, դու արդեն պատրա՛ստ ես:

**Արջուկ** – Պատարաստ եմ, այո՛... Բայց ինչ-որ մի բան... *(Փորձում է ոտքի կանգնել, ըկնում է):*  
Ինչ-որ մի բան ինձ խանգարում է:

**Բաղիկներ** – Մայրի՛կ, ինչո՞ւ է Արջուկի փորը ուռել փուչիկի պես:

**Բաղ** – Ի՞նչ է պատահել, Արջո՛ւկ:

**Արջուկ** – Ոչ թե ինձ, այլ փորիս... *(Դարձյալ բարձրանում է և ընկնում):* Մի ամբողջ զամբյուղ սունկ...

**Բաղ** – Պարզ է, դու այնքան սունկ ես լցրել փորդ, որ ոտքերդ քեզ չեն պահում:

**Արջուկ** – Ըհը... Դրա համա՛ր է, ուրեմն, որ փորս ինձ դեպի ցած է ձգում...

**Բաղ** – Ա՛խ, Արջո՛ւկ, Արջո՛ւկ, ինչո՞ւ ես այդքան շատ սունկ կերել:

**Արջուկ** – Ես մտածեցի, որ բարեկամներից մեկնու-մեկն է բերել, եթե չուտեմ, կնեղանա:

**Բաղիկներ** – Մենք էլ առանց Արջուկի կզևանք Մար-գարտաձաղիկը տեսնելու:

**Արջուկ** – Առանց ի՞նձ:

**Բաղ** – Ուզում եք թողնե՞լ մեր բարեկամին:

**Արջուկ** *(Վախեցած)* – Ուզում եք ինձ թող...

**Բաղիկներ** – Ո՛չ... Ո՛չ... Չե՛նք ուզում և չե՛նք թողնի:

**Բաղ** – Գնանք կանչենք Նապաստակին, որ մեզ օգնի: *(Դուրս է գնում):*

**Արջուկ** – Վատ եմ... Շատ վատ եմ... Պառկում եմ թե չէ, աչքերս մթնում են:

*Հորանջում է ու քնում:*



# ԻՆՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԱՋԱՏ ՊԱՏՎԱՆԴԱՆ ԱՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

**Աղվես** – Բարի լույս... Ա՛խ, ի՜նչ լավն եք դուք այսօր:

**Ավանակ** – Իսկապե՞ս:

**Աղվես** – Ինչո՞ւ եք ինձ վիրավորում... Մի՞թե կասկածում եք ասածներիս:

**Ավանակ** – Ամենևին, բայց...

**Աղվես** – Դուք այնքան գեղեցիկ եք, որ նույնիսկ ուզում եմ ձեզ մի լավ առաջարկություն անել: Անտառում մի ազատ պատվանդան եմ գտել արձանի համար: Շատ կուզենայի, որ դուք զարդարեիք այդ պատվանդանը... Եթե, իհարկե, դեմ չեք....

**Ավանակ** – Ես չգիտեմ... Ես... Սպասում եմ... *(Ավելի վճռակալն)*: Ես սպասում եմ իմ բարեկամներիս: Այսօր բոլորս միասին պետք է տեսության գևանք Մարգարտաձաղիկին:

**Աղվես** – Ինչ Մարրրրրրրրրրրրրգրարտաձաղիկիկ: Այնտեղ՝ դիմացի բացատում...

**Ավանակ** – Այո, հենց այնտեղ:

**Աղվես** – Հենց հիմա այնտեղից եմ գալիս: Նա ծաղկելու մտադրություն բոլորովին չունի: Այնպես որ... Գնանք... Իսկ ես կզգուշացնեմ ձեր բարեկամներին, և նրանք կգան քեզանով հիանալու *(Հրում է առաջ)*:

**Ավանակ** – Բայց ես... նույնիսկ չգիտեմ, թե ինչ է արձանը:

**Աղվես** – Եթե դուք արձան դառնաք թեկուզ երկու

ժամով, ապա բոլորը կսկսեն հիանալ ձեզանով: Դուք անմիջապես կդառնաք գեղեցիկ ու հմայիչ, անսման, անկրկնելի ավանակ: *(Ամեն նախադասությունից հետո առաջ է մղում Ավանակին):*

**Ավանակ** – Ե՛ս...

**Աղվես** *(Կողքի նայելով)* – Օ՛Ֆ, ի՛նչ տխմարն է: *(Ավանակին)* Դո՛ւք, իհա՛րկե, դո՛ւք:

**Ավանակ** – Եվ ես ոչի՞նչ չպետք է անեմ դրա համար:

**Աղվես** – Ոչի՛նչ: Արձանները կանգնում են անշարժ առանց ծպտուն հանելու, առանց ժպտալու: *(Նա անընդհատ առաջ է մղում Ավանակին):*

**Ավանակ** – Ինչո՞ւ...

**Աղվես** *(Կողքի նայելով)* – Իսկապես որ ավանակ... *(Ավանակին):* Որովհետև բոլորին էլ հասկանալի կդառնա, որ արձանները նման են բոլոր բոլորին: Դե, գնացի՛նք... *(Հրում է Ավանակին):*

**Ավանակ** – Բայց ես չգիտեմ... Կկարողանա՞մ...

**Աղվես** – Ամեն մեկն էլ կկարողանա... Իսկ քեզ նման Ավանակը՝ առավել ևս:

Կարևորը, որ բախտոդ բերի: Գնա՛նք, շո՛ւտ: Հարկավոր է շտապել:

**Ավանակ** – Բայց...

**Աղվես** *(Ավելի ջղայնանալով):* – Գնացի՛նք, գնացի՛նք... Ահա՛ և այդ տեղը: Կանգնում ես բլրակի վրա և չես շարժվում: Ինչ էլ որ քեզ տան, ինչ էլ որ տեսնես, մի՛նույն է, մի՛ շարժվիր: Հենց որ շարժվեցիր, բոլորն էլ կհասկանան, որ դու ընդամենը մի շատ սովորական ավանակ ես:

**Ավանակ** – Բայց ես իրոք Ավանակ եմ:

**Աղվես** – Իսկ դու արդեն ավանակ չես լինի:

**Ավանակ** – Ոչ որ չի հասկանա՞, որ արձանը Ավանակն է:

**Աղվես** – Ոչ որ: Դե՛, հպարտորեն կանգնի՛ր բլրի վրա:

**Ավանակ** (*Կանգնում է իր սովորական տեսքով:*) – Այսպե՞ս:

**Աղվես** – Մի քիչ ավելի գեղանի:

**Ավանակ** – Այսպե՞ս:

**Աղվես** – Դու ոչինչ էլ չես հասկանում այդ գործից (*Բարձրանում է բլրի վրա ու կանգնում անհեթեթ դիրքով:*) Այսպե՛ս:

**Ավանակ** (*Սարսափած*) – Այդպե՞ս...

**Աղվես** (*Անվրդով*) – Այո՛, կանգնի՛ր... (*Ցույց է տալիս դիրքը:*) Ահա՛, հրաշալի է... (*Հեռանում է:*)

**Ավանակ** (*Կանգնած է անհեթեթ դիրքով*) – Իսկ իմ բարեկամները...

**Աղվես** – Ես նրանց կուղարկեմ այստեղ: (*Բավականությամբ*) Որպեսզի հիանան քեզանով: (*Հեռանալով ինքն իրեն:*) Հի՛, հի՛, հի՛... Վա՛յ, ինչ տխմար անասուն է: Այդպես էլ գիտեի, որ կհամոզեմ այդ Ավանակին: Արջուկի հախից եկել եմ... Սա կմնա այստեղ մինչև իրիկուն: Նապաստակը կձողոպրի, հենց որ ինձ տեսնի... Բաղը ոչինչ անել չի կարողանա, իսկ բաղիկները... Բաղիկները... (*Երգում է.*

Կը՛ռ-կը՛ռ, բաղիկներս,

Կըռ-կըռ, լավիկներս,

Թե լցվեք փորս հիմի,

Ամեն ինչ լավ կլինի:

(*Դուրս է գնում:*)

## ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

*Արջուկը փորձում է մեկ անգամ ևս:*

*Բացատ: Դեպի Արջուկն են շտապում Նապաստակը  
Բաղը և բաղիկները:*

**Բաղ** – Արջուկ, դու նորի՞ց ես քնել: Արջո՛ւկ...

**Բաղիկներ** – Արջո՛ւկ:

**Նապաստակ** – Արջո՛ւկ:

*(Արջուկը բարձրանալու փորձ է անում և նորից  
ընկնում բերանքսիվայր):*

**Բաղ** (Նապաստակին) – Ահա՛, տեսնո՛ւմ ես:

**Նապաստակ** (ճոճում է գլուխը) – Այո՛, վիճակը շատ  
լուրջ է:

**Բաղ** – Մենք պետք է որոշենք մեր անելիքը:

**Նապաստակ** (Արջուկին) – Դու իսկապե՞ս ուզում  
ես տեսնել, թե ինչպես է ծաղկել Մարգար-  
տածաղիկը:

**Արջուկ** – Ես շատ եմ ուզում, բայց ոտքերս չեն ուզում:

**Բաղ** – Ես մի հետաքրքիր բան եմ մտածել, Նապաս-  
տակ ջան, միայն թե պիտի ինձ օգնես:  
*(Մելոդրամատիկ ձայնով)* Վա՛յ, սա իմ միակ  
հնարավորությունն է: *(Ինչ-որ բան է շշնջում  
Նապաստակի ականջին):*

**Նապաստակ** – Չգիտեմ կհամաձայնի՞ր Արջուկը թե ոչ:

**Բաղ** – Երևի այդպես այնքան էլ հարմար չէ:

**Արջուկ** (Պատասխանում է ընդմիջումներով) – Ոչինչ...  
Համենայն դեպս... Ես էլ եմ... ձեզ հետ  
զալիս...

*Եվ դարձյալ բոլորի առջևում Բաղն է, նրանից հետո՝  
բաղիկները, նրանց հետևից գլորվում է Արջուկը,  
ամենավերջում՝ Նապաստակը՝ հրելով Արջուկին:*

**Բաղ** – (Երգում է).

Կը՛ռ-կը՛ռ, բաղիկներ,  
Անուշիկ ու լավիկներ,  
Պահպանեցեք շարքը շիտակ  
Եվ լավ նայեք ձեր ոտքի տակ:

*Բարեկամները հեռանում են:*

**Աղվես** – (Երգում է).

Կըռ-կըռ, բաղիկներ,  
Անուշիկներ, լավիկներ,  
Թե լցվեք փորս հիմի,  
Ամեն ինչ լավ կլինի...

# ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

## ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ԱՎԱՆԱԿ ՄԵԱԼ

*Ավանակը կանգնել է բլրակի վրա ու վախենում է շարժվել: Նրա շուրջը պտտվում են բազում իշամեղուներ, իսկ Ավանակը ոնց որ քարացած լինի: Իշամեղուն նստում է նրա ականջին... Հետո դնչին... և վերջապես թռչում, հեռանում է:*

**Ավանակ** – Օ՛ֆ, լավ եղավ, որ թռավ գնաց: Հետաքրքիր է՝ ինչի տեղ դրեց ինձ... Երևի կարծեց, թե արձան եմ, թե չէ անպայման կխայթեր: Իսկ եթե բարեկամներս գան... Նրանք էլ ինձ արձանի տեղ կդնեն և ոչ թե ավանակի... Չե՛մ ուզում... Չե՛մ ուզում... Նրանք ինձ սիրում են այնպես, ինչպիսին ե՛մ... Աղվեսն ասում է, որ արձաններով հիանում են... Նա ոչ մի անգամ չասաց, որ արձաններին սիրում են: Իսկ ես շատ եմ ուզում, որ ինձ սիրեն և ոչ թե հիանան: Չե՛մ ուզում արձան մնալ: Ավելի լավ է ավանակ լինել լազատ ու բարեկամների շրջապատում... *(ԴՎարությամբ իջնում է բլրակից):* Օ՛ֆ, ամբողջ մարմինս է թմրել... Հիմա ո՞ւր գնամ: Դե, իհարկե, բարեկամներիս մոտ... *(Երգում է՝ հեռանալով):*

Առաջին, առաջին,  
Ամենաառաջին ծաղիկը,  
Մարգարտածաղիկը,  
Ամենասիրուն ծաղիկը...

*(Գնում է):*

## ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

*Պոկված Մարգարտաձաղիկից քիչ հեռու՝ հողաթմբի հետևում, թաքնվել է Աղվեսը: Հայտնվում են Բաղը, բաղիկները, Արջուկը, Նապաստակը:*

**Աղվես** (*Հողաթմբի հետևից*) – Արջուկին էլ են քարշտվել բերել: Բայց ոչինչ... Ոչինչ... Միևնույն է, նա ոտքի կանգնել չի կարողանա:

**Բաղիկներ** – Իսկ ո՞ր է Մարգարտաձաղիկը:

**Արջուկ** (*Այլևս չի գործում, պառկել է գետնին*) – Ո՞ր է Մարգարտաձաղիկը:

**Նապաստակ** – Ծաղիկը չկա:

**Բաղ** – Ինչ-որ մեկն այն պոկել է:

**Բաղիկներ, Արջուկ, Նապաստակ** (*Վշտացած*) – Ո՞վ, ո՞վ...

*Եվ այդ պահին հողաթմբի հետևից դուրս է ցատկում Աղվեսը:*

**Աղվես** – Հիմա կիմանաք, թե ով... (Նետվում է դեպի բաղիկները: Բաղը և բաղիկները, խուսափելով աղվեսից, սկսում են վազվզել պոկված ծաղկի ցողունի շուրջը):

**Աղվես** – Հեզ Նապաստակ, փախի՛ր այստեղից, բանի դեռ մորթո՞ղ չեմ քրքրել:

**Նապաստակ** (*Դեռ չի մտել հետապնդողների շրջանի մեջ: Նրա առջևի թաթիկները փորձում են փախչել, բայց հետևի թաթիկները մնում են տեղում ու չեն շարժվում: Կակազելով*) – Դր-դր-անք իմ բարեկամներն են... (*Եվ հանկարծ ընկնում է Աղվեսի հետևից*): Կանգնի՛ր, Աղվե՛ս... Չհամարձակվե՛ս...

**Արջուկ** (*Մոտենում է՝ բարձրանալով և ընկնելով*) –

Այդպե՛ս... Ուրեմն դո՛ւ էիր այն սևկերը բերել, հա՞... (Ընկնում է աղվեսի ոտքերի տակ հենց այն պահին, երբ Աղվեսը պետք է հասներ Բաղիկին: Աղվեսը տապալվում է գետնին: Անսպասելի հայտնվում է նաև Ավանակը, կանգնում է մի պահ, հետո կողմնորոշվելով, հետապնդում է Աղվեսին... Աղվեսը փորձում է ձողուպրել, բայց հայտնվում է խլուրդի հողաթմբին դեմ հանդիման: Աղվեսը փորձում է վեր մագլցել, բայց գլորվում է ցած, որտեղ նրան սպասում էր Ավանակը՝ սմբակները պատրաստ... Սմբակի հարվածից պոկվում է գետնից, թռչում վեր և ընկնում գետին):

**Բաղ** – Եկեք նրան անմիջապես կապենք, քանի դեռ ուշքի չի եկել:

*Նապաստակը հանում է Ավանակի սանձը և Բաղի օգնությամբ կապում Աղվեսին:*

**Արջուկ** – Այդպե՛ս... Հիմա կխելոքանաս:

**Բաղիկներ** – Մայրիկ, նա իսկապե՞ս ուզում էր մեզ ուտել:

**Բաղ** – Կարծում եմ, որ ուզում էր...

**Բաղիկ** – Ինչ լավ է, որ մեզ հետ էր Նապաստակը...

**Բաղիկ** – Ինչ լավ է, որ մեզ հետ էր Ավանակը...

**Բաղիկ** – Ինչ լավ է, որ մեզ հետ էր Արջուկը...

**Արջուկ** – Տեսե՛ք, տեսե՛ք, ես արդեն կարողանում եմ ոտքի կանգնել (*կանգնում ու քայլում է օրորվելով*):

**Բաղ** – Խլուրդի հողաթումբն էլ մեզ շատ օգնեց... Ի՞նչ լավ է, որ մեզ հետ էին մեր բարեկամները:

**Աղվես** (*Փորձելով ազատվել կապանքներից*) – Ինչպե՞ս եք համարձակվում կապկպել ինձ... Ի՞նչ եք ուզում անել:

**Բաղ** – Կտանենք անտառ ու կդատենք:



**Ավանակ** – Բաղիկներին ուտելու փորձ անելու համար:

**Բաղիկներ** – Մարգարտաձաղիկը պոկելու համար:

**Աղվես** – Առաջին մեղադրանքի համար վկաներ կա՞ն, իսկ ո՞վ կվկայի, որ ես եմ պոկել Մարգարտաձաղիկը:

**Բաղ** – Ի՞նչ իմանաս, գուցե մեկնումեկը տեսել է...  
(*Դահլիճին*) Ի՞նչ կասեք, բարեկամներ: Գուցե գիտե՞ք, թե ով է պոկել ծաղիկը... Աղվե՞սը...  
Շնորհակալություն:

**Արջուկ** – Ահա՛ և վկաներ...

**Բաղ** – Գնացի՛նք:

*Բարեկամները շարժվում են Բաղի հետևից: Ամենավերջում կապկպված Աղվեսն է: Այդ պահին խոտերի միջից երևում է նոր ծաղկած Մարգարտաձաղիկը:*

**Բաղիկ** – Նայի՛ր, նայի՛ր, մայրի՛կ:

**Բաղիկ** – Սա՞ է ծաղիկը, մայրի՛կ:

**Բաղիկ** – Մարգարտաձաղի՞կը:

**Բաղ** – Այո՛, այո՛, հենց սա է:

**Աղվես** (*Ավելի շուտ ինքն իրեն*) – Ի՞նչ են գտել այս ծաղկի մեջ...

**Արջուկ** – Լավ կլինե՛ր՝ ձայնդ կտրեիր...

**Բաղ** – Այո՛, այո՛, լա՛վ կլինե՛ր: (*Բոլորին*).

Եթե դու նույնիսկ ծաղիկն այս ջարդես,  
Ծաղիկն աշխարհից հո չի՞ վերանա,  
Ծաղիկը կա ու կլինի անվերջ,  
Որ բույր ու տեսքով նրա հիանալիք:

*Այս բառերը դառնում են երգ, որոնցով ավարտվում է պիեսը: Թող վերջում նույնպես հնչի մեր հերոսների թեման:*

**Արջուկ** – Ծաղիկն ինչ-որ շատ քնքուշ բան է:

**Նապաստակ** – Լռակյաց է, բայց նաև հմայուն:

**Ավանակ** – Ծաղիկը սիրուն ու անմահ է:

**Բոլորը** – Մեր հիացումունքն է նա իր մեջ պահում:

**Վերջ**

# **ԱՌԵՂԾՎԱԾ ԱՅԻՆ ՀԻՊՊՈՊՈՏԱՄԸ**

**Հեքիաթ-պիես երկու  
գործողությամբ**

Կորյուն Կորո – *անչափահաս*

Գետաձի՝ Գևո – *անչափահաս*

Ընձուղտ՝ Քեռի Ընձո – *շատ գիտուն*

Համրուկ՝ Համրո – *միայն ծուլանալ կարող է*

Նապաստակ՝ Նապո – *մտահոգ, գործարար, սիած խաղը՝ աչքակապուկ*

Վիշապ՝ Ուշափ – *ս, գ, շ, ժ տառերն արտասանում է՝ սսս, զզզ, շշշ, ժժժ*

Սիրամարգ Սիրակ – *Մայրաստանի փառքն ու պարծանքը*

Կապիկ Աբիկ – *շատ թեթևամիտ անձնավորություն*

Կոկորդիլոս Դիլոս – *լավ տղա*

Գործողությունը տեղի է ունենում Մայրաստան  
չքնաղ երկրում:

## ԱՌ-ԱԶԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

### Պատկեր առաջին

Գետի ծանծաղուտ: Հեքիաթային ծառեր: Զարմանա-  
հրաշ լիանաներ, ծաղիկներ, ձարխտոտի հսկայական  
թփեր, վերևում՝ մուգ կապույտ երկինք:

Ամբողջ երկնքով, ինչպես հնագույն փորագրություն-  
ներում, ժապավեն է՝ «Մայրաստան երկիր» մակագրությա-  
րով: Լսվում են թռչունների դայլայլներ, երաժշտություն,  
որը աստիճանաբար վերածվում է երգի:

Մայրաստանի երկրում ուրախ  
Միշտ էլ գարուն է տիրում,  
Բնիկները երկիրը այդ  
Ամենից շատ են սիրում:

Մայրաստանի երկրում չքնաղ  
Կենդանիներ կան բազում,  
Եկեք մեզ մոտ, եթե դուք էլ  
Ճամփորդել եք երազում:

Ամենաբարձր ծառի սաղարթներում հայտնվում է  
ընծուղտի գլուխը՝ երկար ու պտավոր պարանոցով:  
Քեռի Ընձոն է: Նա ակնոցով է, գլխին՝ պրոֆեսորի  
գլխարկ: Գիտնականի տեսք ունի:

**Քեռի Ընձոն** – Բարև ձեզ, սիրելի՛ հանդիսատեսներ:  
Ես ողջունում եմ ձեզ այս գեղեցիկ գետի  
ափին: Դուք անպայման երբևէ տեսել եք

ինձ և անպայման ճանաչում եք ինձ, ուրեմն՝  
խնդրում եմ ասեք, թե ո՞վ եմ ես:

**Հանդիսականներ** – Ընծուղւոր:

**Քեռի Ընծո** – Հաճելի է գործ ունենալ բանիմաց  
հանդիսատեսի հետ: Իսկապես ես Ընծուղտն  
եմ: Ինձ անվանում են Քեռի Ընծո: Մեզ մոտ՝  
Մայրաստանում, այդպես է. Գետաձի՛ն՝ Գևո,  
Կորյունը՝ Կորո, Համրուկը՝ Համրո, Կոկոր-  
դիլոսը՝ Դիլոս, Մայրաստանի ամենափոքրիկ  
բնակիչը՝ Նապաստակը՝ Նապո...

Ի՞նչ էի ուզում ասել... Հիշեցի: Գետաձի  
Գևոն և Կորյուն Կորոն անչափահասներ են:

Նրանք շատ լավ բարեկաններ են: Կարելի  
է ասել՝ մտերիմ ընկերներ են, թե ինչու, կիմա-  
նաք հետո: Դա շատ կարևոր է: Իսկ ես հիմա  
ժամանակավորապես կհեռանամ բեմից:

*(Քեռի Ընծոյի հեռանալուց անմիջապես հետո լսվում  
է ջրի ձողփյուն, բլթբլթոց ու կլթկլթոց: Գետախորշից  
հայտնվում է բացված խայտաբղետ հովանոց, որից  
հետո ասի է դուրս գալիս Գետաձի Գևոն: Գևոն այնքան  
ուզեղ է, որ գեղեցիկ է թվում իր սզեղությամբ):*

**Գևո** (Երգում է անշնորհք ձոճվելով) .

Ես Գետաձի եմ մի փոքրիկ,  
Բայց փորիկս շատ է մեծ,  
Սակայն ես ի՞նչ մեղավոր եմ,  
Որ փորիկս շատ է մեծ:

Ես Գետաձի եմ դեռ փոքրիկ,  
Բայց բերանս շատ է մեծ,  
Սակայն ես ի՞նչ մեղավոր եմ,  
Որ բերանս շատ է մեծ:

Թեկուզ քայլում եմ անշնորհք,  
Մյուսներից վատը չեմ,  
Իմ ծանրության համար ինչո՞ւ,  
Ինչո՞ւ պիտի ամաչեմ...

Գիտեմ, որ բոլորովին էլ սիրուն չեմ,  
բոլորովին էլ բարեկազմ չեմ, ճարպկությանս  
մասին խոսելն անգամ ծիծաղելի կլինի: Ա՛յ,  
եթե տեսնեք ընկերոջս՝ Կորյուն Կորոյին...

Նա իրոք որ և սիրուն է, և բարեկազմ,  
և ճարպիկ... Չնայած դրան, նա բոլորովին  
մեծամիտ չէ և շատ հաճախ է խաղում հետս:  
Ես հենց հիմա նրան եմ սպասում: Քիչ հետո  
նա կգա այստեղ: Հենց այդ պատճառով ես  
դուրս եկա ջրից, թե չէ դուրս եկողը չէի...  
Մայրաստանում շատ շոգ է, իսկ ջրի մեջ  
զո՛ւվ-զով է... Իմ այս հովանոցն էլ արևի  
համար է: *(Ականջ է դնում):* Կարծես գալիս է...  
Ես նորից ջուրը կմտնեմ, կգա, ինձ չի գտնի,  
իսկ ես հանկարծակի ջրից դուրս կթռչեմ...  
Ա՛յ թե կծիծաղի... *(Սուզվում է: Լսվում են  
մարող բլթբլթոցներ: Գալիս է Կորյուն Կորոն:  
Նա համպատասխանում է Գետաձիուկի նկա-  
րագրածին. գեղեցիկ է, բարեկազմ, բայց տխուր):*

Ես Կորյունն եմ, Կորոն եմ,  
Ուրախ էի երեկ  
Սակայն այսօր տխրությունն է  
Իմ սիրտը գերել...

Չէ՛, Գետաձին չի կարող  
Պարզել թե ինչու,  
Տխրությունս ինչո՞ւ է  
Իմ ներսում ձջում...

Իսկ ես տխուր եմ, որովհետև... չունեմ մի  
իսկական... *(Վախից մի կողմ է ցատկում):* Վա՛յ...

**Գևո** *(Ծիծաղելով)* – Ահա և ես... տրա-լա-լա: Հը՞,  
վախեցա՞ր...

**Կորո** – Հիմար կատակներ են: Այդպիսի կատակներից  
հետո կարելի է ամբողջ կյանքում կակազել:

**Գևո** (*Մեղավոր*) – Ես չեի ուզում քեզ վախեցնել: Ես երեկ և նախորդ օրն էլ էի այդպես դուրս ցատկում ջրից, և դու ծիծաղում էիր: Հիշո՞ւմ ես:

**Կորո** – Դա երեկ էր, իսկ այսօ երեկ չէ: Այսօր այսօր է: Այսօր ես կատակելու սիրտ չունեմ:

**Գևո** – Բա՞ն է պատահել:

**Կորո** – Բանն էլ հենց այն է, որ պատահել է:

**Գևո** – Վա՛յ, ի՞նչ է պատահել... Գուցե ես կարողանա՞մ օգնել:

**Կորո** – Ոչնչով էլ չես կարողանա օգնել: Ես իմացա, որ ես... (*արտասվում է*) իսկական... չունեմ...

**Գևո** (*Նույնպես սկսում է թնկթնկալ*) – Վա՛յ, խեղճ Կորո, ի՞նչ չունես, հը՞...

**Կորո** – Ես ընկեր չունեմ:

**Գևո** – Ո՞նց թե: Բա ես քո ընկերը չե՞մ:

**Կորո** – Չե՛, ի՞նչ ես ասում, դու հենց այնպես:

**Գևո** – Ո՞նց թե՝ հենց այնպես:

**Կորո** – Մի՛ նեղանա, Գևո ջան, դու մի սովորական փոքրիկ գետածի ես: Իսկ ընկերը, գիտե՞ս, ինչպիսին է լինում, գեղեցիկ, խելոք, ամենա... ամենա... ամենա... Չե՛, ավելի լավ է ես երգեմ, թե ինչպիսին է լինում իսկական ընկերը: (*Երգում է*).

Իմացեք, փոքրեր ու մեծեր,  
Տխուր եմ իրավ,  
Փափագում եմ ու չեմ գտնում  
Ընկերոջն իմ լավ:

Նա ոչ ոքի նման չէ հեջ,  
Ուրիշ է, այո,  
Տարբերվում է շատ շատերից  
Ծիծաղով, խաղով,



Բայց ո՞ր է նա, ես չգիտեմ,  
Գիտեմ լոկ մի բան.  
Նա է, նա է դառնալու իմ  
Ընկերն իսկական:

Հիմա հասկացա՞ր:

**Գևո** (*Sfunir*) – Հիմա հասկացա:

**Կորո** – Գևո ջան, դու մի՛ տխրիր: Ես քեզ շատ սիրում  
ու շատ եմ հարգում... Բայց դե, հասկանում  
ես, էլի...

**Գևո** – Հասկանում եմ, հասկանում...

**Կորո** – Թե իմանայիր ո՞նց եմ ուզում իսկական մի  
ընկեր ունենալ:

**Գևո** – Բա որտեղի՞ց գտնենք նրան:

**Կորո** – Ամենադժվարը հենց դա է: Որտե՞ղ գտնել,  
ո՞նց գտնել:

*Մտնում է Քեռի Ընծոն: Նա գալիս է հաստափոր մի  
գիրք կարդալով:*

**Գևո** – Արի հարցնենք Քեռի Ընծոյին: Նա գիտնական  
է և շատ ու շատ բաներ գիտե:

**Կորո** – Իսկապես: Հիմա կհարցնեմ: (*Քեռի Ընծոյին*)  
Քեռի Ընծո:

**Քեռի Ընծո** (*Պոկվելով գրքից*) – Հը՞... Ի՞նչ... ո՞վ է...

**Կորո** – Քեռի Ընծո, ես որտեղի՞ց մի իսկական ընկեր  
գտնեմ:

**Քեռի Ընծո** – Ընկե՞ր:

**Կորո** – Այո, ընկեր: Բայց իսկական, ոչ սովորական:  
Մի խոսքով՝ ամենա... ամենա....

**Քեռի Ընծո** (*Ընդհատելով*) – Պարզ է... Պարզ է... Ես  
լսեցի քո գրույցը և հրաշալի երգը լսեցի:  
Օգնել չեմ կարող: (*Խորասուզվում է ընթերցա-  
նության մեջ*):

**Կորո** (*Թնկթնկալով*) – Տեսա՞ր...

**Գևո** – Քեռի Ընձո, օգնեցեք նրան, շատ եմ ինդրում:  
Ես չեմ կարող տեսնել, թե ինչպես է նա  
տառապում...

**Քեռի Ընձո** (*Կտրվելով գրքից*) – Հը... Ի՞նչ... տառա-  
պո՞ւմ... Ո՞վ է տառապում...

**Գևո** – Կորոն է տառապում: Նա շատ է ուզում մի  
իսկական ընկեր ունենալ:

**Կորո** – Իսկապես ինձ մի լավ ընկեր է պետք:  
Իսկական ընկեր: Ամենալավ մի...

**Քեռի Ընձո** – Սպասի՛ր, սպասի՛ր: Գուցե ես իսկա-  
պես կարողանամ քեզ օգնել: Այս գրքում,  
որ հիմա կարդում եմ, հավաքված են բոլոր  
բառերը՝ «Ա տառից մինչև «Ֆ» տառը: Սա  
բառարան է: «Ընկեր» բառն այստեղ պիտի  
լինի: Հիմա նայենք... (*Թերթում է գիրքը*)...  
Ազնիվ... Արդար... Աքլոր... Աֆրիկա...  
Արցախ... Սրանք Ա-ով սկսվող բառերն են...  
Բարձր... Բարի... Բարի... Գնացիկ առաջ...  
Գագաթ... Գարուն... Գեղեցիկ... Գիտելիք...  
Անցնենք առաջ... Ընդերք... Ընթացք...  
Ընկնել... Ընկեր... Ահա և գտանք:

**Գևո** – Ի՞նչ է գրված այդտեղ:

**Կորո** – Գրված է, թե որտեղ փնտրել նրան:

**Քեռի Ընձո** (*Քթի տակ ինչ-որ բառեր քրթմնջալով  
կարդում է*) – Ահա, գտա:

*(Ամենա բարի, ամենախիզախ, ամենանվիրված,  
ամենահավատարիմ, ամենա... և այլն... ընկերը  
Մայրաստանում ՀԻՊՊՈՊՈՏԱՄՆ է:*

**Գևո** – Ո՞վ, ո՞վ: Հի-հի- պպո-պո-տամը:

**Քեռի Ընձո** – Ոչ հի-հի, ոչ էլ՝ հե-հե, այլ՝ Հի-պպ-պո-  
տամը:

**Գևո** – Առաջին անգամ եմ լսում այդ անունը:

**Կորո** – Ես էլ եմ առաջին անգամ լսում:

**Քեռի Ընձո** – Ես լսելը լսել եմ, բայց միչև հիմա չեմ տեսել:

**Կորո** – Իսկ որտե՞ղ է նա ապրում:

**Պև** – Որտե՞ղ փնտրենք նրան:

**Քեռի Ընձո** – Այստեղ միայն գրված է՝ Մայրաստան երկրում: Նշանակում է՝ նա մեր կողմերում պիտի լինի: Գուցե անտառի թավուտներում, գուցե գետի ջրերում: Գուցե լեռներում կամ անապատում (*ծիծաղում է*):

**Կորո** – Որտեղ էլ որ լինի, ես կգտնեմ նրան: Եվ նա կդառնա իմ իսկական ընկերը:

**Քեռի Ընձո** – Նրան շատ դժվար կլինի գտնել: Իսկ դու դեռ շատ ես փոքր միայնակ ձամփորդելու համար:

**Պև** – Երկուսով դժվար չի լինի:

**Քեռի Ընձո** – Դու է՞լ ես ուզում որոնել:

**Պև** – Ես Կորոյին մենակ չեմ թողնի, ով գիտե՝ ինչ կպատահի ձանապարհին:

Մենք միասին կլինենք (*հանկարծակի հիշելով*), եթե, իհարկե, նա ուզենա ինձ տանել իր հետ:

**Կորո** – Ինչո՞ւ չէ, կտանեմ: Միասին շատ հաճելի կլինի:

**Քեռի Ընձո** – Դե, ուրեմն, հաջողություն եմ մաղթում ձեզ: (Քթի տակ ժպտալով, շարունակելով կարդալ գիրքը, հեռանում է):

**Կորո** (*Հուսավառ*) – Ես անայման կգտնեմ իմ իսկական ընկերոջը:

**Պև** – Անպայման կգտնեմ: Ինչքան պետք է, ես քեզ կօգնեմ: Միայն թե...

**Կորո** – Ասա՛, ասա՛, միայն թե ի՞նչ...

**Պև** – Երբ գտնես իսկական ընկերոջդ, երբեմն-երբեմն կգա՛ս ինձ մոտ՝ ինչպես մինչև հիմա: Մենք էլի կխաղա՞նք իրար հետ:

**Կորո** (*Մեծահոգաբար*) – Ի՞նչ ես ասում: Ժամանակ,  
իև՛ խոսք, քի՛չ կմնա, բայց ես էլի կգամ քեզ  
մոտ: Ինչո՞ւ չգամ:

**Գևո** – Շնորհակալ եմ:

**Կորո** – Իսկ հիմա գնացի՞նք: (*Հեռանալով երգում են*).

Քեռի Ընծոյի խորհրդով  
Երկիրը ոտքի տակ կտանք.  
Ինչ-որ մի տեղ,  
Մեզնից հեռու,  
Ապրում է մի Հիպպոպոտամ:

Հետ չենք դառնա, թե չգտանք,  
Հենց որ գտանք, նոր հետ կգանք:  
Ուր էլ լինես,  
Սպասիր մեզ,  
Կգտնենք քեզ, Հիպպոպոտամ:

## ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ

*Մայրաստանի մերձարևադարձային անտառ: Թաթիկներով ծառի ձյուղից կառչած կախվել է Համրուկ Համրոն: Համրոն ծուլորեն հեզելով երգի բառերը՝ երգում է:*

**Համրո** – Կախված եմ ես ծառի ձյուղից

Գիշեր-ցերեկ,

Գիշեր-ցերեկ:

Ինչու եմ ես կախված այսպես

Գիշեր-ցերեկ,

Գիշեր-ցերեկ:

Ասեմ՝ ինչո՛ւ եմ ես կախված

Գիշեր-ցերեկ,

Գիշեր-ցերեկ:

Ծուլանում եմ իջնել ձյուղից

Գիշեր-ցերեկ,

Գիշեր-ցերեկ:

*Ներս է վազում մտահոգ, գործարար Նապաստակ Նապոն՝ շալակին մի պարկ գազար:*

**Նապո** – Դեռ կախվա՞ծ ես:

**Համրո** – Կախված եմ:

**Նապո** – Ծա՛տ պիտի մնաս կախված:

**Համրո** – Մի ամբողջ կյանք: Իսկ դու անվերջ վազվզո՞ւմ ես:

**Նապո** – Վազվզում եմ:

**Համրո** – Եվ շա՛տ ես վազվզելու:

**Նապո** – Դեռ էլի մի ամբողջ կյանք:

**Համրո** – Իսկ ինչո՞ւ:

**Նապո** – Ինչպես թե ինչու: Ա՛յ, գազար եմ ձարել: Տանեմ թողնեմ բնում, վազեմ անանասի հետևից, իսկ մինչ այդ կաղամբը կհասունանա... Այդպես մեկը մյուսի հետևից, մեկը մյուսի հետևից: Ձանձրալի չե՞ կախված մնալը:

**Համրո** – Բոլորովին: Իսկ դու չե՞ս ձանձրանում վազվզելուց:

**Նապո** – Ամենևին:

**Համրո** – Նապո:

**Նապո** – Ի՞նչ:

**Համրո** – Մի գազար տուր ինձ:

**Նապո** – Իսկ փոխարենն ի՞նչ կտաս:

**Համրո** – Կարող էի մի տերև տալ քեզ: Բայց պիտի թաթս պարզե՛մ, պոկե՛մ տերևը, նետեմ ցա՛ծ: Իսկ ես ծուլանում եմ: Հենց այնպես մի գազար տուր:

**Նապո** – Ինչպե՛ս թե հենց այնպես: Այդպես չի լինում: Դու՛ ինձ, ես՝ քեզ: Հասկացա՞ր:

**Համրո** – Ուրեմն՝ չես տա:

**Նապո** – Չեմ տա:

**Համրո** (*Առանց չարության*) – Չես տալիս՝ մի տա: Հավես էլ չունեմ: Վերցնե՛մ, ծամե՛մ... Ծատ պետքս է... Վազի՛ր, Նապո, վազի՛ր...

**Նապո** – Ես վազեմ, իսկ դու մնա այդպես կախված:

**Համրո** – Դա էլ իմ գործն է:

*Նապոն դուրս է վազում: Հեռվից լսվում է մեր ձամփորդների երգը, նախ՝ ցածր, հետո ավելի ու ավելի բարձր:*

Քեռի Ընձոյի խորհրդով  
Աշխարհը ոտքի տակ կտանք.

Մեզնից հեռու,  
Ինչ-որ մի տեղ,  
Ապրում է մի Հիպպոպոտամ...

*Հայտնվում են Կորոն ու Գևոն: Նրանք շատ հոգևած են:*

**Կորո** – Ահագին քայլեցինք, իսկ նա չկա ու չկա:

**Գևո** – Գոնե իմանայինք, թե ինչ տեսք ունի  
Հիպպոպոտամը:

**Կորո** – Լավ չէ, որ նրա մասին ոչինչ չգիտենք:

**Գևո** (*Նկատելով համրուկին*) – Հապա վերև նայիր:  
Գուցե սա՞ է Հիպպոպոտամը:

Տես, կախվել է ձյուղից ու մեզ է նայում:

**Կորո** – Իսկապես որ: Արի հարցնենք:

**Գևո** – Հարցնենք: Բայց դու հարցրու: Ես ամաչում  
եմ:

**Կորո** – Ես էլ եմ ամաչում:

**Գևո** – Լավ, կհարցնեմ: (*Հազում է, մաքրում կոկորդը*):  
Ծատ կներեք: Պատահաբար հո դո՞ւք չեք  
Հիպպոպոտամը: (*Համրոն լուռ է*): (*Կորոյին*)  
Լուռ է: Չի պատասխանում: Հիմա էլ դու  
հարցրու: Գուցե լսի:

**Կորո** – Լավ: (*Համրոյին*) Ծատ ներեցեք, միգուցե դո՞ւք  
եք այն Հիպպոպոտամը, որին փնտրում  
ենք: (*Համրոն լուռ է*): (*Գևոյին*) Լուռ է: Երևի  
խուլ է: Չի պատասխանում: Արի միասին  
հարցնենք:

**Կորո և Գևո** (*Միասին*) – Հիպպոպոտամը դուք չե՞ք:

**Համրո** – Ինչո՞ւ եք գոռում: Ես խուլ չեմ:

**Գևո** – Բա ինչո՞ւ չէիր պատասխանում:

**Համրո** – Ծուլանում եմ, դրա համար էլ չեմ պատաս-  
խանում... Հասկացա՞ք... Ոչ, ես Հիպպոպո-  
տամը չեմ:

**Գևո** – Իսկ դուք ո՞վ եք:

**Համրո** – Ես Համրուկ Համրոն եմ:

**Կորո** – Իսկ ի՞նչ եք անում այդտեղ՝ ճյուղի վրա:

**Համրո** – Ձեք տեսնո՞ւմ: Կախվել եմ:

**Գևո** – Եվ վերջ:

**Համրո** – Ինչ է նշանակում և վերջ: Կախվել ինձ համար ծուլանում եմ: Հեռացեք այստեղից, ես ծուլանում եմ խոսել ձեզ հետ:

**Կորո** (*Գևոյին*) – Գիտես ինչ, ևա ինձ դուր է գալիս: Հանգիստ է, մտախոհ, գեղեցիկ:

*Երևի խելոք էլ է: Կախվել է իր համար ու լուռ է...  
Իսկ քեզ դո՞ւր է գալիս:*

**Գևո** – Կարծես թե ոչինչ:

**Կորո** – Ես ուրիշին չէի որոնի, եթե ևա ցանկանար դառնալ իմ ընկերը: Հարցրու, տես ի՞նչ կասի:

**Գևո** – Հարցնեմ: (*Համրուկին*) Ներեցեք, խնդրում եմ, որ ձեզ նորից եմ անհանգստացնում: Դուք չէի՞ք կամենա ընկեր դառնալ: (*Համրոն լուռ է*): (*Կորոյին*) Էլի լուռ է: Արի միասին հարցնենք:

**Համրո** – Պետք չէ միասին: Ձեր գոռոցից ականջներս զրնգում են... Ինչ դառնա՞մ ասում եք:

**Գևո** – Ընկեր: Այսինքն՝ ընկերանալ, ընկերություն անել Կորոյի հետ: Նրան մի լավ ընկեր է հարկավոր:

**Կորո** – Այո, ես շատ եմ խնդրում, որ դուք իմ ընկերը դառնաք:

**Համրո** – Ինչ կա որ, ես դեմ չեմ:

**Կորո** (*Զգացված*) – Ծատ շնորհակալ եմ:

**Գևո** – Ծնորհակալ եմ ես էլ:

**Համրո** (*Կորոյին*) – Էլ ի՞նչ ես կանգնել մնացել: Բարձրացիր ինձ մոտ: Կախվիր կողքի ճյուղից:

**Կորո** – Ես չեմ կարողանում ծառ բարձրանալ:



**Գևո** – Ես քեզ կօգնեմ: Ցատկիր ինձ վրա, իսկ հետո՝ ծառի: Ես շատ ուրախ եմ, որ գտար իսկական ընկերոջդ... *(Տխուր)* Իսկ ես կվերադառնամ տուն: Բայց դու ինձ չես մոռանա, չէ՞:

**Կորո** – Չե՛մ մոռանա, չե՛մ մոռանա: Կանգնիր այստեղ: *(Գևոն կանգնում է ծառի տակ: Կորոն թափ առնելով ցատկում է նրա մեջքին և փորձում է հասնել ձյուղերին):* Հո՛ւյ... *(պոկվում է):* Չհաջողվեց: Մի անգամ էլ *(դարձյալ չի հաջողվում):* Ես երբեք ծառ չեմ բարձրացել: Հո՛ւյ... *(Վերջապես հաջողվում է հայտնվել Համրուկ կողքին: Կորոյի պոչը ձոճվում է անօգնական):* Եղավ... *(Գևոյին)* Մնաս բարով, Գևո:

**Գևո** – Մնաս բարով, Կորո: *(Գևում է):*

*(Մի որոշ ժամանակ Կորոն ու Համրուկը կախված են ու լռում են):*

**Կորո** – Թանկագին ընկեր, արի զրուցենք որևէ բանի մասին:

**Համրո** – Ա՛յ քեզ նորություն... Երևում է՝ շատախոսի մեկն ես, հա՛:

**Կորո** – Ոչ, ես շատախոս չեմ, բայց ուզում եմ պարզել, թե ինչպե՞ս եսք ընկերություն անելու:

**Համրո** – Պարզելու ի՞նչ կա որ: Կկախվենք այսպես կողք կողքի: Ինձ էլ դուր չի գալիս:

**Կորո** *(Քաղաքավարությամբ)* – Դուր է գալիս, բայց...

**Համրո** – Ի՞նչ բայց: Կախվե՞լ ես, կախվիր: Ոչինչ էլ մի անի, ոչ մի բանի մասին մի մտածիր: Պահպանիր քեզ:

**Կորո** *(Հուսահատ)* – Բայց ես կախվելու սովորություն չունեմ: Դա շատ դժվար է ինձ համար: Ես չմտածել էլ չեմ կարող, ինքներդ պահպանեք ձեզ: Ես ձեզ հետ ընկերություն չեմ անի:

Ինչպե՞ս իջնեմ այստեղից...

**Համրո** – Չես ուզում՝ մի անի: Ճիշտն ասած, ես էլ չեմ ուզում հետո՞ ընկերություն անել: Ընկերությունս որն է... Ավելի լավ է քնեմ: *(Խոնկացնում է):*

**Կորո** – Ո՞նց իջնեմ այստեղից: *(Գոռում է՝ Գևո՛... Գևո՛... Գևոոո՛...)*

*(Ներս է վազում Գևոն):*

**Գևո** – Ի՞նչ պատահեց:

**Կորո** – Լավ է, որ շատ չէիր հեռացել: Օգնիր ինձ իջնել այս ծառից:

**Գևո** – Իսկ ընկերությունը:

**Կորո** – Չեմ ուզում ընկերություն անել այդ ծուլիկի հետ: Ամբողջ կյանքում մի ձյուղից... Չանձրույթից մեռնել կարելի է:

**Գևո** – Ես կկանգնեմ այստեղ: Բաց թող ձյուղը, ցատկիր ինձ վրա՝ իմ մեջքին:

**Կորո** – Կջարդվեմ...

**Գևո** – Չես ջարդվի: Ես քեզ կպահեմ: Այնքան էլ բարձր չէ: Ցատկեր մեջքիս:

**Կորո** – Վայ, ընկնում եմ: *(Ընկնում է Գևոյի մեջքին ու ցատկում):* Իսկապես որ բարձր չէր: Ծնորհակալ եմ: Հիմա ամեն ինչ կարգին է:

**Գևո** – Ընկերոջ հարցում բախտո՞ղ չբերեց:

**Կորո** – Կշարունակեմ փնտրել: Հուսով եմ կգտնեմ:

**Գևո** – Ուրեմն՝ ես քեզ հետ եմ:

**Կորո** – Բա ոնց: *(Համրուկին)* Հե՛յ, Համրուկ Համրո... *(Գևոյին)* Լուռ է: Ծուլանում է խոսել: *(Համրոյին)* Իսկ կախվել չե՞ս ծուլանում:

**Համրո** – Ծուլանում եմ, բայց ձարս ինչ:

## ՊԱՏԿԵՐ ԵՐՐՈՐԴ

Անտառամերձ թփուտներ: Մի թփի տակ՝ իր բնի դիմաց, նստած է Նապաստակ Նապոն: Գազար է ջոկում ու երգում է:

**Նապո** – Հրաշալի տեսարան է,

Բույս լիքն է ծերից ծեր:

Այսքան համով ուտելիքներ

Նապոն ե՞րբ է ունեցել...

Հրաշալի գազար է: Իսկ այս մեկը թառամած է: Սա հենց հիմա կուտեմ: *(Արագ-արագ կրծում է գազարը)*: Սա էլ լավն է... Գազարը ջոկեմ, տեսակավորեմ, վազեմ անանասի, իսկ մինչ այդ կաղամբը կհասունանա, իսկ կաղամբից հետո բամբուկը շիվ կտա... Եվ այսպես՝ առավոտից իրիկուն, առավոտից իրիկուն այնքան գործ, այնքան հոգս ու հուզումներ... Ընտանիք կերակրելը հո կատակ բան չէ՞: *(Երգում է)*.

Ընտանիքս մեծ չէ այնքան՝

Չորս տղա և չորս աղջիկ,

Զարմիկներին էլ թե հաշվեք,

Ես ինձ աղքատ չեմ հաշվի...

*(Լարում է լսելիքը)* Լսեցի՞, թե՞ թվաց... Չէ՛, հաստատ շրշոյուն է: Երևի Ուշափն է: Զգուշությունը չի խանգարի... *(Թաքնվում է գազարի բնի մեջ: Դուրս է նայում բնից: Թաքնվում է՝ քողարկելով մուտքը)*:

Դուրս է սողում Ուշափը: Նրա նախշուն մարմինը փայլվիլում է արևի լույսի տակ:

**Ուշափ** – Հոգնել եմ: Ահավոր հոգնել եմ: Ստամոքսս ամբողջովին դատարկ է:

Նապոն հաջող թաքնվեց: Ա՛յ թե հանդիպեի նրան

դեմ-դիմաց, աչքս՝ աչքին... Ո՞նց կուլ կտայի  
նրան: (Հեռանում է: Բնից դուրս է գալիս  
Նապոն):

**Նապո** – Կուլ տալուց բացի ուրիշ հոգս չունի: Ամե-  
նակույ, անխիղճ, ավազակ: Ես միշտ էլ  
կարողանում եմ ծլկել նրանից, եթե միայն  
աչքս չի դիպչում նրա աչքին: Հենց դիպավ՝  
կորած եմ: Թպրտալ անգամ չեմ հասցնի,  
էլ ուր մնաց՝ ծլկել: Մոտ կտողա, կուլ կտա  
միանգամից՝ ոտով գլխով: Բռռռ... (Լարում է  
լսողությունը): Ինչ-որ տեղ երգում են:

(Լսվում է Կորոյի և Գևոյի երգը).

Քեռի Ընծոյի խորհրդով  
Աշխարհը ոտքի տակ կտանք,  
Ինչ-որ մի տեղ,  
Մեզնից հեռու,  
Ապրում է մի Հիպպոպոտամ....

Թաքնվեմ: (Պահվում է բնի մեջ՝ քողարկելով մուտ-  
քը): Գալիս են Կորոն և Գևոն:

**Կորո** (Փռվելով գետնին: Դադար) – Մի քիչ հանգստա-  
նանք այս թփի տակ ու շարունակենք ճանա-  
պարհը: Երևի դու էլ ես հոգնել:

**Գևո** (Պառկելով կողքին) – Մենք՝ գետածիերս, այն-  
քան էլ սովոր չենք քայլելուն: Ա՛յ, լողալը՝  
ուրիշ...

**Կորո** – Դու ինչո՞ւ միացար ինձ, Գևո:

**Գևո** – Հո մենակ չե՞ի թողնի:

**Կորո** – Գոնե իմանայինք՝ ինչի՞ է նման այդ Հիպպո-  
պոտամը: Խոշո՞ր է, թե՞ փոքր: Բայլո՞ւմ է,  
թե՞ թռչում...

**Գևո** – Միգուցե ապրում է ջրում: Ոչինչ չգիտենք:

**Կորո** – Որքան դժվար է նրան գտնելը, նույնքան էլ ուզում եմ, որ նա իմ ընկերը դառնա: Իսկ եթե մենք միասին կանչենք նրան՝ Հի-հի-պոպո-տամ:

**Գևո** – Կարելի է փորձել: Միայն թե ոչ թե՝ Հի-հի, այլ Հե-հե..

**Կորո** – Չէ՛ Հի-հի:

**Գևո** – Չէ՛ Հե-հե:

**Կորո** – Հի-հի:

**Գևո** – Հե-հե:

**Կորո** – Կպել է ինձնից պոկ չի գալիս ու դեռ վիճում էլ է:

**Գևո** (*խաղաղ*) – Հիշեցի: Ոչ Հի-հի, ոչ էլ՝ Հե-հե, այլ՝ պո-պո:

**Կորո** – Ի՞նչ պո-պո:

**Գևո** – Հիպ-պոպո-տամ:

**Կորո** – Կանչենք:

**Գևո** – Պատրաստվենք՝ մեկ, երկու, երեք:

**Կորո և Գևո** (*Միասին*) – Հիպպոպոտամ... Հիպպոպոտամ...

*Բնից դուրս է ցատկում Նապոն:*

**Նապո** – Ի՞նչ եք ուզում:

**Կորո** (*Գևոյին*) – Ահա՛ նա:

**Գևո** – Ի՞նչ շուտ արձագանքեց:

**Կորո** – Հարգելի...

**Գևո** (*Հուշում է*) – Հարգելի, մեծարգո Հիպպոպոտամ, շատ ուրախ եմք, որ վերջապես գտանք ձեզ:

**Գևո** – Մենք ձեզ այնքա՛ն եմք որոնել, այնքա՛ն եմք որոնել, որ հազիվ եմք մնում ոտքի վրա:

**Կորո** – Մենք լսել եմք, որ Մայրաստանում ամենալավ ընկերը դուք եք:

**Գևո** (*Նապոյին*) – Շատ եմ խնդրում դառնալ նրա ընկերը: Նա շատ լավն է, ա՛յ, կտեսնեք:

**Նապո** – Զուր եք կպել ինձնից: Ես Հիպպոպոտամը չեմ: Ես ընդամենը նապաստակ եմ: Անունս էլ Նապո է: Ճանաչել է հարկավոր:

**Կորո** (*Գևոյին շշուկով*) – Գիտե՞ս ինչ, ոնց որ թե նա ինձ դուր է գալիս: Սիրունիկ է, փումփուշիկ, երկարականջ: Գուցե նրա հետ ընկերանամ, հը՞:

**Գևո** – Դու գիտես:

**Կորո** – Կընկերանամ: (*Նապոյին*) Հարգելի...

**Գևո** (*Հուշում է*) – Եվ պատվարժան...

**Նապո** (*Վեր ցատկելով*) – Ի՞նչ վարժանք:

**Գևո** – Պատվարժան:

**Կորո** – Մայրաստանի հարգելի և պատվարժան Նապաստակ Նապո: Խնդրում եմ, դարձեք իմ ընկերը:

**Գևո** – Դարձեք նրա ընկերը:

**Նապո** – Ի՞նչ է, դո՞ւ էլ ես նապաստակ:

**Կորո** – Ոչ, ես Առյուծի ձագ եմ, այսինք՝ Կորյուն: Իմ անունը Կորո է:

**Նապո** – Պարզ է: Իսկ ես Նապաստակ եմ և միայն նապաստակների հետ եմ ընկերություն անում:

**Գևո** – Բայց դուք այստեղ միայնակ եք:

**Նապո** – Ե՛ս եմ միայնակ... (*Սուլում է, և նույն պահին թփերի տակից դուրս են նայում բազմաթիվ նապաստակներ և անմիջապես անհետանում*):

**Գևո** (*Զարմացած*) – Ի՞նչ եմ ասել, հա՛...

**Նապո** (*Պարծանքով*) – Իսկ դուք ասում եք՝ միայնակ: Մենք հազարներ ենք:

**Կորո** – Շատ ճարպկորեն եք թաքնվում:

**Նապո** – Չթաքնվենք՝ Ուշափը բոլորիս կուլ կտա:

**Կորո** – Ուշափն ո՞վ է:

**Նապո** – Վիշապ է, անունը՝ Ուշափ: Ամենակուլ մի  
ավազակ:

**Կորո** – Իսկ ինչո՞ւ չեք ուզում ընկերանալ ուրիշների՝  
ոչ նապաստակների հետ:

**Նապո** – Ինչի՛ս է պետք: Մենք այստեղ բոլորս էլ  
իրար ազգականներ ենք: Միասին ենք գա-  
զար գողան... ուզեցի ասել՝ հայթայթում,  
աչքակապուկ խաղում:

**Գևո** – Աչքակապո՞ւկ: Բռնոցի...

**Նապո** – Աչքակապուկ: Մեր ամենասիրելի խաղն է:

**Կորո** – Եկեք աչքակապուկ խաղանք:

**Նապո** – Խաղանք:

**Գևո** – Իսկ ինձ կվերցնե՞ք:

**Նապո** – Կվերցնենք: Իսկ բռնողն ո՞վ է:

**Կորո** – Հիմա կիմանանք.

Կանաչ արտի մեջ գարու

Նապոն ելավ ման գալու:

Որսորդ քեռին ծիկրակեց,

Նշան բռնեց, կրակեց...

**Նապո** (*Ընդհատելով*) – Չէ՛, չէ՛... Նապաստակներն ու  
ձագարներն ուրիշ հաշվելուկ ունեն: Ահա.

Կանաչ արտի մեջ գարու

Նապոն ելավ ման գալու:

Որսորդ քեռին նկատեց,

Նկատեց ու սարսափեց:

Սև հրացանը ձեռին,

Ճողոպրում է խեղձ քեռին...

*(Կորոյին) Դու պիտի փնտրես: (Կռատուկի  
մեծ տերևով Նապոն կապում է Կորոյի աչքերը:  
Սկսվում է խաղը): Դե բռնի՛ր... բռնի՛ր, ես այս-  
տեղ եմ, բռնի՛ր...*

**Գևո** – Բռնիր, Կորո՛, բռնի՛ր... (Թփերի միջից հայտնվում են նապաստակների գլուխներ, կանչում են Նապոյի ձայնով ու անմիջապես ծլկում):

**Կորո** – Գլուխս պտտվեց:

**Նապո** (Հաղթական) – Հը՛, բռնեցի՛ր:

**Գևո** – Անազնիվ խաղ է: Մենք սկսեցինք երեքով, իսկ դո՛ւ... քանի՞սն եք: Կորո, մի՛ խաղա նրա հետ:

**Կորո** (Պոկեյլով աչքերի կապը) – Ես հետո չեմ խաղում:

**Նապո** – Պա՛հ, պա՛հ, պետքս էլ չէ: Չե՞ս ուզում մի խաղա:

**Նապաստակներ** (Գլուխները ցցելով թփերի միջից) – Չե՞ս ուզում մի խաղա...

**Նապո** – Առանց ձեզ էլ մենք մեր խաղերը կխաղանք: Ուրիշ խաղացողներ մեզ պետք չեն: Ճիշտ չե՞մ ասում:

**Նապաստակներ** (Միասին) – Ճիշտ չե՞մ ասում:

**Գևո** – Ա՛յ, օրինակ, ես Գետաձի եմ, բայց Կորոյին շատ եմ սիրում, չնայած նա առյուծ է և ոչ թե գետաձի: Իսկ ես գետաձի եմ և ոչ թե առյուծ:

**Նապո** – Նապաստակներն իրենց օրենքներն ունեն: (Կորոյին) Լսիր, գուցե դու մեր հեռավոր ազգակա՞ն ես:

**Կորո** – Ո՛չ, ես ձեր ազգականը չեմ:

**Նապո** (Ափսոսանքով) – Ափսոս: Թեկուզ... (Մտահոգված) Ասա ինձ, ես ի՞նչ օգուտ կունենամ, եթե դառնամ քո ընկերը:

**Կորո** – Օգո՛ւտ:

**Նապո** – Այո, օգուտ:

**Կորո** (Շփոթված) – Չգիտեմ: Այդ մասին չեմ մտածել:



**Նապո** – Եթե դու ինձ համար գազար կամ, ծայրահեղ դեպքում, բողկ բերեիր: Իսկ հենց այնպես չարժե ընկերություն անել:

**Կորո** – Ես կարծում էի՝ օգուտի համար չէ, որ ընկերանում եմ:

**Նապո** – Բա ինչի՞:

**Կորո** – Հենց այնպես: Որովհետև սիրում եմ իրար:

**Նապո** – Ի՞նչ է նշանակում հենց այնպես: Դու՝ ինձ, ես՝ քեզ... Ես գործարար նապաստակ եմ: Այնպես որ անօգուտ ընկերությամբ խնդրում եմ գլուխս չտանել:

**Քևո** (*Նեղանալով Կորոյի փոխարեն*) – Կորոն ամենևին էլ գլուխ չի տանում, այլ առաջարկում է մաքուր սրտով: Երևում է՝ դու սիրտ էլ չունես: Սովորական մի կրծող ես: Գյուղատնտեսության վնասատու:

**Նապո** – Այդ ե՞ս եմ վնասատուն: Վնասատուի՞ց եմ լսում:

**Քևո** – Իսկ ո՞վ է բանջարանոցներից գողություն անում:

**Նապո** – Իսկ ո՞վ է բինձի արտերը ոտնատակ տալիս, տրորում:

**Կորո** (*Քևոյին*) – Գործ չունես դրա հետ: Նա իրոք շատ գործարար է:

**Քևո** – Հո իզուր չեն կրծող անվանել:

**Նապո** – Դեռ վիրավորում էլ եք, հա՞: Կորե՛ք այստեղից անմիջապես:

**Նապաստակներ** (*Միասին*) – Կորե՛ք այստեղից...  
Կորե՛ք այստեղից...

**Կորո** – Եվ կգնանք:

**Քևո** – Ինքներս կգնանք:

**Կորո** – Այնքան էլ չվախեցանք ձեզնից: (*Հեռանում են*):

**Նապո** (*Նրանց հետևից*) – Բարով գնաք... (*Լարում է լսողությունը*): Դարձյալ ինչ-որ բան է շրշում... Թաքնվեմ: (*Պահվում է բնի մեջ, քողարկում բնի մուտքը: Ծառից ցած է սողում Ուշափ վիշապի գեղեցիկ, գալարուն մարմինը:*)

**Ուշափ** – Դարձյալ ուշացա: Ես հասկացա, թե ում են որոնում նրանք: Ստիպված եմ զբաղվել առյուծի ձագով: Արժե, որ շտապեմ: (*Հետ է սողում*): Ծուռով կերևան: Այստեղ կապասեմ: (*Երգում է ֆշացնելով*).

Վիշշապ Ուշափ են ինձ կոչում,  
Եվ եսս ուժժեղ եմ կարգին,  
Փառավոր մի ճաշշ կունենամ  
Կորո կոչչվող այսսս ձձագից...

(*Մոտեցող ճամփորդների երգը*).

Քեռի Ընձոյի խորհրդով  
Աշխարհը ոտքի տակ կտանք,  
Ինչ-որ մի տեղ,  
Մեզնից հեռու  
Ապրում է մի Հիպպոպոտամ...

(*Գալիս են Կորոն և Գևոն*)

**Կորո** – Կանչե՞նք:

**Գևո** – Կանչենք:

**Գևո և Կորո** (*Միասին*) – Հիպպոպոտամ... Հիպպոպոտամ...

*Ծառից կախվում է Ուշափի գլուխը:*

**Ուշափ** – Դուք ի՞նձ եք կանչում: Ես լսում եմ ձեզ:

**Կորո** (*Կասկածանքով*) – Հիպպոպոտամը դո՞ւք եք:

**Գևո** – Մենք այնքա՞ն ենք ձեզ որոնել, այնքա՞ն ենք որոնել...

**Ուշափ** – Ես Մայրաստանի նշանավոր Հիպպոպոտամն եմ: Իմ անունը... *(Դահլիճին)* Ի՞նչ անվանեմ ինձ: Երևի պիտի «Հ» տառով մի անուն գտնել... *(Կորոյին և Ընծոյին)* Իմ անունը Համբո է՝ Հիպպոպոտամ Համբո:

**Կորո** – Իսկ իմ անունը Կորո է: Ես առյուծի ձագ եմ: Իսկ սա գետածի է, անունը՝ Գևո: Ինձ է ուղեկցում:

**Ուշափ** – Ծանոթացանք: Ես հիմա լսում եմ ձեզ:

**Կորո** – Մեծարգո և արժանապատիվ Հիպպոպոտամ Համբո: Ես ձեզ որոնել եմ ամբողջ Մարաստանում, որպեսզի առաջարկեմ ձեզ իմ հավատարիմ ընկերությունը: Խնդրում եմ, դարձե՛ք իմ ընկերը:

**Գևո** – Ես էլ եմ խնդրում, որ դառնաք նրա ընկերը:

**Կորո** – Քեռի Ընծոն մեզ ասաց, որ ամբողջ Մայրաստանում Հիպպոպոտամից լավ ընկեր չենք գտնի: Այդ մասին ես գրքում կարդաց:

**Ուշափ** – Նա չի սխալվել. ինձանից լավ ընկեր ո՛չ մի տեղ չեք գտնի:

**Կորո** – Ուրեմն՝ դուք համաձայն եք:

**Ուշափ** – Մեծագույն հաճույքով:

**Կորո** – Ուռաաա՛:

**Գևո** *(Կորոյին՝ շշուկով)* – Նա ինձ ոնց որ դուր չի գալիս:

**Կորո** *(Գևոյին՝ շշուկով)* – Ինչո՞ւ, գեղեցի՛կ է, քաղաքավարի՛, նախշո՛ւն:

**Ուշափ** – Այդ ի՞նչ եք փսփսում... Հասարակության մեջ այնքան էլ գեղեցիկ չէ: Գիտե՞ս ինչ, քաղցրի՛կս, քանի որ մենք արդեն ընկերներ ենք, արի նստիր, այ՛ այստեղ:

*Կորոն նստում է Ուշափի դիմաց: Ուշափը ուշադիր դիտում է Կորոյին: Ուշափի աչքերը բռնկվում են կանաչ լոյսով:*

**Ուշափ** – Տես իՆչ կանաչ են իմ աչքերը...

**Կորո** – Տարօրինակ է. նայում եմ ու պոկվել չեմ կարողանում:

**Ուշափ** – Ծարժվել նույնպես չես կարողանում:

**Կորո** – Իսկապես որ չեմ կարողանում:

**Ուշափ** – Ձգո՞ւմ ես ինչ հաճելի է, թանկագի՛նս:

**Կորո** – Բա՛ց թողեք ինձ...

**Ուշափ** – Քն-ի-ի-ր, քահ-քահ: Ես քեզ չեմ պահում:

**Կորո** – Պահում ես: Այդպիսի աչքերով մի՛ նայեք ինձ:

**Գևո** (*Անհանգստացած*) – Մի՛ նայեք նրան:

**Ուշափ** – Քա՛հ, քա՛հ, քա՛հ... Ես վիշապ Ուշափն եմ:

**Գևո** – Ուշա՞փը: Ձեր մասին Նապաստակն է մեզ պատմել: Չհամարձակվե՛ք նայել Կորոյին: Բա՛ց թողեք նրան:

**Կորո** – Կարծես թե քարացել եմ...

**Ուշափ** – Իմ հայացքից բոլորն են քարանում: Ես քեզ հիպնոսացրել եմ:

**Գևո** (*Ուշափին*) – Սուտասան:

**Ուշափ** – Հայիոյի՛ր, հայիոյի՛ր: Ես միայն հրձվում եմ և ուրախանում:

**Գևո** – Հիմա ես քո պոչը կտորոտեմ:

**Ուշափ** – Հապա փորձձձիր: Եսսս նրան անմիջջջահես կխեղդեմ գրկիսսս մեջ:

**Գևո** – Իսկապես ցավացնում ես Կորոյին... (*Վախենում է շարունակել*):

**Ուշափ** (*Ինքնագոհ*) – Կուլ կտամ ու վերջ:

**Գևո** (*Թախանձանքով*) – Համբո ջան, Համբիկ ջան... Այսինքն՝ Ուշա՛փ ջան, բա՛ց թողեք Կորոյին:

Տեսեք՝ ի՞նչ լղարիկն է նա, և ի՞նչ չաղլիկն եմ ես: Ինձ կույ տվեք նրա փոխարեն:

**Ուշափ** (*Մտահոգ*) – Ճիշտ է: Բայց դու ինձ համար մի քիչ չաղլիկ ես, վայ թե չկարողանամ քեզ կույ տալ: Կխեղդվեմ:

**Գևո** – Բաց թողեք Կորոյին, ինչ կամենաք՝ ես կանեմ ձեզ համար:

**Ուշափ** – Համաձայն եմ, ուրեմն՝ ինձ մոտ բեր Նապաստակ Նապոյին: Ամեն անգամ նրան հիշելիս բերանիս ջուրը վազում է: Նապաստակը հրաշալի ուտեստ է: Դու ինձ՝ Նապաստակ ին, ես քեզ Կորյունին: Ահա՛ իմ պայմանը:

**Գևո** – Նա չի համաձայնի...

**Ուշափ** – Դա արդեն իմ գործը չէ: Քեզ տասը թույն ժամանակ: Բերեցիր՝ լավ, չբերեցիր... ինձանից չնեղանաք:

**Կորո** – Վա՛յ, վա՛յ...

**Գևո** (*Վձռակյան*) – Կբերեմ: (*Վազում է*):

Գևոն վազում է Ուշափի եկած հակառակ ուղղությամբ, և տեսարանը փոխվում է: Ահա և Նապոյի բույնը: (*Դիմելով դահլիճին*).

Ի՞նչ անեմ, հը՞... Ի՞նչ անեմ, որ թե՛ Կորոյին փրկեմ, թե՛ Նապոյին չզոհեմ: Նապոն, չնայած բավական եսասեր, բայց կենդանի արարած է, խիղճս ինձ կսպանի, եթե իմ պատճառով նրան մի վատ բան պատահի, և հետո՝ նրան ո՞նց դուրս բերեմ իր բնից: Ինչպե՞ս ստիպեմ, որ մոտենա Ուշափին: Ախր Նապոն շատ է վախենում նրանից... Ժամանակն անցնում է, իսկ ես դեռ չեմ որոշել անելիքս... (*Մոտենում է բնին*): Հա՛, իմացա՛ ... Նապի՛կ... Դուրս արի մի թուփով:

*Նապոն դուրս է հանում գլուխը:*

**Նապո** (*Դժկամ*) – Ինչո՞ւ հետ եկար, որպեսզի նորից վնասատու և կրծող անվանե՞ս:

**Գևո** – Ների՛ր ինձ, Նապո՛ ջան: Բառերս հետ եմ վերցում:

**Նապո** – Դե լա՛վ, ասա, ինչո՞ւ ես հետ եկել:

**Գևո** – Ուզում եմ հետոյ խաղալ:

**Նապո** – Հետս խաղա՛լ:

**Գևո** – Ուզում եմ հետոյ աչքակապուկ խաղալ:

**Նապո** (*Ոգևորված*) – Աչքակապո՞ւկ: Արի խաղանք: (*Դուրս է գալիս բնից*): Բռնողը դու ես:

**Գևո** – Սրա՛ն տեսեք: Թող հաշվելուկը որոշի:

**Նապո** – Միայն թե աղվեսություն չանես:

**Գևո** – Ինչի՞ տեղ ես դրել ինձ:

Բկլիկ Նապոն  
Գնաց թափով,  
Գոհ ու կայտառ  
Մտավ անտառ:  
Կրծեց ջահել  
Թուփ ու կեղև,  
Հետքն իր թողեց  
Ամեն տեղ էլ:

Դու ես բռնողը:

**Նապո** – Չէ՛, դու ես:

**Գևո** – Չէ՛, դու ես:

**Նապո** – Է՛հ, բախտս չբերեց: (*Գևոն կապում է Նապոյի աչքերը, պտտեցնում է տեղում երեք անգամ*):

**Գևո** – Դե՛, հիմա բռնի՛ր... Այստեղ եմ... Կու-կու... Չե՛ս բռնի... Չե՛ս բռնի:

**Նապո** – Լավ էլ կբռնեմ: Կտեսնես ոնց կբռնեմ:

*Թփերի հետևից ծիկրակում են նապաստակները:*

**Նապաստակներ** (*Միասին*) – Բռնի՛ր նրան... Բռնի՛ր նրան... (*Թաքնվում են*):

*Խաբելով՝ Գևոն Նապոյին տանում է իր հետևից: Պատկերը փոխվում է: Ուշափն ու Կորոն առաջվա պես նստած են դեմ դիմաց: Ուշափի աչքերն առաջվա պես փայլատակում են կանաչ լույսով:*

**Կորո** – Չեք էլ ամաչում: Մենք առաջվա պես ուզում էինք ձեզ հետ ընկերանալ: Իսկ դո՞ւք...

**Ուշափ** – Դու ինձ ամոթանք մի՛ տա, հո՛ւմ կաթնակեր, իմացի՛ր, թե ո՛ւմ ես ընկերություն առաջարկում:

**Կորո** – Ա՛յ, կտեսնե՛ք, կվճռեն ձեզ Մայրաստանից այսպիսի չար կատակների համար: Չեք էլ ամաչում, փոքրիկներին եք սկսել խաբել:

**Ուշափ** – Դու ինձ ամոթանք մի՛ տուր: Մեկ է, ես ամոթ չունեմ... *(Լսվում է ոնց են մոտենում Գևոն ու Նապոն):* «Չէ՛, չե՛ս բռնի... Չե՛ս բռնի... Լավ էլ կբռնեմ... Չէ՛, ոնց որ թե բախտս բերում է»:

*Խաղալով մոտենում են:*

**Գևո** – Ասում եմ՝ չես բռնի...

**Նապո** – Դե տես՝ ոնց կբռնեմ... *(Գևոն միտումնավոր թուլանում է, որ Նապոն կարողանա իրեն բռնել, և պոկում է աչքերի կապը):* Բռնեցի-ի-ի՛...

**Ուշափ** *(Թողնում է Կորոյին սողում դեպի Նապոն)* – Ինքդ էլ բռնվեցիր, միամիտ երկարականջ:

**Գևո** *(Նապոյին)* – Շուտ ծլկի՛ր, Նապո՛ (կանգնում է Նապոյի և մոտեցող Ուշափի արանքում): Փախի՛ր, շո՛ւտ...

**Նապո** *(Նկատելով Ուշափին)* – Վա՛յ... *(Ճարպիկ ցատկով կորչում է տեսադաշտից):*

**Ուշափ** *(Գևոյին)* – Լավ հիմարացրիր ինձ... *(Սպառնալից սողում է դեպի Գևոն):*

**Կորո** *(Անմիջապես կանգնելով Գևոյի կողքին)* – Հապա փորձիր:

**Ուշափ** – Եվ կփորձեմ:

**Կորո** – Փորձի՛ր, փորձի՛ր...

**Ուշափ** (*Անվստահ*) – Եվ կփորձեմ...

**Կորո** – Ընկերական ճանկերիս և ատամներիս համը կտեսնես:

**Գևո** – Եվ իմ իսկական կշիռը կտեսնես:

**Ուշափ** (*Չարացած*) – Երկուսին չեմ հաղթահարի:  
(*Հեռանում է՝ ցուցադրելով երկար ու գալարուն մարմինը*):

**Գևո** (*Հետևից*) – Կորի՛ր Մայրաստանից:

**Կորո** – Ծատ շնորհակալ եմ, Գևո՛, դու ինձ փրկեցիր:

**Գևո** (*Ծփոթմունքով*) – Ի՛նչ ես ասում, ամեն Գետաձի  
նույն կերպ կվարվեր: Իսկ դու ի՛նչ էիր զգում,  
երբ նա քեզ հիպնոսացրեց:

**Կորո** – Զգում էի, որ չեմ կարողանամ պոչս շարժել:  
Բայց ոչ թե հիպնոսեց, այլ հիպպոպոնացրեց:

**Գևո** – Չէ՛, հիպպիպի...

**Կորո** – Չէ՛, հիպպեպպե...

**Գևո** – Պիպի...

**Կորո** – Պեպե...

**Գևո** – Հիշեցի: Ոչ պիպի, ոչ էլ՝ պեպե, այլ  
հիպնոսացրեց:

**Կորո** – Հետո, երբ նա շրջվեց դեպի Նապաստակը,  
ես անմիջապես ազատվեցի հիպպի... այդ  
հեպպե... այդ հիպնոսից: Հիմա գիտե՞ս՝ ի՛նչ  
կանենք:

**Գևո** – Ի՛նչ:

**Կորո** – Կշարունակենք ճանապարհը ու կփնտրենք  
առեղծվածային Հիպպոպոտամին:

*Հեռանում են՝ երգելով իրենց երգը:*



## ԵՐԿՐՈՐԴ ԳՈԾՈՂՈՒԹՅՈՒՆ

*Լիժ՝ անտառում: Լճափին հպարտորեն ձեմում է սիրամարգ Սիրակը: Պոչը հավաք է, բայց շնորհիվ գլխին ցցված գեղեցիկ խոպոպի՝ զուգված-զարդարվածի տպավորություն է թողնում:*

**Սիրակ** – Սիրամարգ եմ՝ Սիրակ անվամբ,

Ուզում եմ, որ իմանաք:

Խղճուկներդ կարող եք լոկ

Ինձ նայելով հիանալ,

Հիանալ ու սքանչանալ,

Զարմանալ ու զմայլվել

Եվ զայրանալ, որ չեք կարող

Երբևէ ինձ նմանվել:

*(Դահլիճին)* Դուք երևի կարծում եք, որ գլուխս զարդարող այս գեղեցիկ թագն է իմ միակ հարստությունը: Ճիշտ կռահեցիք, իսկ հիմա ուշադիր նայեք ինձ... *(Հովհարի պես բացում է գեղեցիկ պոչը, որն իսկապես հրաշալի է):* Հը՞... Ո՞նց է... Իհա՛րկե... Ե՛ս եմ այս երկրի փառքն ու պարծանքը: Գեղեցկության մրցանակը, առաջին մրցանակը և «Միստր Մայրաստան» տիտղոսը, պատվավոր տիտղոսը ես ստացա:

Ինձ տեսնելու, ինձանով հիանալու համար գալիս են հեռուներից, ևույնիսկ՝ արտասահմանից: Իրոք որ ես զարմանալի եմ, հիանալի եմ, սքանչելի եմ, կուրացուցիչ եմ... *(Լարում է լսելիքը):* Երգում եմ:

Այո, երգում եմ: Բառերը չեմ կարողանում հասկանալ: Երևի ինձ նվիրած երգ է: Երևի գալիս են ինձանով զմայլվելու ու հիանալու: Գալի՞ս են, թող գան: Ես սիրում եմ, երբ հիանում ու զմայլվում են ինձանով:

*Մոտենում է Կորոյի և Գևոյի երգի ձայնը:*

Հետ չենք դառնա, թե չգտանք,  
Հենց որ գտանք  
Նոր հետ կգանք,  
Ուր էլ լինես, սպասի՛ր մեզ,  
Գալիս ենք քեզ, Հիպպոպոտամ:

Չէ՛, այս երգը իմ պատվին գրված երգ չէ:  
Նրանց երգը ինչ-որ Հիպպոպոտամի մասին  
է: Տարօրինակ է:

*(Գալիս են Կորոն ու Գևոն: Սիրամարգ Սիրակը ձեմում է  
ևրանց առջև):* Հը՞, ո՞նց է, հավանո՞ւմ եք...

**Կորո** (*Զարմացած*) – Երբեք չեմ տեսել նման գեղեց-  
կություն:

**Գևո** – Ես էլ չեմ տեսել:

**Սիրակ** (*Գոհ*) – Այո՞... Իսկապե՛ս... Բա ո՞նց...

**Կորո** – Ասացե՛ք, խնդրեմ, դուք պատահմամբ Հիպ-  
պոպոտոտամը չե՞ք...

**Գևո** (*Շշուկով*) – Պետք չէ, մի՛ հարցրու: Մոռացա՞ր  
Ուշափին... Նոր փորձանքի մեջ չընկե՞նք  
հանկարծ:

**Սիրակ** – Ո՛չ, ես Հիպպոպոտամը չեմ: Ես լսել եմ,  
որ Հիպպոպոտամը բավականին անձոռնի,  
եթե չասենք՝ այլանդակի մեկն է:

Իսկ ես՝ Մայրաստանի փառքն ու պար-  
ձանքն եմ սիրամարգ Սիրակը:

Իսկ դուք ովքե՞ր եք, կարծես թե ձեզ չեմ  
տեսել իմ երկրպագուների շարքում:

**Կորո** – Ես Կորյուն Կորոն եմ, իսկ նա Գետաձի Գևոն է:

**Գևո** – Այո՛, ես Գևոն եմ:

**Կորո** – Մենք հեռվից ենք գալիս: Ես հիացած եմ ձեր  
չտեսնված գեղեցկությամբ:

**Սիրակ** – Շատերն են հիացած, բայց հաճելի է, որ

դու նույնպես հիացած ես:

**Գևո** – Ես էլ եմ հիացած:

**Սիրակ** – Չեմ կասկածում: Խնդրեմ, նայեցեք ու հիացեք, քանի որ այդքան երկար ճանապարհ եք անցել: *(Փումփուշանալով, հավաքելով ու բացելով պոչը՝ սիրամարգը ցուցադրում է իր գեղեցկությունը):*

**Կորո** *(Գևոյին)* – Ա՛յ թե նրա հետ ընկերանայի: Ոչ ոք, ինձանից բացի, այդպիսի գեղեցիկ ընկեր չէր ունենա:

**Գևո** – Հազիվ թե նա կամենա քեզ հետ ընկերություն անել: Դու մի սովորական առյուծի ձագ ես, իսկ նա՝ ամբողջ երկրի փառքն ու պարծանքը:

**Սիրակ** – Ընկերություն՞ն: Ինչո՞ւ չէ: Հաճույքով կդառնամ քո ընկերը: Ընկերը միակ բանն է, որ մինչև հիմա չեմ ունեցել:

**Կորո** – Ես անչափ ուրախ եմ:

**Գևո** – Կորոն հավատարիմ ընկեր կլինի:

**Սիրակ** – Չեմ կասկածում:

**Կորո** – Մենք իրար հետ կգրուցենք, ինչպես զրուցում են իսկական ընկերները:

**Սիրակ** – Իհարկե, կգրուցենք: Առավոտից մինչ իրիկուն դու կխոսես իմ աննման գեղեցկության, իմ աննման հմայքի մասին, և ես սիրով կհամաձայնեմ քեզ հետ:

**Կորո** – Այո՛, մենք այդ մասին էլ կխոսենք: Նաև ուրիշ բաների մասին...

**Սիրակ** – Հասկանալի է, ոչ միայն իմ գեղեցկության: Դու կխոսես Մայրաստանի փառք ու պարծանքի մասին և այն մասին, թե ինչպես են բոլորը նախանձում ինձ, իսկ ես ավելի կգեղեցկանամ, կդառնամ ավելի հմայիչ:

**Կորո** – Ես կարծում էի, որ խաղալու ժամանակ էլ

կունենանք:

**Սիրակ** – Իհարկե: Անպայման կխաղանք: Դու կձևացնես, իբրև նոր ես տեսնում ինձ, զամացած կնայես ու կբացականչես. «Ի՛նչ անևման, ի՛նչ անևկարագրելի գեղեցկություն... Մի՞թե ես քնած չեմ, մի՞թե այսպիսի հրաշալիք գոյություն ունի իրականում»:

**Կորո** (*Հոգևած*) – Իսկ դո՞ւք:

**Սիրակ** – Իսկ ես կբացեմ ու կփակեմ իմ պոչը, կձեմեմ հետ ու առաջ: Շատ հրապուրիչ խաղ կլինի: շա՛տ...

**Կորո** (*Հիասթափված*) – Այո՛... Ավելի լավ բան չես հորինի... (*Գևոյին*) Գևո՛, արի շարունակենք մեր ճանապարհը: Կարծես թե ես ոչ մի ցանկություն չունեմ ընտրություն անելու այս «փառք ու պարծանքի» հետ:

**Սիրակ** (*Չարացած և այդ պաճառով էլ՝ տհաճ ձայնով*) – Վա՛խ... վա՛խ... վա՛խ...

Դա քեզ ձեռ չի տալիս: Դե գևա որտեղից եկել ես քո այդ հաստափոր Գևոյի հետ:

**Գևո** – Իսկ դուք մեզ մի վիրավորեք:

**Կորո** – Այո՛, խնդրում եմ չգոռալ, մանավանդ՝ ձեր ձայնը ո՛չ հրաշալի է, ո՛չ էլ սքանչելի:

**Սիրակ** – Անձաշակներ... (*Փքվում է, խզխզացնում վրդովմունքից և ամբարտավան տեսքով հեռանում*):

*Եվ նույն պահին ծառից ցած է ցատկում երկարապոչ կապիկ Աբիկը: Նա էլ է փքվում, խզխզացնում նմանակելով քիչ առաջ հեռացած Սիրակին՝ անցնելով Կորոյի ու Գևոյի առջևով:*

**Աբիկ** – Ես Մայրաստանի փառքն ու պարծանքն եմ: Իսկ դուք անձաշակներ եք: Հիացեք ինձանով, հպարտացեք ինձանով, սքանչացեք ինձանով:

(Գևոն և Կորոն թուլանում են ծիծաղից:)

**Գևո** – Քա՛հ, քա՛հ, քա՛հ... Ա՛յ քեզ ծաղրածու:

**Կորո** – «Փառք ու պարծանք»... Քա՛հ, քա՛հ, քա՛հ:

Աբիկ (Երգում է).

Անտառի մեջ աներկյուղ  
Ցատկոտում եմ ձյուղից ձյուղ  
Ու սևվում եմ շատ համով  
Կոկոսով ու բանանով:  
Էլ ուրիշ գործ չունեմ, չէ՛,  
Միայն խաղալ ու հրձվել,  
Կախվել ծառից գլխիվայր,  
Ուրախանալ ու ձոձվել...

**Կորո** – Ես գիտեմ, դու Կապիկն ես:

**Աբիկ** – Իսկ դու Առյուծի հիմարիկ տղան ես: (Գևոյին)

Իսկ դու, մեծափորիկ Գետաձին ես:

**Գևո** – Անունդ ի՞նչ է:

**Աբիկ** – Աբիկ:

**Գևո** – Լավ նմանակեցիր այդ պարծենկոտին:

**Աբիկ** – Կապկելու ու նմանակելու համար էլ տաղանդ է հարկավոր: Ում ուզենաս կարող եմ կապկել: Ուզում ես քեզ էլ նմանակեմ:

**Գևո** (Փոյթով) – Չէ՛, չարժե:

**Կորո** – Ինչո՞ւ չէ: Նմանակիր Գևոյին, խնդրում եմ:

**Աբիկ** (Նմանակում է) – «Ծա՛տ եմ խնդրում, ընկերացե՛ք Կորոյի հետ: Նա այնքա՛ն լավն է... Ծա՛տ հավատարիմ ընկեր կլինի ձեզ...»: Նմա՛ն է:

**Կորո** (Ծիծաղելով) – Այն էլ ինչպե՛ս:

**Գևո** (Շփոթված) – Իսկ իմ կարծիքով՝ ամենևին:

**Աբիկ** (Կորոյին) – Ուզո՞ւմ ես քեզ նմանակեմ:

**Կորո** – Երևի չարժե:

**Գևո** – Նմանակի՛ր, նմանակի՛ր...

**Աբիկ** – Ոչ մի դժվարություն: Ահա, խնդրեմ (դիմելով

*արմավենու ծառին*). «Մեծարգո և արժանապատիվ Հիպպոպոտամ... Ա՛խ, դուք Հիպպոպոտամ չեք, արմավենի եք... Ի՛նչ արած, մեծարգո և արժանապատիվ արմավենի, խնդրում եմ, դարձեք իմ ընկերը...»:

**Գևո** – Ինչպես՝ ջրի երկու կաթիլ...

**Կորո** (*Չոր*) – Ոչ մի նմանություն չեմ տեսնում (*Աբիկին*), իսկ դուք որտեղի՞ց գիտեք մեր մասին:

**Աբիկ** – Ես վաղուց եմ հետևում ձեզ: Դուք քայլում եք գետնով, իսկ ես՝ ցատկոտելով ծառից ծառ: (*Կորոյին*) Իսկ դու ինչո՞ւ ես հատկապես որոնում այդ Հիպպոպոտամին: Ինձ հետևույնպես կարելի է ընկերություն անել:

**Կորո** – Քեզ հե՞տ:

**Աբիկ** – Ըհը:

**Կորո** (*Շփոթված*) – Բայց դու բոլորին ծաղրում և կապիկություններ ես անում:

**Աբիկ** – Կապիկը պիտի կապիկություններ անի: Արի ես ու դու ընկերանանք: Կբլբլանք, գծություններ կանենք, կկախվենք ծառի ձյուղերից: Կոկոսի ընկույզներ կնետենք իրար վրա: Կուրախանանք:

**Կորո** – Իսկ երբ ձանձրանանք բլբլալուց, գծություններ անելուց, իրար վրա կոկոսի ընկույզներ նետելուց, հետո՞ ինչ պիտի անենք:

**Աբիկ** (*Անհոգ*) – Այն ժամանակ պոչս կծալեմ, ու մնա՛ս բարով:

**Կորո** – Ես կարծում էի, որ ընկերանում ես ընդմիշտ:

**Աբիկ** – Ի՛նչ է նշանակում ընդմիշտ:

**Գևո** – Ընդմիշտը ընդմիշտն է:

**Կորո** – Այսինքն՝ ամբողջ կյանքում:

**Աբիկ** – Ես դա չեմ հասկանում... Ընկերանանք-գվարձանանք, դու՝ ինձ, ես՝ քեզ ընկեր, իսկ երրորդը ավելորդ է... Մենք քեզ հետ չենք

խաղում:

**Գևո** – Իսկ ես չեմ էլ խնդրում:

**Կորո** (*Նեղացած՝ Գևոյի համար*) – Իսկ նա չի էլ խնդրում:

**Աբիկ** – Թող հեռանա այստեղից: Մենք սրտակից ընկերներ ենք, իսկ նա թող հեռանա այստեղից: Դու՝ մեզ, այսինքն՝ ինձ ու Կորոյին պետք չես:

**Գևո** (*Նեղացած*) – Ես ինքս կգնամ: Ինչո՞ւ ես դու ինձ քշում:

**Կորո** – Ինչո՞ւ ես քշում նրան:

**Աբիկ** – Որովհետև ես եմ ուզում ընկերություն անել քեզ հետ: Միայն ես: Դու հիմա իմն ես: (Գևոյի) Իսկ դու շարժվի՛ր, գնա՛ այստեղից: (Կոկոսի ընկույզներ է նետում Գևոյի վրա): Գնա:

**Գևո** – Վա՛յ, ցավում է: Գնում եմ, գնում եմ արդեն...

**Կորո** (*Աբիկին*) – Հանգիստ թող Գևոյին: Նա քեզ չի խանգարում:

**Աբիկ** – Ա՛ն քեզ ... Ա՛ն քեզ... (*Շարունակելով հարվածել Գևոյին*):

**Գևո** – Վա՛յ, վա՛յ...

**Կորո** – Հիմա ես քո ճաշը կեփեմ: (*Ցատկում է, որ բռնի Կապիկի պոչը, բայց վեջինս հայտնվում է ծառի գագաթին*):

**Աբիկ** – Երկուսդ էլ կորե՛ք այստեղից: Ձանձրացա ընկերություն անելուց: Հիմա ես ճոճվել եմ ուզում: (*Ճոճվում է պոչից կախված ու երգում իր երգը*):

**Գևո** (*Կորոյին*) – Ինչո՞ւ վիճեցիր նրա հետ: Ես կհեռանայի:

**Կորո** – Բա ինչո՞ւ էր քեզ քշում և ինչո՞ւ էր ընկույզներ նետում վրադ: Լսի՛ր, իսկ եթե նա ընդհան-

րապես գոյություն չունի՞:

**Գևո** – Ո՞վ գոյություն չունի:

**Կորո** – Հիպոպոտամը, էլ ո՞վ: Գուցե քեռի Ընձոն  
ինչ-որ բան շփոթե՞լ է:

**Գևո** – Մի հուսահատվիր: Անպաման կգտնես քո  
Հիպոպոտամին: Ա՛յ, կտեսնես, հաստատ  
կգտնես:

*(Հեռանում են՝ տխրորեն երգելով իրենց երգը).*

Հետ չենք դառնա, թե չգտնենք,

Հենց որ գտանք,

Նոր հետ կգանք:

Ուր էլ լինես, սպասի՛ր մեզ,

Գալիս ենք քեզ, Հիպոպոտամ:



## ՊԱՏԿԵՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գետի ծանծաղուտը: Ափին ընկած են գետաբերուկ ծառերի մնացորդներ: Թփուտներից դուրս է գալիս Քեռի Ընձոն: Նա հազնված է ինպես միշտ՝ պրոֆեսորի գլխարկ, թիկնոց և այլն:

**Քեռի Ընձոն** (*Դահլիճիկ*) – Ո՛ր ես, տեսես, նրանք՝ այդ հիանալի փոքրիկները՝ Գևոն և Կորոն: Դուք, իհարկե, հասկացաք, որ ես դիտմամբ նրանց ուղարկեցի առեղծվածային Հիպպոպոտամին որոնելու: Կհարցնեք, թե ինչո՞ւ: Իսկ ես կպատասխանեմ, որպեսզի Առյուծի հիմարիկ ձագը աշխարհ տեսնի, ինչպես ասում են՝ խելք հավաքի: Գևոն նվիրված է նրան հոգով ու մարմնով, բայց, չէ՛, նրան մի ուրի՛շ, անսովոր ընկեր է պետք: Ահա՛ թե ինչու ես նրան ուղարկեցի որոնելու Հիպպոպոտամին: Քա՛հ, քա՛հ, քա՛հ: Ամենահետաքրքիրն այն է, որ այդ Հիպպոպոտամին փնտրելու գնաց նաև փոքրիկ Գևոն... Դե լա՛վ, ոչի՛նչ... Ճամփորդությունից վնաս չի լինի, գոնե մինչև հիմա ոչ ոք չի տուժել: Ոչի՛նչ, որ երբեմն էլ կարող է դժվար ու վտանգավոր լինել: Հո չի կարելի անընդհատ դայակություն անել երեխաներին: Նրանք իրենք պիտի կենսական փորձ ձեռք բերեն... Այս խելոք միտքը հենց նոր ծագեց իմ ուղեղում: Գևամ, շտապ գրի առնեմ, որ չմոռանամ: (*Հեռանում է*):

(*Լսվում է Գևոյի և Կորոյի մոտեցող երգի ձայներ*).

Հետ չենք դառնա, թե չգտանք,  
Հենց որ գտանք,  
Նոր հետ կգանք:  
Ուր էլ լինես, սպասի՛ր մեզ,  
Գալիս ենք քեզ, Հիպպոպոտամ:

*(Գալիս են Գոն և Կորոն):*

**Կորո** – Այստեղ ինձ ամեն ինչ ծանոթ է թվում:

**Գևո** – Չի թվում, հենց այդպես է: Սա մեր գետն է: Ես լավ եմ ճանաչում մեր գետն ծանծաղուտները:

**Կորո** – Չեմ հասկանում:

**Գևո** – Ի՞նչ կա չհասկանլու: Մենք շրջեցինք ողջ Մայրաստանը ու վերադառնում ենք տուն: Եվ սա իմ սիրելի ջրառատ ծանծաղուտն է: Կարելի՞ է մի անգամ սուզվեմ:

**Կորո** – Միայն թե արագ:

**Գևո** – Հենց հիմա, միայն մի անգամ: *(Չլմփոցով նետվում է ջուրը):* Ի՞նչ երանություն...

**Կորո** – Չեմ հասկանում, հաճելի ինչ կա ջրի մեջ... Ֆու... *(Չզվանքով, կատվի նման թափահարում է ջրում թրջած թաթը):* Դո՛ւրս արի, շո՛ւտ:

**Գևո** *(Դուրս գալով ջրից)* – Հրաշալի է, թարմացնող... Տուն հասանք՝ ինձ ջրից դուրս չես հանի:

**Կորո** – Կարծես այս բլրակներից այն կողմ սկսվում են մեր տարածքները:

**Գևո** – Գևամ տեսնեմ: Սպասիր ինձ այստեղ: *(Գնում է):*

**Կորո** *(Դահլիճին)* – Ահա՛ ավարտվում է մեր ճանապարհորդությունը: Բայց նրան, ում որոնում էինք, ոչ մի տեղ չգտանք: Նա պիտի դառնար իմ լավագույն ընկերը: Է՛հ, ի՞նչ արած, ուրեմն՝ բախտս չբերեց:

*Գետաբերուկ ծառաբներից մեկը հանկարծ շարժվում է: Հայտնվում են կարճ ոտքեր, կանաչ գլուխ ու երկար պոչ: Կոկորդիլոս Դիլոսն է:*

*(Երգում է).*

Ես Դիլոսն եմ Կոկորդիլոս,  
Կոկորդիլոս Դիլոսը,  
Երջանկություն է ինձ համար

Ջրով լի ամեն փոս:  
Ես ուրախ ու լավ տղա եմ  
Բերանբա՛ց... Չէ՛, աչքաբա՛ց,  
Ով որ անցավ սրտիս միջով,  
Իմ սրտիս մեջ էլ մնաց..  
Հասկացա՛ր:

**Կորո** – Հասկացա:

**Դիլոս** – Ծատ հաճելի է: Սիրում եմ, երբ ամեն ինչ պարզ է ու հասկանալի: Ծատ հաճելի է, և ես առանց որևէ նախապայմանի, ուզում եմ հետո ընկերանալ: Ընկերանալք, և ոչ մի խոսք, պարզ ու շիտակ: Տևավարի:

**Կորո** – Իսկ դուք չե՞ք խաբում: Թե չէ, եղավ այսպիսի մի դեպք...

**Դիլոս** – Վիրավորում ես ինձ, փոքրի՛կս: Վիրավորում ես քո անվստահությամբ: Ես ուրախ-զվաթ Կոկորդիլոս եմ, ասածս արած է՝ առանց ավելորդ խոսք ու զրույցի: Ես քո ընկերն եմ անպայման: Դու իմ ընկերն ես, անպայման: Ամեն ինչ՝ պարզ ու շիտակ: Գնանք զբոսանքի:

**Կորո** – Ի՞նչ զբոսանքի:

**Դիլոս** – Ընկերական զբոսանքի: Ուրիշ ի՞նչ զբոսանք է լինում: Պարզ ու շիտակ, տևավարի:

**Կորո** – Ինչ-որ անսպասելի է այս ամենը: Ես նույնիսկ չեմ հասցրել մի կարգին մտածել:

**Դիլոս** – Մտածելու կարիք չկա: Մտածելս ո՞րն է, թող մտածեն մտածողները: Քիչ խոսք, շատ՝ գործ: Ես քեզ հետ ընկերաբար, դու ինձ հետ ընկերաբար: Ես ուրիշ Կոկորդիլոս եմ, առանձնահատուկ... Ինչ մտքումս է, այն էլ ատամներիս... լեզվիս ծայրին է: Ուզում էի ասել, ամեն ինչ՝ պարզ ու շիտակ: Գնացիք:

**Կորո** (*Տեղի տալով համառությանը*) – Դե լա՛վ, լա՛վ, իսկ ո՞ր ենք գնում, անտա՞ն:

**Դիլու** – Ինչո՞ւ անտառ:

**Կորո** – Բա էլ ո՞ւր:

**Դիլու** – Գետից բացի ես ուրիշ լավ տեղ չգիտեմ:

**Կորո** (*Վճռակալ*) – Չե՛մ ուզում, ես ջուր չե՛մ մտնի:

**Դիլու** – Սա ի՞նչ ստորությունն է: Ծատ լավ էլ կմտնես:

**Կորո** – Ես ջուր չե՛մ մտնի:

**Դիլու** – Լսի՛ր, փոքրի՛կ, դու ինձ մի՛ բարկացրու: Ես ջղայիս եմ: Դու իմ ընկերն ես, ուրեմն՝ կգաս:

**Կորո** – Չե՛մ գա:

**Դիլու** – Ծատ լավ էլ կգա՛ս: Ես ի՞նչ կոկորդիլու եմ, ուրախ - զվարթ Կոկորդիլու եմ:

Ասված է՝ արված է: Ամեն ինչ պարզ ու շիտակ: Տևավարի: Գևացիք: (*Կորոյին քաշում է դեպի ջուրը*):

**Կորո** (*Դիմադրելով*) – Թողե՛ք ինձ: Մի՛ քաշքշեք ինձ:

**Գևո** (*Բլրից ցած վազելով*) – Թողե՛ք նրան: Մի՛ քաշքշեք նրան:

(*Դիլուսը ձգնում է Կորոյին քաշել դեպի ջուրը: Գևոն բռնում է Կորոյի պոչից և ձգում հակառակ ուղղությամբ: Ի վերջո, հաշողվում է ազատել նրան Կոկորդիլոսից*):

**Դիլու** (*Գևոյին տհաճությամբ*) – Իսկ դու ո՞վ ես: Ի՞նչ գործ ունես այստեղ: Քեզ ո՞վ բան ասաց:

**Գևո** – Փորձե՛իր ասել, կանա՛չ ավազակ:

**Դիլու** – Եվ կասեմ: Չե՛մ վախենա: Հաստամո՞ւս:

**Գևո** – Դե հիմա դու տես...

(*Նետվում է Կոկորդիլոսի վրա: Կատաղի գոտեմարտ է տեղի ունենում նախ՝ գետափին, իսկ հետո՝ ջրի մեջ*):

**Դիլու** – Հաս-տա-մը-ռու... (*Կռվողները սուզվում են ջրի տակ*):

**Կորո** – Ի՞նչ է դուրս գալիս: Ուրեմն՝ ինձ նորից

խաբեցին: Նորից քիչ էր մնում, որ գոհվեի: Եվ նորից փրկողը Գևոն էր... Ինչ-որ շատ մնաց ջրի տակ...

(*Վախեցած*) Իսկ եթե հանկարծ ոչ թե նա Կոկորդիլոսին, այլ Կոկորդիլոսը նրան... Կոկորդիլոսի ատամներն ահավոր են: Ես շատ լավ տեսա մոտիկից...

(*Վազվզում է ափի երկայնքով*): Երկար մտածելու ժամանակ չկա, ճիշտ է, ջուր չեմ սիրում, բայց ի՞նչ արած, ընտրություն չկա: Հարկավոր է փրկել Գևոյին: (*Նետվում է ջուրը, սուզվում, դուրս է գալիս*): Չկա ոչ մի տեղ:

(*Նորից է սուզվում ու դուրս գալիս*): Ոչ մի տեղ չկան: Քիչ մնաց խեղդվեի... Ափ է դուրս գալիս, թափ է տալիս իրեն): Ի՞նչ եղան: Ինչո՞ւ չկան: Չլինի՞ Կոկորդիլոսը Գևոյին... (*Աստիճանաբար գիտակցում է կատարվածի ահավորությունը*): Չե՛մ ուզում... Գևո՛... Գևո՛ ջան... Գևույի՛կ... (*Վազվզում է ջրափով*) Գևո՛ ջան... Գևույի՛կ ջան... (*Լալիս է*):

*Հայտնվում է Քեռի Ընձոն:*

**Քեռի Ընձոն** – Այդ ո՞վ է այստեղ լալիս: Սա ի՞նչ բան է:

**Կորո** (*Լալով*) – Քեռի Ընձո... Քեռի Ընձո, Կոկորդիլոս Դիլոսը քիչ մնաց ինձ ջրի տակ տաներ... Իսկ երբ Գևոն պաշտպանեց ինձ, Գևոյին տարավ... Գևոն էլ չկա: Չկա իմ միակ, իմ վագույն ընկերը... Ջրի տակից դուրս է գալիս Գևոն:

**Գևո** – Ահա և ես... Տրա՛-լա՛-լա՛: Ինձ երկար կհիշի այդ կանաչ ավազակը:

**Կորո** (*Երջանկ*) – Գևո՛: Ո՞րք ես: Ո՞նց վախեցրիր ինձ:

**Գևո** – Ես նրան մի լավ ծեծեցի ջրի տակ:

*Գևոյի թիկունքում ջրից դուրս է գցվում կոկորդիլոսի դուռը:*

**Դիլու** – Հաս-տա-մոռ՝ւթ...

**Գևո** (Ծրջվելով) – Կերածդ քիչ էր, հա՞: Մի հատ էլ ստացիր: (Խփում է Կոկորդիլոսի գլխին, որը, տնքայով, սուզվում է ջրի տակ): Կորի՛ր Մայրաստանից:

**Քեռի Ընձո** – Երջանկություն է այդպիսի ընկեր ունենալը: Իսկ առեղծվածային Հիպպոպոտամի ձեր որոնումներն ինչո՞վ ավարտվեցին:

**Գևո** – Ոչ մի տեղ չգտանք նրան: Ձեր վիզը շատ երկար է: Քեռի Ընձո, խնդրում եմ, մի լավ ձեր շուրջը նայեք. գուցե տեսնե՞ք նրան մոտակայքում:

**Քեռի Ընձո** – Այո, նա մոտերքում է: Նույնիսկ առանց երկար վզի էլ նրան կարել է տեսնել:

**Կորո** – Իսկ նա ինձ ամենևին էլ պետք չէ, երբ կողքիս Գևոյի պես ընկեր ունեմ: Երևի ես շատ հիմար էի, որ այսպիսի ընկեր ունենալով որոնում էի ինչ-որ Հիպպոպոտամի:

**Գևո** (Ուրախացած) – Ուրեմն դու իմ ընկե՞րն ես:

**Կորո** – Ընդմիշտ քո ընկերն եմ: Եթե դու դեմ չես:

**Գևո** – Ո՞նց կարող եմ դեմ լինել... (Քեռի Ընձոյին) Բայց, այնուամենայնիվ, Քեռի Ընձո, ո՞ր է այդ առեղծվածային Հիպպոպոտամը:

**Քեռի Ընձո** – Հիպպոպոտամ՞ը: Այստեղ է:

**Կորո** – Այստե՞ղ:

**Քեռի Ընձո** – Այո՛, այստեղ:

**Գևո** – Հիպպոն այստե՞ղ է:

**Քեռի Ընձո** – Այո՛, ասում եմ: (Գևոյին) Նայիր ջրին և կտեսնես:

**Գևո** – Ուրեմն նա ջրի բնակի՞չ է: (Նայում է ջրին): Ոչինչ չեմ տեսնում:

**Քեռի Ընձո** – Ոչի՛նչ, ոչի՛նչ:

**Գևո** – Ոչի՛նչ՝ իմ անդրադարձումից բացի:

**Քեռի Ընձո** – Դա բավական է:

**Գևո** – Ինչպե՞ս:

**Քեռի Ընձո** (*Հանդիսավոր*) – Որովհետև, պատանի՛ բաեկամներ, որովհետև Գետածին և Հիպպոպոտամը նույնն են:

**Գևո** (*Շփոթված*) – Ա՛յ քեզ բան: Ե՞ս եմ Հիպպոպոտամը:

**Քեռի Ընձո** – Դո՛ւ ես, դո՛ւ, Գետածին՝ ւլ ջան: Այդպես է քո անունը լատիներեն:

**Գևո** – Հիպպոպոտամ՞:

**Քեռի Ընձո** – Նույն ինքը:

**Գևո** – Հնարավոր չէ: Չէ՞ որ դուք ասում էիք, որ նա շատ գեղեցիկ է: Իսկ ես... ինքներդ եք տեսնում:

**Կորո** (*Ձերմորեն*) – Ազնիվ խոսք, դու ամենագեղեցիկն ես ամբողջ Մայրաստանում:

**Քեռի Ընձո** (*Կորոյին*) – Ես անչափ ուրախ եմ, որ օգնեցի քեզ դա հասկանալ: Գետածիունկն ամեն անգամ օգնության էր հասնում քեզ, իսկ ազնիվ ու անձնուրաց արարքները ոչ միայն գեղեցկացնում են, այլև դարձնում են մեզ անփոխարինելի ընկերներ ու բարեկամներ: (*Շարունակում է բանաստեղծությամբ*):

Դու գանձ էիր փնտրում երկար,  
Երբ վաղուց գանձի տեր էիր:  
Փնտրում էիր այն միակին,  
Որին արդեն ընկեր էիր...

**Գևո** (*Հուզված*) – Շատ եք չափազանցնում:

**Կորո** – Հավատա՛, Գևո՛, ես էլ քեզ համար պատրաստ էի ամեն ինչի...

**Գևո** – Ես դա գիտեմ: Կորո, Գևո, Քեռի Ընձո (*երգում*)

*են միասին).*

Մայրաստանի երկրում ուրախ  
Միշտ էլ գարուն է տիրում:  
Բնիկները երկիրը այդ  
Ամենից շատ են սիրում:  
Մայրաստանի երկրում չքնաղ  
Կենդանիներ կան բազում,  
Թող գան մեզ հետ, ովքեր մեզ պես  
Ճամփորդել են երազում:

**Վերջ**



**ՎԵՐԱՆ ՈՒ  
ԱՆՖԻՍԱՆ**

Անֆիսա – կապիկ

Վերա – աղջնակ

Հայրիկ

Մայրիկ

Տատիկ

Դաստիարակչուհի

Դիմա

Հրշեջ

Բժիշկ

Գլխավոր բժիշկ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

### **Թե ինչպես Կապիկին Անֆիսա անվանեցին:**

Վարագույրի առջևով անցնում է հայրիկը, ձեռքին՝  
զամբյուղ, զամբյուղի մեջ՝ կապիկը: Հայրիկը քայլում է  
ու երգում.

Մի ծովային Ավստրալիայից  
Ծխախոտով տասը տուփ  
Մի կապիկ էր փոխանակել,  
Իր հետ առած բերել տուն:  
Տանը դստրիկ ունեմ մի լավ,  
Այս կապիկի պես աշխույժ,  
Կխաղան, կմտերմանան  
Ու կգբոսնեն ամենուր:  
Ես ու մայրիկն էլ անպայման  
Օրըստօրե կտոկանք,  
Որ փոքրերը օգնեն իրար,  
Իրար սիրեն ու հոգան:

**Հայրիկ** – Ահա՛ և մեր տունը: Դու այստեղ սպասիր,  
իսկ ես գնամ դստրիկիս բերելու: Հիմա ևս  
տատիկի հետ խաղում է բակում: Սա ջրի  
ծորակ է: Ծորակը չբացե՛ս: Չի՛ կարելի:  
Սեղանին ալյուր է: Ձեռք տալ չի կարելի: Սա  
սառնարան է: Ներս մտնել չի՛ կարելի:

(Գնում է)

Անֆիսան նախ և առաջ մտնում է սառնարան:  
Սառնարանը սկսում է ցնցվել ու դրրդալ: Կապիկը դուրս  
է նետվում սառնարանից՝ եղյամոտոված ու դողդողալով:  
Ձգում է սեղանի սփռոցն ու փաթաթվում սփռոցով: Մի  
քիչ տաքանալուց հետո սկսում է այլուր ցանել իր վրա,  
հետո մտնում է լոգարան, բացում է ծորակը ու ցողվում  
ջրով: Գիշերանոթը նկատելով՝ գլուխը խոթում է նրա  
մեջ ու չի կարողանում դուրս հանել: Սկսում է ձվձվալ:  
Ներս են գալիս հայրիկը, տատիկը և Վերան:

**Հայրիկ** – Հիմա կտեսնեք, թե ինչ անակնկալ եմ  
պատրաստել ձեզ համար:

**Վերա** – Թափված այլո՞րն է անակնկալը:

**Հայրիկ** – Ո՛չ, ո՛չ: Անակնկալը բոլորովին ուրիշ բան է:

**Տատիկ** – Գիշերանոթի մեջ մտած սատանի ձո՞ւտն  
է անակնկալը: (Վերցնում է կապիկին:) Խե՛ղճ  
կենդանի: Ամբողջովին թաց է: Ի՞նչ է սրա  
անունը:

**Հայրիկ** – Չգիտեմ: Երևի Ժուշկա:

**Տատիկ** – Ծո՞ւն է, ի՞նչ է:

**Հայրիկ** – Ուրեմն՝ Մուրկա:

**Վերա** – Կատո՞ւ է, ի՞նչ է:

**Հայրիկ** – Գուցե՞ Բուրյունկա:

**Տատիկ** – Կովերին են այդպես անվանում:

**Հայրիկ** – Դե՛, չգիտեմ: Լավ կլինի բոլորս միասին  
մտածենք, թե ինչ անուն տանք այս հրաշալի  
կենդանուն:

**Տատիկ** – Ի՞նչ կա մտածելու: Մեր հիմնարկում մի  
վարիչ էր աշխատում սրան շատ նման,  
անունն էլ՝ Անֆիս:

**Հայրիկ** – Եվ ի պատիվ վարիչ Անֆիսայի, կապիկին  
անվանեցինք Անֆիսա: Ծատ էլ լավ անուն  
է: Անֆիսա:

**Տատիկ** – Իսկ նա ի՞նչ է ուտում:

**Հայրիկ** – Բանան, անանաս, բառբաբ:

**Տատիկ** – Բանա՞նս որն է: Հիմա կստուգենք, թե ի՞նչ է ուտում: Սեղանին ենք դնում հաց, երշիկ, կարտոֆիլ, ապխտած, խաշած և հում ձկներ:

**Հայրիկ** (*Կապիկին մոտեցնում է սեղանին*) – Ուշադրությո՛ւն: Ելման դրությո՛ւն: Քայլով մա՛րշ:

**Տատիկ** – Երշիկը կերավ: Հացը կերավ: Կարտոֆիլը կերավ:

**Հայրիկ** – Ապխտած ձուկը կերավ, հում ձուկը կերավ, փորոտիքո՛վ կերավ, խաշած ձուկը կերավ: Ուռաաա՛:

**Տատիկ** – Իսկ գիշերանոթից օգտվել կարողանո՞ւմ է:

**Հայրիկ** – Հիմա կստուգենք:

*Գիշերանոթը տալիս են կապիկին: Վերջինս անմիջապես գլխին դնելով՝ նմանվում է նվաճողի:*

**Հայրիկ** – Օգնեցե՛ք: (*Դիմելով դահլիճին*)... Մենք կորանք:

*Վերան բերում է երկրորդ գիշերանոթը ու տալիս է կապիկին: Կապիկը նստում է գիշերանոթին:*

**Հայրիկ, տատիկ, Վերա** – Ուռաաա՛:

**Վերա** – Ուրեմն՝ չկորանք:

**Հայրիկ** (*Դահլիճին*) – Եվ, այսպես, կապիկն սկսեց ապրել մեզ հետ: (*Երգում է*).

Մեր Վերա դստրիկը

Ընկեր ունի լավ:

Նա ո՛չ կատու է, ո՛չ շուն է, ո՛չ հավ:

Արտասահմանցի աշխույժ մի տուրիստ է:

Նա կապիկ է մի, անունն՝ Անֆիսա:

### **Կրկներգ**

Եվ հայրիկն է ուրախ,

Եվ մայրիկն է ուրախ,

Էլ պետք չէ երկրորդ  
Քույրիկ ունենալ,  
Երբ որ կա կապիկն այս,  
Երբ որ կա տուրիստն այս,  
Երբ որ կա գեղեցիկ կապիկն այս՝  
Անֆիսկան:

**Տատիկ** – Վերան մեծանում էր տխուր ու մենակ,  
Այդպես նա կարող էր չար սիրտ ունենալ,  
Բայց հիմա նա էլ մեզ հետ միասին  
Կհոգա Անֆիսա կապիկի մասին:

**Հայրիկ** – Ահա, այսպես, հայտնվեց մեր տանը կա-  
պիկ Անֆիսան:

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

## *Թե ինչպես հարմարվեց Անֆիսան*

*Տատը խոհանոցում պտտում է մսաղացը: Անֆիսան պտտվում է շուրջը:*

**Հայրիկ** (Երգում է).

*Եվ հայրիկն է ուրախ,  
Եվ մայրիկն է ուրախ,  
Եվ պետք չէ երկրորդ  
Քույրիկ ունենալ...*

**Վերա** – Հայրիկ, ինչո՞ւ ես երգում, թե մայրիկն էլ է ուրախ, երբ մայրիկը դեռ ոչինչ չգիտե:

**Հայրիկ** – Մայրիկը ոչինչ չգիտի, բայց ես գիտեմ մեր մայրիկին: Հիմա մենք կզանգահարենք նրան, և մայրիկը հենց այդպես էլ կասի. «Ինչպիսի երջանկություն: Ա՛յ, դուք շա՛տ ապրեք: Եկեք նրան անմիջապես լողացնենք»:

*Մտնում է մայրիկը:*

**Մայրիկ** – Բարև ձեզ: Սա կապի՞կ է: Ավելի սարսափելի բան չէի՞ք կարող մտածել: Եկեք սրան անմիջապես...

**Հայրիկ** – Լողացնենք:

**Մայրիկ** – Հանձնենք որևէ մեկին:

**Տատիկ** – Այսպիսի կապիկը տալ ուրիշի՞: Ափսո՛ս է: Նա իմ օգնականն է:

*(Պտտում է մսաղացը):*

*Կապիկը մսաղացի մեջ է լցնում մերթ հաց, մերթ սոխ, մերթ սանր, մերթ ժամացույց, մերթ թաշկինակ:*

*Ֆարշի մեջ է խոթում տատիկի ակնոցը: Տատիկն առանց ակնոցի չի տեսնում ոչինչ:*

**Տատիկ** (*Ամեն անգամ, երբ կապիկը որևէ բան է խոթում մառդացի մեջ*) – Ծնորհակալ եմ, օգնականս: Ծնորհակալ եմ օգնականս: Տեսնո՞ւմ եք՝ միասին ինչքան շատ աղացինք: Լսո՞ւմ եք, ինչպես է խրթխրթում:

**Հայրիկ** (*Դահլիճին*) – Խրթխրթում էին ժամացույցը, վարտիքը, սանրը:

**Տատիկ** – Ահա և ճաշը պատրաստ է: (*Հայրիկին է տալիս ամենամեծ կոտլետը*):

**Հայրիկ** (*Դիտելով կոտլետը*) – Հրա՛ջք: Ես գիտեի, որ ժամացույցներ լինում են նաև ինքնահոսների, ռադիոընդունիչների, խաղալիքների մեջ, բայց որ ժամացույց են ավելացնում նաև կոտլետի մեջ՝ ոչ լսել էի, ոչ էլ տեսել: Սա էլեկտրոնային ժամացույցով ձապոնական կոտլե՛տ է:

**Տատիկ** – Ի՞նչ ձապոնական, հավի մսից պատրաստված սովորական կոտլետ է:

**Վերա** – Իսկ իմ կոտլետի մեջ կոճակ կա: Վա՛յ, ահա և ատամնավոր կոտլետ:

**Տատիկ** – Հիմարություններ ես դուրս տալիս: Ատամնավոր կոտլետներ չեն լինում:

**Մայրիկ** – Դրանք սանրի ատամներն են:

**Հայրիկ** – Դա իմ սիրելի սանրն էր: Դուք աղացել եք իմ սանրը, և այդ ամենի մեղավորը կապիկն է: Հարկավոր է նրան անմիջապես հանձնել մեկնումեկին: (*Գղալով ծեծում է կապիկին*): Ա՛ն քեզ, ա՛ն քեզ... սանրի համար, ժամացույցի համար...

*Անֆիսան լալիս է ու վազում է տատիկի մոտ:*

**Հայրիկ** – Հույս չունենաս, որ տատիկը քեզ կկարեկցի:



**Տառիկ** – Եվ կկարեկցեմ: Արի՛ ինձ մոտ, իմ խեղճ կապիկ: Քեզ հալածում ու ծեծում են գրալով:

**Հայրիկ** – Մեզ բոլորիս հալածողը ինքն է: Եթե նա մնա մեզ մոտ, չենք կարող վերահսկել նրան: Նա իմ բոլոր փողկապները կաղա մսաղացով:

**Տառիկ** – Խեղճ իմ Անֆիսա: Հիմա քեզ գրալով կկերակրեմ, միայն թե սպասիր ակնոցս գտնեմ:

**Հայրիկ** – Որոնելու կարիք չկա: Ակնոցդ իմ կոտլետի մեջ է:

**Տառիկ** – Օգնեցե՛ք: Ակնոցով կոտլետսնե՛ր: Այդպիսի կապիկ մեզ պետք չէ:

**Վերա** – Պետք է:

**Մայրիկ** – Մի՛ վիճեք: Ավելի լավ է եկեք թեյ խմենք: Ես ինքս կկերակրեմ նրան: Մեղք է կենդանին: Անֆիսա՛, արի՛ ինձ մոտ: Ո՛ր է իմ արծաթե գդալը:

**Հայրիկ** – Լռվել, մնացել է մսաղացում:

**Մայրիկ** – Խայտառակություն: Ծուտով մեր ամբողջ ունեցվածքը կհայտնվի մսաղացում: Այդպիսի կապիկ մեզ պետք չէ:

**Վերա** – Պետք է:

**Հայրիկ** – Լա՛վ: Թող այդպես լինի: Բոլորդ էլ ինչ-որ ջղային եք դարձել: Արի՛ այստեղ, Անֆիսա՛: Արի՛, թեյ տամ քեզ:

*Վերցնում է գավաթները:*

**Մայրիկ** – Վա՛յ, ո՞վ է պղպեղ լցրել գավաթիս մեջ:

**Հայրիկ** – Վա՛յ, ո՞վ է աղ լցրել գավաթիս մեջ:

**Տառիկ** – Իսկ իմ գավաթի մեջ մանանեխ է:

**Հայրիկ** (*Դահլիճին*) – Եվ այս բոլորը Անֆիսայի գործերն են: (*Մայրիկին*) Հիմա մեր տունը ոչ թե տուն, այլ դիվերսանտների ուսումնարան է:

**Մայրիկ** – Կարծես թե մեր տանը մի չար աճպարար է ապրում:

**Տատիկ** – Կամ էլ՝ չար ոգի:

**Վերա** – Իսկ մենք նրան կդաստիարակենք:

**Տատիկ** – Ո՛ւմ:

**Վերա** – Անֆիսային: Կդաստիարակենք և կդարձնենք բարի, բարի:

**Հայրիկ** – Նրան չի կարելի այստեղ թողնել: Մենք չենք կարողանա նրա հախից գալ: Նա բոլորիս էլ կթունավորի:

**Մայրիկ** – Իսկ նա ինձ դուր է գալիս: Մենք հերթով կհսկենք նրան: Մենք նրան Վերայի հետ կուղարկենք մանկապարտեզ:

**Բոլորը** – Ուռաաա՛:

**Տատիկ** – Որոշվեց, մեր այլանդակը մանկապարտեզ պիտի գնա:

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ

**Թե ինչպես Անֆիսան մանկապարտեզ գնաց**

Բեմում վարագույրի դիմաց, արևոտ առավոտ է:  
Հայրիկը Վերային ու Անֆիսային քաղաքային զբոսայ-  
գով տանում է մանկապարտեզ: Հնչում է երգը.

Առավոտ շուտ արթնանում եմ  
Մանուկները՝ մեծերի հետ:  
Առավոտ շուտ հագնվում եմ  
Մանուկները՝ մեծերի հետ:  
Մեծերի հետ դուրս եմ գալիս,  
Ծտապում եմ մեծերի պես:  
Գիտե՞ք՝ ուր եմ գնում նրանք՝  
Մանկապարտեզ,  
Մանկապարտեզ...  
Գրքեր եմ կարդում մանկապարտեզում,  
Խաղեր եմ խաղում մանկապարտեզում,  
Գծում եմ, ներկում,  
Հյուսում եմ, գործում,  
Փորում եմ, տնկում,  
Ծաղկում եմ, աճում մանկապարտեզում,  
Մանկապարտեզում...

Վարագույրը բարձրանում է: Մանկապարտեզի  
նախասենյակը: Հայրիկը բռնել է Վերայի ձեռքը, իսկ  
Անֆիսան նստել է նրա ուսերին:

**Հայրիկ** – Գիտե՞ք ինչ, մեր ընտանիքը համալրվել է:

**Դաստիարակչուհի** – Ծնորհավորում եմ: Սիրելի՛  
երեխաներ, եկեք բոլորս միասին շնորհա-  
վորենք Վերային: Նա ապերիկ է ունեցել:

**Հայրիկ** – Սա ապերիկ չէ:

**Դաստիարակչուհի** – Սիրելի՛ երեխաներ, շնորհավորենք Վերային, նա քույրիկ է ունեցել:

**Հայրիկ** – Սա քույրիկ չէ:

**Դաստիարակչուհի** – Սիրելի՛ երեխաներ, շնորհավորենք Վերային, նրանց ընտանքում նեգրի ձագուկ է հայտնվել:

**Հայրիկ** – Սա նեգրի ձագուկ չէ:

**Վերա** – Կապիկ է:

**Հայրիկ** – Այո՛, կապիկ է: Գորիլայի, շիմպանզեի, օրանգուտանգի ձագ:

**Երեխաներ** – Ծիմպան... Գուտան: Ազգանունը՝ Ծիմպան, անունը՝ Գուտան: Օրանգուտան... Օրանգուտային: Այդպիսի գույն է, օրանժեգուտայինն է գույն:

**Հայրիկ** – Կարելի՞ է, որ նա մնա մանկապարտեզում:

**Դաստիարակչուհի** – Կենդանաբանական անկյունո՞ւմ:

**Երեխաներ** – Ո՛չ, մե՛զ մոտ:

**Դաստիարակչուհի** – Այդպիսի իրավունք չկա:

**Երեխաներ** – Կա՛, կա՛:

**Հայրիկ** – Իսկ գուցե փորձե՞նք:

**Երեխաներ** – Փորձե՛նք, փորձե՛նք:

**Դաստիարակչուհի** – Լա՛վ, փորձե՛նք: Եթե նա ամբողջ օրվա ընթացքում իրեն լավ պահի, լավ ուտի, լավ քնի, լավ խաղա, լսի ու հարգի մեծերին, մենք նրան կթողնենք մեզ մոտ:

**Երեխաներ** – Ուռաաա՛:

**Դաստիարակչուհի** – Եվ, իհարկե, եթե երեխաները  
նույնպես իրենց լավ պահեն ու խելոք մնան:  
Խելոք կմնա՞ք, երեխանե՛ր:

**Երեխաներ** – Կմնա՛նք (երգում են).

*Գրքեր են կարդում մանկապարտեզում,  
Խաղեր են խաղում մանկապարտեզում,  
Գծում են, ներկում,  
Հյուսում են, գործում,  
Փորում են, տնկում,  
Ծաղկում են, աճում մանկապարտեզում,  
Մանկապարտեզում...*

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՈՐԴ

*Թե ինչպես էր Անֆիսան իրեն պահում  
մանկապարտեզում*

Երեխաները քայլում են շարքով և օրորում են տիկ-նիկներին: Շարքի վերջում քայլում է Անֆիսան՝ ճոճելով խաղալիք բեռնատար մեքենան:

**Հայրիկ** (Գլուխը հանելով վարագույրի հետևից՝ դիմելով դահլիճին) – Մենք բոլորս սպասում էինք հետաքրքրությամբ. կհաջողվի՞, թե՞ չի հաջողվի: Կհարմարվի՞ մեր Անֆիսան մանկապարտեզում, թե՞ չի հարմարվի: (Անհետանում է):

**Դաստիարակչուհի** – Երեխանե՛ր, այսօր մեզ մոտ հիգիենայի օր է: Ես ձեզ կսովորեցնեմ մաքրել ատամները և հագուստը: Կսովորեցնեմ օգտվել օձառից ու սրբիչից: Դուք բոլորդ էլ ունեք ատամի խոզանակ և ատամի մածուկ: Մածուկի պարկուճը բռնում ենք ձախ ձեռքով, իսկ խոզանակը՝ աջ ձեռքով: Անֆի՛սա, Անֆի՛սա, խոզանակը պետք է բռնել աջ ձեռքով և ոչ թե ձախ ոտքով: Եվ, հետո, ատամները մաքրում ենք ատամի և ոչ թե կոշիկի խոզանակով:

Եվ, այսպես, սկսում ենք: Անֆիսա՛, ինչո՞ւ ես լալիս: Մածուկը չիերիքե՞ց: Դե լա՛վ, լա՛վ, փոխարենը ատամի փոշի կտամ քեզ: Ահա՛, խնդրե՛մ, վերցրո՛ւ այս տուփը: Բռնի՛ր: Եվ այսպես խոզանակով մաքրում ենք ատամները՝ վերև-ներքև, վերև-ներքև: Հասկացա՞ր, Վերա՛: Ապրե՛ս: Հասկացա՞ր,

Մարուսյա՛: Ապրե՛ս: Հասկացա՞ր Բարինո՛վ  
Դիմա: Ապրե՛ս: Ի՞նչ ես անում, Անֆիսա՛: Քեզ  
ո՞վ ասաց, որ ատամների մաքրես ջահի վրա:  
Եվ, ընդհանրապես, մեզ վրա ատամի փոշի  
մի ցանիր: Օ՛յ, օ՛յ: Դե լա՛վ, անցնենք երկրորդ  
գործողությանը՝ հագուստների մաքրում:  
Խոզանակը բռնում ենք աջ ձեռքով: Ու շոյում  
ենք ինքներս մեզ՝ վերից վար՝ վերևից ներքև,  
վերևից ներքև: Անֆի՛սա, ինքդ քեզ շոյիր և  
ոչ թե Դիմային: Եվ հիմա մենք կոստյում ենք  
մաքրում և ոչ թե՝ ատամներ:

Անֆի՛սա, հիմա դու տես, թե ինչի ես  
նմանվել մաքրվելուց հետո: Հանգիստ թող  
Վերային: Հիմա, երեխանե՛ր, սկսում ենք  
երրորդ գործողությունը: Մոտենում ենք  
լվացարանին: Վերցնում ենք օձառը, օձա-  
ռում ենք ձեռքներս: Ձեռքներս, Անֆի՛սա, և  
ոչ թե ոտքերը: Ձեռքներս շփում ենք իրար:  
Անֆի՛սա, ինչո՞ւ ես գլուխդ խոթել լվացարանի  
մեջ: Անֆի՛սա, լվացարանից ջուր չեն խմում  
ու չեն նստում դրա վրա: Օգնեցե՛ք: Չէ,  
այսպես շարունակել հնարավոր չէ, Վե՛րա,  
որտե՞ղ թաքցնեմ սրան:

**Վերա** – Թաքցրեք պահարանում:

**Դաստիարակչուհի** – Շատ լավ միտք է: Անֆի՛սա,  
արի այստեղ: Կնստես այս պահարանում  
մինչև քեզ ազատ արձակելը: *(Կապիկին  
փակում է պահարանի մեջ)*: Երեխանե՛ր, դուք  
անշուշտ հասկացաք, թե ինչպես կարելի է  
մաքրել ատամները՝ վերևից ներքև: Եկեք  
կրկնենք: Մե՛կ-ե՛րկու, մե՛կ-ե՛րկու: Վա՛յ, Ան-  
ֆիսկայի պատճառով ես էլ սկսեցի ատամ-  
ներս մաքրել կոշիկի խոզանակով: *(Բացում  
է պահարանի դուռը և այնտեղից դուրս է նայում  
մի սարսափելի սև մարդ)*: Ֆանտոմա՛ւր: Ուր-  
վակա՛նը: Օգնեցե՛ք:

**Վերա** – Նադեժդա Ալեքսանդրովնա, դա Ֆանտոմա՛սը չէ: Անֆի՛սան է, Անֆի՛սան:

**Դաստիարակչուհի** – Անֆի՛սա, դու խանգարում ես մեզ: Լավ կլինի գնաս խաղահրապարակ ու խաղաս ավազներում: *(Ուղեկցում է Անֆիսային)*: Տեսնո՞ւմ եք, երեխանե՛ր, ով չի կարողանում իրեն խելոք պահել, նրան դուրս են անում:

**Վերա** – Իսկ նա արդեն այստեղ է:

**Դաստիարակչուհի** – Ինչպե՛ս թե: Ե՞րբ հասցրեց վերադառնալ:

*Անֆիսան հայտնվում է սպիտակ խալաթով ու բժշկի գլխարկով:*

**Անֆիսա** – Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ *(փորձում է լսել դաստիարակչուհու սիրտի աշխատանքը)*:

**Դաստիարակչուհի** – Սրանք որտեղի՞ց վերցրիր:

**Վերա** – Դրանք չորանում էին բակում:

**Դաստիարակչուհի** – Այդպե՛ս: Ուրեմն՝ չի կարելի նրան բակ թողնել: Առաջ՝ հնագույն ժամանակներում, հանցագործներին շղթայում էին հրանոթի արկին, որպեսզի հանցագործը չկարողանար փախչել ու միշտ էլ լիներ աչքի առջև: Քանի որ մենք հրանոթի արկեր չունենք, ստիպված ենք նրան շղթայել արդուկին:

**Դիմա** – Իսկ ինչո՞վ ենք շղթայելու:

**Դաստիարակչուհի** – Կշղթայենք, ավելի ձիշտ՝ կկապենք էլեկտրական լարով: Նա միանգամից կկորցնի իր շարժունակության, աշխուժության կեսը: *(Կապում է)*: Իսկ հիմա, երեխանե՛ր, շարվե՛ք: Գնում ենք ջրավազան՝ լողալու:

**Երեխաներ**– Ուռաաա՛:

**Վերա** *(Թնկթնկացող Անֆիսային)* – Անֆի՛սկա, լաց մի՛ լինի, լաց մի՛ լինի: Ես կօգնեմ քեզ:



*(Վերցնում է կաշկանդող արդուկը, ու նրանք  
բայլում են կողք կողքի):*

### **Վարագույր**

*Բեմում երևում է ջրավազանի մի եզրը:*

**Դաստիարակչուհի** – Պատրա՛ստ ենք, երեխանե՛ր:  
Ցատկում ենք այստեղից, դուրս ենք գալիս  
այնտեղից, որպեսզի ջրից դուրս եկողները  
չխանգարեն ցատկողներին: Սկսում ենք:  
Մե՛կ, ե՛րկու, ե՛րեք: *(Երեխաները հերթով ցատ-  
կում են ջուրը: Վերջում ցատկում է Անֆիսան:  
Ոտքին կապված արդուկը կաշկանդում է նրան,  
և նա կախվում է օդում):*

**Վերա** – Չվախենա՛ս, Անֆի՛սա: Հիմա ես կօգնեմ  
քեզ: *(Վերցնում է արդուկը, մոտենում է ավազա-  
նին ու նետում ջրի մեջ):* Վա՛յ, Նադեժդա Ալեք-  
սա՛նդրովա, Անֆիսան խորտակվեց երևի:  
Նա սուզվեց ու դուրս չի գալիս: Արդուկը չի  
թողնում նրան:

**Դաստիարակչուհի** – Ո՛ր է նա:

**Վերա** – Զրի տակ:

**Դաստիարակչուհի** – Օգնեցե՛ք: Փրկեցե՛ք:

### **Վարագույր**

*Վարագույրի հետևից հայտնվում է հայրիկի գլուխը:*

**Հայրիկ** – Անֆիսկային, իհարկե, փրկեցին, արդուկը  
արձակեցին ու չորացրին... Այս անգամ  
որոշեցին կապել ջեռուցման մարտկոցին:  
Այդպես ավելի ապահով էր:

### **Վարագույրը բացվում է**

*Դարձյալ մանկապարտեզի այն դասասենյակն է,  
որտեղ երեխաները հիգիենայի դասերն էին սովորում:  
Անֆիսան, սավանով փաթաթված, գրկել է դաստիարակ-  
չուհուն:*

**Դաստիարակչուհի** – Այժմ, երեխանե՛ր, պետք է սովորենք օգտվել մկրատից: Մկրատ բոլո՞րն ունեն:

**Երեխաներ** – Այո՛:

**Դաստիարակչուհի** – Թուղթը բռնում ենք ձախ ձեռքով, իսկ մկրատը՝ աջ ձեռքով: Իսկ ո՞ւր է իմ մկրատը: Ոչ ոք չի՞ վերցրել իմ մկրատը: Անֆի՛սա, ցույց տուր թաթիկներդ:

*Անֆիսան ցույց է տալիս թաթիկները, բայց թաքցնում է ոտքերը:*

**Դաստիարակչուհի** – Դե լավ, ոչինչ: Վե՛րա, տուր ինձ քո մկրատը: Ծուտով կվերադարձնեմ: Հիմա ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես պետք է աշխատենք: Կտրել պետք է ա՛յ այսպես: (*Ցույց է տալիս: Երեխաները օձիքներ ու գլխարկներ են ձևում*): Եթե կտրենք այսպես՝ շրջանագծով, կստանանք գլխարկ: Եթե կտրենք այսպես՝ կիսալուսնի ձևով, կունենանք օձիք: Հասկացա՞ք: Վե՛րա, վերցրո՛ւ քո մկրատը: Իմ մկրատը հո չի՞ մնացել սավանիդ արանքում, Անֆի՛սա: (*Հետ է տալիս սավանը: Սավանն ամբողջովին կտրտված է: Անֆիսայի թաթերի մեջ երևում է մկրատը*): Օգնեցե՛ք: Պետական սավանն է փչացրել այս անխիղճը: Անմիջապես նորոգել է պետք: (*Բարձրանում է տեղից: Ծրջազգեստը նույնպես կտրտված է*): Ընդմիջում, երեխաներ: Ինձ էլ պետք է նորոգել:

### **Վարագույր**

*Դարձյալ մանկապարտեզի նախասրահը:*

**Հայրիկ** – Ինչպե՞ս է պահել իրեն Վերան:

**Դաստիարակչուհի** – Ծատ լավ:

**Հայրիկ** – Իսկ ինչպե՞ս է պահել իրեն Անֆիսկան:

**Դաստիարակչուհի** – Ահավո՛ր: Ճոճվել է ջահի վրա:  
Բոլորիս վրա ատամի փոշի է ցանել: Քիչ էր  
մնացել՝ խեղդվի լողավազանում: Կտրատել,  
փչացրել է պետական սավանը:

**Հայրիկ** – Ուրեմն՝ մանկապարտեզ չե՞ք ընդունի:

**Երեխաներ** – Կընդունենք:

**Դաստիարակչուհի** – Կընդունենք: Միայն թե  
տեղեկանք է պետք պոլիկլինիկայից: Դա  
պարտադիր է:

**Հայրիկ** – Որ Անֆիսկան ճոճվել է ջահի վրա՝ հա-  
վատում եմ: Որ փոշի է ցանել բոլորիդ  
վրա՝ հավատում եմ: Հնարավոր է: Բայց  
որ այդպիսի շրջանակներ է կտրել, չեմ հա-  
վատում: Վա՛յ, սա ի՞նչ բան է: *(Վերցնում  
է գլխարկը, գլխարկի փոխարեն մնացել է մի  
շրջանակ):*

**Հայրիկ** – *(Երգում է).*

Թե հարցնեք՝ որն է, որը  
Մանկան համար կարևորը՝  
Վիտամի՞նը, թե՞ խաղողը,  
Տիկնի՞կը, թե՞ ականջօղը,  
Ծլդի՞կը, թե՞ ձկնիկները...  
Ես ձեզ կասեմ՝ ընկերները:  
Թե հարցնեք՝ ո՞րն է, որը  
Մանկան համար կարևորը՝  
Ծիլա՞ն, ճա՞շը, ընթրի՞քը,  
Անդրծովյան խաղալի՞քը,  
Պարսատի՞կը, ավտոմա՞տը,  
Կոշիկնե՞րը, թե՞ տաբատը:

**Վերա** – Կարելի՞ է ասեմ որը՝  
Ընկերնե՛րն են կարևորը:

**Հայրիկ** – Թե հարցնեք՝ ո՞րն է, որը  
Մանկան համար կարևորը՝  
Թիթեռնի՞կը, թե՞ շնիկը,  
Փիսի՞կը, թե՞ տուն-տունիկը...

**Վարագույր**

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

*Թե ինչպես Վերայի և Անֆիսայի մեղքով հրդեհ  
առաջացավ*

*Հայրիկը՝ վարագույրի դիմաց*

**Հայրիկ** – Քանի դեռ Անֆիսան բժշկական տեղեկանք  
չուներ, նրան մանկապարտեզ չէին թողնում,  
և նա մնում էր տանը: Նրա հետ տանն էր  
մնում նաև Վերան:

**Վարագույրը բացվում է:**

*Բեմում են տատիկը, Վերան է և Անֆիսան: Տատիկն  
ու Անֆիսան պտտում են պարանը, իսկ Վերան ցատ-  
կոտում է:*

**Հայրիկ** – Մայրիկը միշտ էլ ասում էր, որ երեխանե-  
րին չի կարելի թողնել առանց հսկողության,  
մանավանդ, երբ տանը լուցկի կա: Մի օր  
Տատիկը քնել էր, իսկ Վերան գտել էր լուց-  
կին ու ծխախոտը:

**Վերա** – Անֆիսա, սիգարետներ եմ գտել, արի ծխենք...

**Հայրիկ** – Այն ժամանակ Վերան դեռ լավ չէր խո-  
սում և շատ էր ուզում Անֆիսային ծխախոտ  
հյուրասիրել: Անֆիսան վերցրել էր ծխա-  
խոտները, դրել բերանը ու... կերել, իսկ  
լուցկին խոթել էր թշի տակ: Լուցկին թրջվել  
էր, իսկ թրջված լուցկով ոչ մի հրդեհ չէր  
բռնկվի:

**Վերա** – Անֆիսկա, արի հերուստացույց նայենք:

*Հեռուստացույցը բեմի անկյունում է՝ թիկունքով դե-  
պի դահլիճը:*

**Հայրիկ** – Վերան ու Անֆիսկան ինչ դիտում էին հեռուստացույցով, այն էլ ցուցադրում ու կրկնում էին ամբողջ օրը: Եթե դիտում էին «Այսօր աշխարհում» հաղորդումը, ապա քայլում էին ցուցապաստառներով ու կարգախոսներով՝ թափահարելով բարձի երեսներն ու սրբիչները: Իսկ հիմա ի՞նչ են ցուցադրում, որ Վերան ու Անֆիսկան պարում են զույգով: Ճիշտ է՝ գեղարվեստական չմշկապար: Վերան հարվածում է գնդակին, իսկ Անֆիսկան որսում է գնդակը, ուրեմն՝ ֆուտբոլ է: Վերան ավել-հրացանով կրակում է Անֆիսկային, իսկ Անֆիսկան ձեռքերը վեր տնկած գնում է հանձնվելու: Նշանակում է՝ Շտիրլիցի մասին ֆիլմն են դիտել: Վերան ու Անֆիսկան պարում են փոքրիկ կարապների պարը: Ուրեմն՝ հաղորդումը Մեծ թատրոնից է. ցուցադրվում է «Կարապի լիճը» բալետը: Իսկ հետո սկսեցին ցուցադրել «Թաքցրեք երեխաներից լուցկիները» հաղորդումը:

**Վերա** – Իսկ ո՞ր են մեր լուցկիները: Մել լուցկիները թլջվել են: Պետք է չոլացնել:

**Հայրիկ** – Վերան միացնում է արդուկը: Արդուկը տաքանում և սկսում է ծուխ արձակել: Ծխից արթնանում է տատիկը:

**Տատիկ** – Հրդեհը հեռուստացույցի մեջ է, իսկ ծուխը այստեղ ենք շնչում: Ուրեմն՝ հեռուստացույցով ոչ միայն գույներ են հաղորդում, այլև՝ բույրեր ու հոտեր: *(Նորից է քնում):*

**Հայրիկ** – Իսկ կրակն աստիճանաբար ուժեղանում է:

**Տատիկ** *(Նորից է արթնանում)* – Տե՛ս, հա՛, ջերմություն էլ են կարողանում հաղորդել հեռուստատեսությամբ:

**Հայրիկ** – Վերան որոշում է հանգցնել կրակը և

բաժակով ջուր է լցնում արդուկի վրա:

Անֆիսան էլ իր հերթին ջուր է լցնում տատիկի վրա:

**Տատիկ** – Օգնեցե՛ք: Վառվում եմք, խեղդվում եմք: Ի՞նչ անեմ ես հիմա: Վերային փաթաթեմ վերմակով, Անֆիսային տեղավորեմ սառնարանի մեջ: Այդտեղ զով կլինի նրա համար: *(Վերցնում է հեռախոսափողը)* Ալո՛: Հայրի՛կ:

**Հայրիկ** *(Հեռախոսափողով)* – Ես եմ:

**Տատիկ** – Գիտե՞ս ինչ, մեզ մոտ մի քիչ այրվում է: Միայն թե չվախենա:

**Հայրիկ** – Ի՞նչ է վառվում:

**Տատիկ** – Դու մի վախենա: Պարզապես մի քիչ այրվում է:

**Հայրիկ** – Այդ ինչ է, որ մի քիչ է այրվում:

**Տատիկ** – Չեմ տեսնում, թե ինչ է վառվում:

**Հայրիկ** – Ինչո՞ւ չես տեսնում:

**Տատիկ** – Որովհետև կորել եմք ծխի մեջ:

**Հայրիկ** – Երեխաներին անմիջապես դուրս բեր փողոց:

**Տատիկ** – Հնարավոր չէ, որովհետև Անֆիսան նստած է սառնարանում:

**Հայրիկ** – Դուրս բեր հերթով: Նախ՝ Վերային, հետո էլ՝ Անֆիսային: Իսկ ես հիմա կզանգահարեմ հրշեջ կայան: *(Դահլիճին)* Ես զանգահարեցի 1-01, և հրշեջներն անմիջապես հասան:

*Հրշեջը, փողրակը ձեռքին, ասես մթության մեջ խարխափելով, շարժվում է սենյակում: Նրա գլխին սաղավարտ կա, դեմքին՝ հակազագ:*

**Հրշեջ** – Հե՛յ, ո՞վ է այստեղ: *(Խոսում է բարձրախոսով):* Կապիտան, այստեղ ոչ ոք չկա:

**Անֆիսա** *(Դուրս է եկել սառնարանից, տեսել է հրշեջին)*

ու բարձրացրել է ձեռքերը) – Ու-ալ, ու-ալ, ու-  
ալ... Վա՛յ, վա՛յ, վա՛յ:

**Հրշեջ** (*Նույնպես վախեցած*) – Օգնեցե՛ք: Կապիտա՛ն,  
կապիտա՛ն: Մեկը երևաց: Ոչ այն է՝ կատու  
է, ոչ այն է՝ սատանա: Լսում եմ, կապիտա՛ն:  
Ես նրան կփրկեմ: (*Գնում է դեպի Անֆիսան*):  
Ջո՛ւ-ջո՛ւ-ջո՛ւ: Քուռի՛-քուռի՛-քուռի՛: Փշա՛-  
փշա՛-փշա՛: Չարի՛ գաս, չա՛ր սատանա:  
(*Բռնում է կապիկին ու ջահի հետ դուրս տանում  
սենյակից*):

**Հայրիկ** – Բոլորս էլ երախտագիտություն ենք հայտ-  
նում ձեզ (*հրշեջին*): Ծատ շնորհակալ եմ, որ  
փրկեցիք Վերային:

**Վերա** – Ծատ շնորհակալ եմ, որ փրկեցիք Ան-  
ֆիսային:

**Տատիկ** – Ծնորհակալ եմ, որ փրկեցիք ջահը:

#### **Վարագույր**

**Հայրիկ** – Հաջորդ օրը տատիկը հայտարարեց.  
«Տարեք այստեղից այդ զգվելի պոչավորին,  
այսինքն՝ Անֆիսային: Նա, ի վերջո, կամ  
ջրհեղեղ կանի, կամ էլ հրի ճարակ կանի  
մեր տունը: Նրանից կարելի է երկրաշարժ էլ  
սպասել: Թող գնա մանկապարտեզ»: Այդ էր  
պատճառը, որ մենք գնացինք պոլիկլինիկա՝  
բժշկից տեղեկանք վերցնելու: Առանց այդ  
տեղեկանքի՝ երեխաներին մանկապարտեզ  
չեն ընդունում:

#### **Վարագույր**



# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ

## *Թե ինչպես Վերան ու Անֆիսան գնացին պոլիկլինիկա*

Պոլիկլինիկայի նախասրահը: Պատերին պլակատներ են՝ «Զգուշացե՛ք թունավոր սնկերից», «Ճաշելուց առաջ լվացվե՛ք օձառով»... Գերիշխողը սպիտակ գույնն է և մաքրությունը: Դռանը մոտ մեծ արմավենի կա: Ներս են մտնում հայրիկը, Վերան և Անֆիսան:

**Հայրիկ** – Երեխաներ, սա պոլիկլինիկա է: Այստեղ բուժում են հիվանդներին ու տեղեկանքներ են գրում առողջ մարդկանց համար: (*Մոտենում են հաշվառման պատուհանին*): Խնդրում եմ մեզ ուղարկել ստուգման: Որ բժշկի մո՞տ: Բոլոր բժիշկների: Անֆի՛սա, Անֆի՛սա, պլակատները մի՛ լպստիր: (*Պատուհանին*) Մեզ տեղեկանք է պետք մանկապարտեզի համար: Անֆի՛սա, Անֆի՛սա, դո՛ւրս արի աղբամանից: Վե՛րա, Վե՛րա, վերցրո՛ւ ավելը և ավլի՛ր Անֆիսային: (*Պատուհանին*) Շնորհակալություն:

**Վերա** (*Անֆիսային*) – Գնացի՛նք:

*Անֆիսան կառչել է արմավենուց:*

**Հայրիկ** – Անֆի՛սա, բաց թող արմավենին:

**Վերա** – Թո՛ղ:

**Հայրիկ** (*Բռնում է Անֆիսայի թաթը և ուզում է պոկել ծառից*) – Անֆի՛սա, բա՛ց թող արմավենին: Սա մեր ծառը չէ: Անֆի՛սա, բա՛ց թող հայրիկին:

*Անֆիսան ոչ մեկին էլ բաց չի թողնում և սկսում է*

*ծղրտալ:*

**Վերա** – Անֆի՛սա, բա՛ց թող հայրիկին: Անֆի՛սա, բա՛ց թող արմավենին: Մենք պիտի բժշկի մոտ գևանք:

**Բժիշկ** – Երեխանե՛ր, ի՞նչ է պատահել: Ո՞վ է այստեղ ծղրտում:

**Հայրիկ** – Անֆիսան է ծղրտում: Չենք կարողանում նրան պոկել արմավենուց:

**Բժիշկ** – Ա՛յ, ա՛յ, ա՛յ, կապիկ: Տե՛ս ինչ հայելի ունեմ: Վա՛յ, նա ինձ էլ բռնեց:

*Հիմա Անֆիսան երկու թաթով բռնել է հայրիկին ու բժշկին, երկու թաթով կառչել է արմավենուց: Հայտնվում է գլխավոր բժիշկը:*

**Հայրիկ** – Անֆի՛սկա, Անֆի՛սկա, բա՛ց թող հայրիկին, բա՛ց թող, խնդրում եմ:

**Գլխավոր բժիշկ** – Ի՞նչ է պատահել, ընկերներ: Ո՞ր եք քարշ տալիս արմավենին:

**Հայրիկ** – Մենք քարշ ենք տալիս ոչ թե արմավենին, այլ Անֆիսկային:

**Գլխավոր բժիշկ** – Ո՞ր եք ուզում տանել:

**Հայրիկ** – Ուզում ենք Անֆիսկային ազատել արմավենուց:

**Գլխավոր բժիշկ** – Այ-այ-այ, աղջիկ ջան, այսիքն՝ կապիկ ջան, կուզե՞ս՝ վիտամին տամ: *(Անֆիսան վերջին ազատ թաթով կառչում է գլխավոր բժշկի խալաթի քղանցքից):* Վա՛յ, վա՛յ, ինձ էլ բռնեց:

**Հայրիկ** – Անֆի,սա, Անֆի,սա, բա՛ց թող, խնդրում եմ, հայրիկին, բա,ց թող, խնդրում եմ, արմավենին, բաց թող, խնդրում եմ, գլխավոր բժշկին:

**Վերա** – Եկեք խուտուտ տանք սրան:

*Անֆիսային խուտուտ են տալիս: Սա բաց է թողնում բոլորին՝ բացի արմավենուց:*

**Գլխավոր բժիշկ** – Ի՞նչ արած, կստուգենք հենց այստեղ՝ արմավենու մոտ:

**Բժիշկ** – Նախ ստուգենք ձնշումը: Տարօրինակ է, ձնշում չունի:

**Գլխավոր բժիշկ** – Ո՞վ է տեսել, որ ծառը ձնշում ունենա: Մենք պիտի ստուգենք կապիկի ձնշումը: Սկսեք: Իսկ ես արյուն կվերցնեմ: Այսպես: Ծակեցիկը: Ա՛յ քեզ բան: Արյունը կանաչ է:

**Բժիշկ** – Դուք ոչ թե կապիկից, այլ արմավենուց եք արյուն վերցրել: Եվ, հետո, դա ոչ թե արյուն է, այլ արմավենու խեժ:

**Հայրիկ** – Անֆի՛սա, Անֆի՛սա, քո պատճառով ողջ պոլիկլինիկան է ոտքի ելել:

**Վերա** – Խայտառակություն:

**Գլխավոր բժիշկ** (*Լսելով Անֆիսային*) – Սիրտը կարգին է, թոքերը՝ ևույնպես: Հիմա տեսողությունը կստուգենք:

**Հայրիկ** – Արմավենու հե՞տ մտնենք կաբինետ:

**Բժիշկ** – Ո՛չ: Ո՛չ: Հենց այստեղ էլ կստուգենք: (*Բերում է աղյուսակը*):

**Գլխավոր բժիշկ** – Սա ի՞նչ տառ է:

**Անֆիսա** – Ու-ու-ու:

**Գլխավոր բժիշկ** – Ճիշտ չէ: Սա «Ա»-ն է՝ «Ա»: Իսկ սա՞ ինչ տառ է:

Անֆիսա, Ու-ու-ու:

**Գլխավոր բժիշկ** – Ճիշտ է՝ «Ու»: Իսկ սա՞:

**Անֆիսա** – Ու-ու-ու:

**Գլխավոր բժիշկ** – Չէ՛, չեղավ: Այսպես նրա տեսողությունը չենք կարող ստուգել: Նա ընդա-

մենը մի տառ է ճանաչում:

**Հայրիկ** – Կարող եք չկասկածել, որ նա անթերի տեսողություն ունի: Նա պատշգամբից, մեկ կիլոմետր հեռավորությունից, տեսնում է, թե որտեղ են բանան վաճառում:

**Գլխավոր բժիշկ** – Ուրեմն՝ մնաց ռենտգենը:

**Բժիշկ** – Ուրիշ ելք չկա: Ստիպված ենք արմավենու հետ միասին տանել ռենտգեն-կաբինետ: Դուք այստեղ սպասեք: *(Տանում է Անֆիսային՝ արմավենու հետ):*

**Հայրիկ** – Տեսնո՞ւմ ես, Վե՛րա, ինչքան հոգս է պատճառում մեզ Անֆիսան:

**Վերա** – Տեսնում եմ:

**Հայրիկ** – Կարծում ես՝ հնարավո՞ր է այս ամենին դիմանալ:

**Վերա** – Հնարավոր է:

**Բժիշկ** *(Դուրս վազելով կաբինետից)* – Օգնեցե՛ք: Երեխան բանալին կույ տվեց:

**Գլխավոր բժիշկ** *(Դուրս վազելով)* – Օգնեցե՛ք: Երեխան ալյումինե կտրոնը կույ տվեց:

**Հայրիկ** – Հանգստացե՛ք: Բանալին փորի մեջ չէ, այլ փորի վրա, թելից կախ: Եվ ոչ թե երեխայի վրա, այլ՝ կապիկի:

**Գլխավոր բժիշկ** – Իսկ ալյումինե կտրոնը:

**Հայրիկ** – Դա էլ արմավենու վրա է: Ինքս եմ տեսել:

**Գլխավոր բժիշկ** – Փա՛ռք Աստծու: Ուրեմն՝ ձեր կապիկն առողջ է: Վերցրեք նրան ու գնացեք՝ ուր ուզում եք:

**Հայրիկ** – Մենք չենք կարողանա գնալ՝ ուր ուզում ենք:

**Բժիշկ** – Ինչո՞ւ:

**Հայրիկ** – Որովհետև չենք կարողանում նրան պոկել արմավենուց:

**Գլխավոր բժիշկ** – Տարեք արմավենու հետ:

**Հայրիկ** – Արմավենու հետ էլ չենք կարողանա:

**Բժիշկ** – Ինչո՞ւ:

**Հայրիկ** – Չենք կարողանա բարձրացնել:

**Գլխավոր բժիշկ (Բժշկին)** – Լավ: Մեքենա և երկու սանիտար կանչեք սրանց համար: Տուն ճանապարհեք «շտապ օգնության» մեքենայով: Պա՞րզ է:

**Բժիշկ** – Պարզ է:

**Գլխավոր բժիշկ** – Ու հետևեք, որ այդ կապիկը սանիտարներին չբռնի, թե չէ ստիպված կլինենք հրաժարվել թե՛ սանիտարներից, թե՛ արմավենուց:

**Հայրիկ** – Երբ մենք տուն հասանք շտապ օգնության մեքենայով, մեր տատիկն անմիջապես վատացավ: Լավ է, որ սանիտարները մեզ հետ էին: Նրանք իսկույն ուշքի բերեցին տատիկին և հանդիսավորությամբ նրան նվիրեցին արմավենին՝ կապիկի հետ:

**Վարագույր**

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՅՈՒԵՐՈՐԴ

## *Թե ինչպես Վերան և Անֆիսան մասնակցեցին շաբաթօրյակին*

*Վարագույրի դիմաց հայրիկն է:*

**Հայրիկ** – Մեր մանկապարտեզն ապրում է նույն կյանքով, ինչ ամբողջ երկիրը: Երեխաներն այստեղ հանգստանում են, երգում, խաղում, սովորում և աշխատում: Մանկապարտեզում նույնպես կազմակերպվում են շաբաթօրյակներ՝ շրջապատը մաքրելու և կարգի բերելու համար:

*Բացվում է վարագույրը:*

**Դաստիարակչուհի** – Երեխանե՛ր, այսօր դժվար օր է բոլորիս համար՝, թե՛ ձեզ համար, թե՛ մեզ համար: Այսօր շաբաթօրյակ է... Այսինքն՝ աշխատանքային դաստիարակություն: Մենք պետք է մի տեղից մեկ այլ տեղ աղյուսներ տեղափոխենք: Դուք կկարողանա՞ք աղյուսներ տեղափոխել:

**Երեխաներ** – Այո:

**Դաստիարակչուհի** – Հրաշալի է: Ուրեմն դուք գիտեք, թե ինչ է հարկավոր դրա համար: Աղյուսը կարելի է տեղափոխել ձեռքով, կարելի է նաև փոխանցելով՝ ձեռքից ձեռք՝ կենդանի շղթայով: *(Երեխաներն այդ ամենը կատարում են):* Աղյուսները կարելի է տեղափոխել սայլակով, պատգարակով, պայուսակով: Է՛լ ինչով կարելի է տեղափոխել, ո՞վ կասի:

**Վերա** – Փոստով:

**Դաստիարակչուհի** – Կարելի է սայլակով, կարելի է պատգարակով: Հիմա մենք կփորձենք միասին: Վա՛յ: Իսկ ո՞ր են աղյուսները:

**Երեխաներ** – Տեղափոխեցինք: Ա՛յ այնտեղ՝ փոքրերի մոտ:

**Դաստիարակչուհի** – Դե լա՛վ, Անֆի՛սա, դու կլինես աղյուս: Մեզ համար դու կլինես ուսումնական պիտույք: Նստիր պատգարակին, իսկ Վերան և Դիման քեզ կտեղափոխեն: Հասկանալի՞ է:

*Վերան և Դիման մոտենում են պատգարակին: Նախ կանգնում են դեմ դիմաց, իսկ հետո՝ թիկունքով:*

**Դաստիարակչուհի** – Աղյուսնե՛ր, լսո՞ւմ եք, մի՛ ցատկոտեք պատգարակի վրա: Աղյուսնե՛ր, հանգիստ մնացեք: Աղյուսներ, ինչո՞ւ փախցրիք Դիմայի գլխարկը: Ամենևին էլ կարիք չկա ծառ բարձրանալ: Վե՛րջ: Սկսում ենք երկրորդ գործողությունը: Հիմա պետք է ներկենք ցանկապատը: Դրա համար վրձիևը պետք է բռնել աջ ձեռքով, իսկ ներկի բաժակը՝ ձախ ձեռքով: Բայց, քանի որ մենք ներկ չունենք, ներկի փոխարեն կօգտագործենք սովորական ջուր: Եվ, այսպես, ներկում ենք, վրձիևը շարժում ենք վեր-վար, վեր-վար: Անֆի՛սա, Անֆի՛սա, ինչո՞վ ես ներկում ցանկապատը:

**Վերա** – Ապուրով:

**Դիմա** – Կոմպոտով:

**Դաստիարակչուհի** – Խայտառակվեցինք: Ամբողջ մանկապարտեզը կմնա առանց կոմպոտի: Վա՛յ, իսկ սա՞ ինչ բան է: Ոնց որ թե մեղուներ են: Փրկվեցեք՝ ով կարող է: Չէ՛, չէ՛, կազմակերպված: Առանց խուճապի: Երեխանե՛ր, սկսում ենք

ուսումնամարմնամարզական պարապմունքը,  
թե ինչպես փրկվել մեղուներից: Մեղուներից  
փրկվելու լավագույն միջոցը ջրի մեջ սուզվելն  
է: Դեպի լողավազան՝ վազքով մա՛րշ:

*Փախչում են բոլորը՝ Վերայից ու Անֆիսայից բացի:  
Հայտնվում է հայրիկը:*

**Հայրիկ** – Ի՞նչ է կատարվում այստեղ:

**Վերա** – Մանկապարտեզի նորոգում: Շաբաթօրյակ:

**Հայրիկ** – Այսպիսի շաբաթօրյակից հետո պետք է  
նորոգողների մի բրիգադ հրավիրել ու կազ-  
մակերպել կիրակնօրյակ: Ո՞վ է մեղավոր  
այս ամենի համար:

**Վերա** – Ոչ ոք:

**Հայրիկ** – Ամեն ինչ պարզ է: Ուրեմն՝ Անֆիսայի  
գործերն են: Ստիպված ենք նրան հանձնել  
կենդանաբանական այգի:

*Վերան սկսում է լալ: Լալիս է նաև Անֆիսան: Գալիս  
է դաստիարակչուհին՝ երեխաների հետ:*

**Դաստիարակչուհի** – Պարապմունքը շարունակում  
ենք: Եթե մոտակայքում լողավազան չկա,  
մեղուներից փրկվելու հաջորդ միջոցը պա-  
հարանն է, բայց ոչ տրանսֆորմատորի  
խցիկը: (Նկատում է արտասվող Վերային):  
Վե՛րա, ինչո՞ւ ես լալիս, հո մեղուն քեզ  
չի՞կծել:

**Վերա** – Չէ՛, չի՛ կծել:

**Դաստիարակչուհի** – Կոմպո՞տն ես ափսոսում:

**Վերա** – Հայրիկս ուզում է Անֆիսկային հանձնել  
կենդանաբանական այգի:

**Դաստիարակչուհի** – Լսեցի՞ք, երեխաներ: Իսկ  
մենք ի՞նչ կարծիքի ենք:

*Երեխաները սկսում են բարձրաձայն լալ:*



**Դաստիարակչուհի (Հայրիկին)** – Հիմա հասկանալի՞ է:

**Հայրիկ** – Հասկանալի է:

**Դաստիարակչուհի** – Անֆիսային կենդանաբանական այգի՞: Ո՛չ մի դեպքում: Միայն մեզ հետ: Երեխաներ, դուք ուզո՞ւմ եք ապրել կենդանաբանական այգում կոկորդիլոսների ու վիշապների կողքին:

**Երեխաներ** – Ուզում ենք, ուզում ենք:

**Դաստիարակչուհի** – Դա շատ լավ է: Հրաշալի է: Բայց կենդանաբանական այգի ընկնելու համար մենք պետք է մեզ շատ օրինակելի պահենք: Կարողանանք լվանալ հատակը, հավաքել անկողիները, լվանալ գդալներն ու գավաթները: Սկսում ենք հատակը լվանալու ուսումնական պարապմունքը: Վե՛րա, բեր փալասը: Անֆի՛սա, ինչո՞վ ես լվանում հատակը: Այդ ի՞նչ ես բռնել ձեռքիդ: Դա մեր վարիչի շալն է: Երեխանե՛ր, գործի: Չէ՛, մենք Անֆիսայից երբեք չենք բաժանվի:

*Բոլորը երգում են.*

Անուններ կան աննման՝  
Գեղեցիկ, բարի.  
Անֆիսա, Անֆիսա, Անֆիսա:  
Շատ սիրելի են նրանք  
Ամբողջ աշխարհին.  
Անֆիսա, Անֆիսա, Անֆիսա:

**Կրկներգ**

Գեղեցիկ է Անֆիսան,  
Խոշոր բերանով:  
Մանուկներն են անընդհատ  
Հրձվում նրանով:  
Երբ հայտնվում է, իր հետ  
Հրձվանք է բերում,

Անֆի՛սա, Անֆի՛սա, Անֆի՛սա:  
Մեծիև, փոքրիև, ամենքիև  
Թովում է, գերում,  
Անֆի՛սա, Անֆի՛սա, Անֆի՛սա:  
Նա սիրելիև է բոլորի,  
Եվ ամենազվարճալիև՝  
Ուրախանալ քեզ կստիպի  
Ու ժպտալ, երբ կամենաս:  
Անֆի՛սա, Անֆի՛սա, Անֆի՛սա:

### Կրկներգ

**Հայրիկ** – Եվ ինձ համար պարզ դարձավ, սիրելի՛  
երեխաներ, որ Անֆիսային ոչ մի աքցանով մեր  
քաղաքից դուրս չես անի: Եվ եթե հանդիպեք  
Նրան մեր քաղաքում, եղեք բարեհաճ ու  
ժպտացեք անպայման: *(Երգում է)*.


Անուններ կան աննման  
Գեղեցիկ, բարի.  
Անֆի՛սա, Անֆի՛սա, Անֆի՛սա:  
Շատ սիրելի են Նրանք  
Ամբողջ աշխարհին.  
Անֆի՛սա, Անֆի՛սա, Անֆի՛սա...

### Վերջ



**Իրինա Տոկմակովա**  
*(Իրինա-Արուսյակ Մանուկովա)*  
 (ծն. 03.03.1929)

Հայազգի ռուս մանկագիր, թարգմանիչ, մանկական և պատանեկան գրականության ասպարեզում Ռուսաստանի պետական մրցանակի դափնեկիր: Մանկական բանաստեղծությունների իր առաջին ժողովածուն՝ «Ծառերը», անմիջապես գրավել է ընթերցողին: Գրել է նաև վիպակներ, պատմվածքներ ու պիեսներ՝ «Գուցե զրոն մեղավոր չի», «Եվ կգա ուրախ առավոտը», «Ժենկա բվիկը», «Կախարդված սմբակը», «Ռոստիկը և Կեշան» և այլն:




**Դավիդ Սամոյլով**  
 (01.06.1920 – 23.02.1990)

Ռուս գրող, թարգմանիչ: 1941 թ. թողնելով ուսումը Մոսկվայի փիլիսոփայության, գրականության և պատմության ինստիտուտից մեկնել է ռազմաձակատ: Սկսել է տպագրվել նույն թվականից: Հայտնի ժողովածուներից են՝ «Բանաստեղծություններ նոր քաղաքի մասին», «Օրերը», «Ալիքն ու քարը»:

**Ռադա Մոսկովա Ստեֆանովա**  
 (ծն. 03.05.1960, Գաբրովո)

Բժշկական համալսարանն ավարտելուց հետո սկսում է աշխատել որպես թատերագիր մի շարք

մանկական և տիկնիկային թատրոններում: Հեղինակ է բազմաթիվ պիեսների և գրքերի, որոնցից են՝ «Թիթեռ», «Բարև, տատիկ», «Զրույց թռչունների հետ», «Տիկնի Դինոզավրը» և այլն:



**Վաղդիմիր Օշին**  
(08.09.1930 – 25.11.1999)

Ռուս մանկագիր, թատերագիր: Գրող դառնալուց առաջ հասցրել է աշխատել որպես նավաստի, ատաղձագործ, դերձակ: Մոտ հիսուն գրքի հեղինակ է: Հայտնի ստեղծագործություններից են՝ «Առավոտյան գնացք», «Երբ միասին ենք», «Գոձին նեղանում է»: Գրել է քսանից ավելի պիես տիկնիկային թատրոնների համար:

**Էդուարդ Ուսպենսկի**  
(ծն. 22.12.1937)

Ռուս գրող, սցենարիստ, մանկագիր: Մոսկվայի ավիացիոնինստիտուտնավարտելուց և ձարտարագետի դիպլոմ ստանալուց հետո սկսել է իր ապրուստը հոգալ մուլտֆիլմների սցենարներ գրելով: Նրա ամենահայտնի հերոսներից են Կոկորդիլոս Գենան ու Չերուրաշկան, քեռի Ֆեդդորն ու փոստատար Պեչկինը:

**Վաղդիմիր ԼիՖշից**  
(05.11.1913 – 09.10.1978)

Ռուս գրող, բանաստեղծ, թատերագիր: Ավարտել է

Լենինգրադի տնտեսագիտական ինստիտուտը: Սկսել է տպագրվել 1934-ից: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Կնոջ՝ Իրինա Կիչանովայի հետ միասին են գրել է «Աքլորիկները Կատարստանից», «Անտառում բարի կենդանիներ կգտնվեն» պիեսների ժողովածուները:





